HAL open science

[redacted]

Aram Sargsyan, Suren Sargsyan, Yuri Hovakanyan, Mareta Nikoghosyan, Sofya Ohanyan, Arpine Malkjyan

To cite this version:

Aram Sargsyan, Suren Sargsyan, Yuri Hovakanyan, Mareta Nikoghosyan, Sofya Ohanyan, et al.. [redacted]. 10, 2014, AMBERD Series, 978-9939-61-087-0. ⟨hal-03318726v3⟩

HAL Id: hal-03318726

https://hal.science/hal-03318726v3

Submitted on 17 Oct 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Autorisation HAL

HAL Authorization

«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 10

Հետազոտական խմբի ղեկավար՝
ԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆ
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հետազոտական խմբի անդամներ՝
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
ՅՈՒ. ՀՈՎԱԿԱՆՅԱՆ
Մ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Ս. ՕՀԱՆՅԱՆ
Ա. ՄԱԼՔՋՅԱՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 68
Հ 240

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
Միրզոյան Վ. Ա.
փ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝ **Հայրապետյան Ս. Գ.**
փ.գ.թ., դոցենտ
Մարգարյան Ս. Բ.
փ.գ.թ.

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ 240 **ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները**/ Սարգսյան Ա. և ուրիշ.- Եր.: Տնտեսագետ, 2014. – 88 էջ.-(«Ամբերդ» մատենաշար):

Մենագրությունում քննարկվում են ՀՀ ազգային անվտանգության կարևորագույն ոլորտի՝ հոգևոր-բարոյական անվտանգության աշխարհայացքային, գաղափարախոսական, արժեքային, մշակութային բաղադրիչների, այդ ոլորտում կրթագիտական հաստատությունների, մտավորականության, հասարակական-քաղաքական կառույցների, հայոց եկեղեցու ծավալած գործունեության, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական և գլոբալացվող աշխարհում ազգային ինքնության պահպանման հետ կապված հիմնախնդիրները:

Մենագրությունը կարող է հարուստ նյութ տալ «Ազգային անվտանգության հիմունքներ» դասընթացի կամ դասագրքի պատրաստման համար և օգտակար լինել ուսանողներին, ասպիրանտներին, ուսուցիչներին և դասախոսներին, բոլոր նրանց, ովքեր մտահոգված են հայ ժողովրդի ներկայով և ապագայով:

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 68

ISBN 978-9939-61-087-0

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... **5**

Գլուխ 1. ***Հոգևոր-բարոյական արժեքների տեղն ու դերը ազգային անվտանգության համակարգում (տեսական և մեթոդաբանական հարցեր)***

1.1. Հոգևոր-բարոյական անվտանգության աշխարհայացքային և գաղափարախոսական հիմքերը..... 8

1.2. Հոգևոր-բարոյական արժեքների տեղն ու դերը ազգային անվտանգության համակարգում 16

1.3. Մշակույթը՝ որպես ազգային ինքնության պահպանման և հասարակության հոգևոր միասնության ապահովման գործոն 23

Գլուխ 2. ***Ազգային կառույցների հոգևոր-բարոյական և մշակութային ինքնատիպության վերարտադրության գործառույթները (գործնական խնդիրներ)***

2.1. Կրթագիտական հաստատությունները և մտավորականությունը հոգևոր-բարոյական անվտանգության ապահովման համատեքստում ... 29

2.2. Հասարակական-քաղաքական կառույցների հոգևոր-բարոյական գործառույթները 35

2.3. Հայ եկեղեցու և կրոնական այլ հարանվանությունների գաղափարախոսության և գործունեության գնահատումը ազգային անվտանգության դիտանկյունից..... 43

Գլուխ 3. ***Ազգային հոգևոր-բարոյական և մշակութային անվտանգության հիմնախնդիրները ՀՀ տեղեկատվական տարածքում (կիրառական խնդիրներ)***

3.1. Հոգևոր-բարոյական անվտանգության ձևավորման տեղեկատվական բաղադրիչները 51

3.2. Տեղեկատվական մշակույթի դերը մարդ-անհատի հոգևոր-բարոյական անվտանգության ձևավորման գործում 57

3.3. Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները գլոբալացվող աշխարհի տեղեկատվական գործընթացների համատեքստում 67

Եզրակացություններ և առաջարկություններ..... **71**

Օգտագործված գրականության ցանկ..... **79**

Ամփոփումներ **82**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանում ձևավորվեց նոր հասարակություն՝ առանց հստակ և ընդհանրական արժեհամակարգի: Նորանկախ Հայաստանի իշխանությունները, զբաղված լինելով պետականության ստեղծման դժվարին գործով, պայքարելով երկու ճակատով՝ պատերազմ Արցախում և ներքին փլուզում, կարծեք, անտեսեցին համազգային արժեքների, մարդկանց հուսադրող, համախմբող, ազգը մեկ բռունցք դարձնող գաղափարների, համազգային ծրագրի ստեղծման լրջագույն գործը:

Մինչդեռ երկիրը ներքին և արտաքին մարտահրավերներին դիմագրավում է, ամենից առաջ, ազգի բարոյական և հոգևոր միասնությամբ, համազգային և համահասարակական այնպիսի գաղափարների ներդրմամբ և իրականացմամբ, որոնք միավորում են հասարակության պառակտված շերտերը: Որքան վաղ շրջանառվեն և ամրագրվեն նման գաղափարներ, այնքան լավ, որովհետև գործընթացների խորացումը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ. մեր շատ կորուստներ հոգևոր-բարոյական բնույթի են:

ՀՀ ներքին խնդիրների մեջ կարևորագույն են դառնում արժեքային-աշխարհայացքային այնպիսի հիմնադրույթների մշակումը, պետական-քաղաքական-հասարակական ինստիտուտների, հատկապես՝ իշխանությունների այնպիսի գործունեության ծավալումը, որոնք կապահովեն ազգի հոգևոր-բարոյական միասնությունը և, հետևաբար, անվտանգությունը, որը ազգային անվտանգության բոլոր ձևերի հիմքերի հիմքն է: Պառակտված, ոգեզուրկ, անելիքը չիմացող հասարակությամբ համազգային կարևորության խնդիրներ չես լուծի, չես կարողանա ստեղծել հզոր պետություն, բարգավաճող, շեն ու զարգացող երկիր ու հայրենիք:

Այս ամենը հրատապ է դարձնում ազգային անվտանգության և դրա կարևորագույն բաղադրիչ հոգևոր-բարոյական անվտանգությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը: Ազգային անվտանգության խնդիրները գիտատեսական ուսումնասիրության առարկա են դարձել XX դարի երկրորդ կեսից, թեև խնդրակարգի առանձին հասկացությունների պարզաբանումն ավելի հին պատմություն ունի[1]: Բավական հետաքրքիր ուսումնասիրություններ, ուսումնական ձեռնարկներ են հրատարկվել Ռուսաստանի Դաշնությունում[2]: Մեզանում այս ուղղությամբ շնորհակալ գործ է կատարում «Նորա-

---

[1] Այդ մասին տե՛ս ***Վ. Արթոյան***, Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ //21-րդ դար, թիվ 2, 2013:

[2] Տե՛ս, օրինակ, ***Логунов А.*** Региональная и национальная безопасность. Учебное пособие, М., 2011, ***Варфоломеев А. А.*** Основы информационной безопасности. Учебное пособие, М., 2008, Учебно-методический комплекс по курсу “Национальная безопасность Россиской Федерации”, М., 2004, Основы национальной безопасности. М., 2008:

վանք» գիտակրթական հիմնադրամը, որը վերջին տասը տարիների ընթացքում ընթերցողին է ներկայացրել մի շարք արժեքավոր գործեր և հաշվետվություններ ազգային անվտանգության և դրա առանձին բաղադրիչների վերաբերյալ[3]:

Կատարվել են նաև գործնական քայլեր: Մասնավորապես՝ ստեղծվել են ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, մշակվել և հրատարակվել են «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը» (2006), «ՀՀ ռազմական դոկտրինը» (2007) և այլն: Ըստ որոշ տվյալների՝ մեր հանրապետությունում գործում է «ուղեղային կենտրոն» հիշեցնող 13 կառույց[4]:

Այնուամենայնիվ, դեռևս բազմակողմանի ուսումնասիրության կարոտ են այնպիսի հարցեր, ինչպիսիք են հոգևոր-բարոյական անվտանգության աշխարհայացքային և գաղափարախոսական, արժեքային և մշակութային, այդ ոլորտում կրթագիտական հաստատությունների, մտավորականության, հասարակական-քաղաքական կառույցների և հայ եկեղեցու գործառույթները, անվտանգության ձևավորման տեղեկատվական առանձնահատկությունները, գլոբալացվող աշխարհում ազգային ինքնության պահպանման խնդիրները և այլն: Բացը լրացնելու փորձ է ընթերցողին ներկայացվող սույն կոլեկտիվ մենագրությունը:

Կարծում ենք, որ ազգային անվտանգության ողջ հայեցակարգը պետք է կառուցել ***հայրենասիրության*** հիմքի վրա: Անվտանգության ոչ մի ձև իրականություն չի դառնա, եթե նրա հիմքում դրված չէ իրական և գործնական հայրենասիրությունը, որը ենթադրում է նաև գիտակցված և սրտացավ մոտեցում այն ամենին, ինչը կապվում է հայրենիքի հետ: Ուստի, հայրենիքն ու հայրենասիրությունը պետք է դառնան այն հարացույցը (պարադիգման), որի շուրջ կհամախմբվեն հասարակության բոլոր շերտերը, սեռատարիքային խմբերը:

---

[3] Տե՛ս, օրինակ, ***Ա. Աղայան***, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, «Նորավանք», Եր., 2002, ***Ա. Թադևոսյան***, Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, «Նորավանք», Եր., 2002, ***Ա. Մարկոսյան***, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «Նորավանք», Եր., 2005, ***Մ. Շահգելդյան***, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք», Եր., 2002, ***Մ. Մաֆարյան***, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները (թեմայի հաշվետվություն), «Նորավանք», Եր., 2002, ***Մ. Գաբրիելյան, Ա. Դարաղյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան***, Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք», Եր., 2002, Իդեոլոգեմները Հայաստանի տեղեկատվական տարածքում, Եր., 2013, О некоторых проблемах информационной безопасности. “Нораванк”, 2009 և այլն:

[4] Տե՛ս ***Գ. Հարությունյան,*** «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը // 21-րդ դար, 2011, N 1, էջ 5-17, ***Վ. Աթոյան,*** «Ուղեղային կենտրոն». անցյալ, ներկա և ապագա // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2013, N 1, էջ 104-117:

Թվարկված խնդիրները, ՀՀ-ի և հայության դեմ ուղղված մարտահրավերները (ներքին և արտաքին վտանգավոր գործընթացները) հաշվի առնելով՝ հետազոտական խումբն առաջնորդվել է փոխլրացման մեթոդաբանական մոտեցմամբ, որը ենթադրում է երկու կողմ: Առաջինը քննադատականն է, երբ անաչառորեն ներկայացվում են Հայաստանում ստեղծված հոգևոր-բարոյական մթնոլորտը, դրա պատճառները, իսկ երկրորդը դրական-կառուցողականն է, որտեղ տրվում է դրական շարադրանք, հիմնավորվում են առաջարկություններ, որ կարող են նպաստել վիճակի բարելավմանը: Փոխլրացման սկզբունքով է շարադրված ողջ աշխատանքը, որն առայժմ ներկայացվում է որպես ուրվագիծ՝ ամբողջական մենագրության վերածելու նպատակով:

Տեսական վերլուծություններն ամրագրվել են սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով, որոնց մի մասը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Պողոսյանի ղեկավարությամբ Հայկական սոցիոլոգիական ընկերակցության հարցումների, մյուսը՝ Ազգային վիճակագրական ծառայության, մնացածը՝ միջազգային զանազան կազմակերպությունների հետազոտական խմբերի հարցումների արդյունքներն են, որոնք տպագրվել են մամուլում կամ հնչել հեռուստատեսությամբ: Առանձին խումբ են ՀՊՏՀ ուսանողության միջավայրում կատարած հարցումները, որ իրականացրել են փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Օհանյանը և ավագ լաբորանտ Արփինե Մալքջյանը:

Որպես ուրվագիծ՝ սույն շարադրանքում առանձին հիմնադրույթներ ներկայացվում են հարցադրումների, այլ ոչ թե մանրամասն վերլուծությունների ձևով (ինչը կարվի հետագայում):

ԳԼՈՒԽ 1

ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ)

1.1 Հոգևոր-բարոյական անվտանգության աշխարհայացքային և գաղափարական հիմքերը

Մեր հասարակությունն ու պետությունն այսօր կանգնած են լուրջ մարտահրավերների առաջ, վտանգված է ազգային անվտանգությունն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ոլորտներում: Դրանց պատճառները հետևյալն է.

Առաջին՝ հանրապետությունը պատերազմական իրավիճակում է. առկա փխրուն խաղաղությունը կարող է խախտվել ցանկացած պահի:

Երկրորդ՝ հանրապետությունը տնտեսական շրջափակման մեջ է:

Երրորդ՝ անընդհատ խորացող սոցիալական բևեռացումը, գործազրկությունը, աղքատությունը պատճառ են դարձել «խուճապ» հիշեցնող արտագաղթի:

Չորրորդ՝ վաղվա օրվա հանդեպ վստահության պակասի, ցածր աշխատավարձի, սոցիալական անպաշտպանվածության պատճառով դիտվում է ծնելիության կտրուկ անկում, հասարակությունն արագորեն ծերանում է:

Հինգերորդ՝ խորհրդային հասարակության փլուզումը հետխորհրդային հասարակություններում առաջացրեց աշխարհայացքային և հոգևոր-բարոյական արժեքների սուր ճգնաժամ, չարդարացավ այն համոզվածությունը, թե իբր շուկան ամեն ինչ կդնի իր տեղը և կկանոնավորի մարդկային հարաբերությունները, նաև բարոյահոգեբանական ոլորտում: Հակառակը, շուկան, իր հերթին, ծնունդ տվեց մի շարք նոր անցանկալի երևույթների՝ տնտեսական կյանքի քրեականացման, հասարակական կյանքից անհատների օտարման ու ինքնաօտարման, բարոյահոգեբանական մթնոլորտի ախտահարման՝ պատճառ դառնալով բարոյականության ձևախեղման, մարդկային հարաբերությունների գռեհկացման. հարբեցողություն, թմրամոլություն, խաղամոլություն, մարմնավաճառություն, հանցագործությունների կտրուկ աճ, երեխաների տարաբնույթ շահագործում, ավանդական ընտանեկան հարաբերությունների քայքայում և այլն: Եթե ավելացնենք, որ հետխորհրդային հասարակություններում մտավորականությունը դուրս մղվեց հասարակական կյանքից, դադարեց Իդեալ և Ուսուցիչ լինելուց, ապա ամբողջական կդառնա

գործոնների այն համախումբը, որոնք հարվածում են պետության հիմքերին և ազգային անվտանգությանը:

Ազգային անվտանգության բազմաթիվ սահմանումներ գոյություն ունեն[5]:

Մեր կարծիքով ազգային անվտանգությունը պետական-քաղաքական և հասարակական հատկությունների՝ ազգի կենսակերպի պահպանմանը, վերարտադրությանը և զարգացմանը, երկրի ինքնությանն ու հզորությանը միտված ռազմավարական և մարտավարական ծրագրերի իրականացումն է և դրանց խոչընդոտող ներքին ու արտաքին գործոնների չեզոքացումը:

Գոյություն ունեն ազգային անվտանգության ***«օբյեկտ»*** և ***«սուբյեկտ»*** հասկացությունները: Անվտանգության հիմնական օբյեկտն են անձը (նրա ազատություններն ու իրավունքները), հասարակությունը (նրա նյութական և հոգևոր արժեքները), պետությունը (սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը), որոնք ենթակա են վտանգների, սպառնալիքների, մարտահրավերների:

Անվտանգության սուբյեկտը պետությունն է, որը պարտավոր է պաշտպանել հասարակությունը, ապահովել երկրի ինքնիշխանությունն ու ինքնուրույնությունը: Սուբյեկտի մեջ մտնում են նաև բանակը, Ազգային անվտանգության ծառայությունը, ֆինանսական հաստատությունները, ոստիկանությունը, դատական համակարգը, դպրոցը և այլն, ինչպես նաև ոչ պետական ազգային հաստատությունները՝ եկեղեցին, արհմիությունները, մամուլը, հասարակական կազմակերպությունները, ընտանիքի ինստիտուտը, ինքնակազմակերպված խմբերը՝ ի դեմս կուսակցությունների, ստեղծագործական միությունների, առանձին անհատների և այլն (Ա. Աղայանն առանձնացնում է նույնիսկ կլանային և հանցագործ խմբերը[6]):

Հոգևոր-բարոյական անվտանգության օբյեկտն են անհատը, սոցիալական խմբերը, ստեղծված արժեքները, մշակույթը, իսկ սուբյեկտը՝ ընտանիքը, դպրոցը, մտավորականությունը, պետությունը: Հասարակության ներսում ձևախեղումների հետևանքով օբյեկտը և սուբյեկտը կարող են տեղերը փոխել, ինչպես կփորձենք ցույց տալ ստորև:

---

[5] Տե՛ս, օրինակ, Վ. Աթոյան, Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ //21-րդ դար, թիվ 2, 2013, էջ 87, ինչպես նաև www.sns.am/index.php/am/nss-today/legislation/61-law-on-security-bodies, ***Ա. Աղայան,*** Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, էջ 8, ***Մ. Շահգելդյան,*** Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, էջ 3, ***Ա. Մարկոսյան***, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, էջ 25, ***Ëîõóíîâ À.***, Ðåãèîíàëüíàÿ è íàöèîíàëüíàÿ áåçîïàñíîñòü. Ó÷åáíîå ïîñîáèå, էջ 15:

[6] ***Ա. Աղայան***, Ազգային անվտանգություն: Հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, էջ 18:

Տեսական կամ գործնական ցանկացած խնդրի լուծում ենթադրում է որոշակի միտվածության առաջատար հայացքների, գաղափարների ամբողջություն և դրանց լուծման մեթոդաբանություն, որն անվանվում է «հայեցակարգ»: Հայեցակարգն առարկայի, երևույթի, գործընթացի քննության, ուսումնասիրության որոշակի եղանակ է, դրանց համակարգային յուրացումն ուղղորդող գաղափար:

Ազգային անվտանգության հայեցակարգը ռազմավարական և մարտավարական հայացքների, գաղափարների, ծրագրերի ամբողջությունն է և դրանց իրականացման մեթոդաբանությունը:

Հոգևոր-բարոյական անվտանգությունը պետական-քաղաքական, հասարակական հաստատությունների՝ ազգի ստեղծագործական (հոգեմտավոր), ակտիվության (ներուժի), արժեհամակարգի, մշակութային ինքնատիպության պահպանման, վերարտադրության և զարգացման ապահովումն է հայրենիքում (հնարավորինս՝ նաև սփյուռքում) և դրանց խոչընդոտող ներքին ու արտաքին գործոնների չեզոքացումը:

Հոգևոր-բարոյական անվտանգության հայեցակարգը ազգի հոգեմտավոր ներուժի, արժեհամակարգի, մշակութային ինքնատիպությանը վերաբերող հասկացությունների, գաղափարների ամբողջությունն է և դրանց կենսագործման մեթոդաբանությունը:

Քանի որ հոգևոր-բարոյական անվտանգության հարացույցը հայրենասիրությունն է, իսկ այն աշխարհայացքային, գաղափարախոսական, արժեքային և մշակութային կատեգորիա է, ուստի խիստ համառոտ անդրադառնանք այդ բաղադրիչներից յուրաքանչյուրին:

Աշխարհայացքը երբեմն համարում են ***մարդու ինքնագիտակցության հասարակական ձև, աշխարհի հոգևոր-պրակտիկ յուրացում:*** Որպես այդպիսին՝ մեզանից յուրաքանչյուրի ***աշխարհայացքը հայացքների համակարգ է աշխարհի, նրանում մեր տեղի ու դերի մասին, և այդ հայացքների հիման վրա ձևավորված վերաբերմունք աշխարհի նկատմամբ:*** Աշխարհայացքը ձևավորվում է գիտելիքի, գնահատման, հուզական ապրումի եռամիասնությունից: Այս տարրերի հենքի վրա էլ առանձնացվում են աշխարհայացքի լավատեսական, հոռետեսական և իրատեսական ձևերը: Ազգային առումով առանձնացնում են ազգային լավատեսությունը, հոռետեսությունը, իրատեսությունը: Ո՞րն է իշխողը: Պատասխանը հստակեցնելու համար հարցը քննարկենք որոշակի դիտանկյուններից: Պատմականորեն իշխողը, կարծեք, ազգային լավատեսությունն է: Դեռևս Դավիթ Անհաղթից է գալիս այն տեսակետը, ըստ որի՝ թեև կյանքի կոնկրետ դրսևորումներում կարող է հաղթել չարը, բայց ապագան բարունն է: Այդ լավատեսությունը բնազդով սերնդից սերունդ փոխանցվել է և հասել մեզ: Անտեսելով անցած ձախողություններն ու ազգային ողբերգությունները, հույսներս աստծո վրա դնելով, «աստված

արդար է» ասելով՝ ապրել և ապրում ենք այն հավատով, որ հայ ազգն այս աշխարհում հատուկ առաքելություն ունի, ու հանուն այդ առաքելության կատարվելու են նրա ազգային իղձերն ու երազանքները, կառուցվելու է ազատ, անկախ, հզոր Հայաստան իր պատմական հայրենիքում (ընօրրանում)։ Ընթացիկ կամ իրավիճակային աշխարհայացքի ինչպիսին լինելը պայմանավորված է մի քանի հանգամանքով, մասնավորապես՝ ինչպիսին է անհատի զբաղեցրած տեղը և դերը հասարակության մեջ և, դրանով պայմանավորված, նրա սոցիալ-հոգեբանական-բարոյական վիճակը, հասարակության կառուցվածքի մասին ունեցած պատկերացումների (տեսլականի) և իրականում գոյություն ունեցողի համապատասխանության աստիճանը և այլն։

Ազգային գաղափարախոսությունը ազգային գոյության հիմնախնդիրների գիտակցումն է, դրանց տեսական իմաստավորումը, որը դառնում է համազգային գործունեության ծրագիր և որոշակի նպատակամիտվածություն հաղորդում ինչպես ողջ ազգի, այնպես էլ նրա անդամների բացարձակ մեծամասնության կյանքին և գործունեությանը։

Ազգային գաղափարախոսությունն ազգի ինքնագիտակցության տեսությունն է։ Ազգային ինքնագիտակցությունը ներառում է.

ա) ազգի բոլոր անդամների միասնական ծագման ըմբռնումը,
բ) նվիրվածությունը ազգային արժեքներին՝ լեզվին, հայրենիքին, մշակույթին, դավանանքին, ավանդույթներին, հիշատակներին,
գ) ազգի բոլոր անդամների համախմբումը հայրենիքի պաշտպանության և պետականակերտման գաղափարի շուրջ։

Ազգային գաղափարախոսության քննարկման կարևորագույն խնդիրներն են.

ա) ազգի պատմական անցյալի ճանաչումը (ի՞նչ ենք եղել նախկինում),
բ) ազգի առկա կեցության իմաստավորումը (ի՞նչ ենք դարձել),
գ) ազգի պատմական հեռանկարի ուրվագծում (ո՞րն է ազգի գոյության նպատակը),
դ) նպատակին հասնելու միջոցների ընտրությունը։

Թվարկած առաջին երեք հարցադրումները վերաբերում են ազգի ինքնաճանաչողության խնդրին։ Ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք որպես ազգ, որտեղի՞ց ենք եկել և ո՞ւր ենք գնում…. Այս հարցադրումների պատասխանն իմանալը հույժ կարևոր է, որովհետև, ինչպես Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հերոսն է ասում. «…. Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի ըլլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ»[7]։ Աբովյանական

[7] ***Խ. Աբովյան***, Վերք Հայաստանի, Երկեր, Եր., 1984, էջ 34։

այս հարցադրումը հետագայում զարգացնում է Հ. Թումանյանը, ով հաճախակի անդրադառնալով ազգային ինքնաճանաչման խնդրին՝ ցավով արձանագրում է. «Չգիտենք մենք ի՞նչ ենք եղել, ի՞նչ ենք արել, ինչո՞ւ և ինչպես, ի՞նչ օրով, ի՞նչ ճանապարհով ենք էստեղ հասել»[8]: Շարունակելով դաժան քննադատությունը՝ բարի ու իմաստուն Թումանյանը նշում է. «…. հայ ժողովուրդը…. չգիտի թե ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում»[9]: Թումանյանը նույնպես փորձում է հասկանալ, թե «…. ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ւր որոնենք էդ ոգին»[10]: Գարեգին Նժդեհի կարծիքով՝ մեր դժբախտությունների ակն ու աղբյուրը սեփական ժողովրդի պատմությունը չիմանալն է և, հետևաբար, նրանից օգտվել չկարողանալը: Նա գրում է. «Արդարև, առանց ցեղային ինքնաճանաչումի անկարելի է զերծ մնալ սեփական ուժերը ստորագնահատելու, ինչպես եւ գերագնահատելու աղէտալի սխալանք էն», «Այո՛, ժողովուրդների անզօրութեան եւ դժբախտութեան ամենաներգործօն պատճառը՝ իր սեփական էութեան մասին ունեցած տգիտանքն են, անինքնաճանաչողութիւնը – իմա՝ անցեղաճանաչութիւնը»[11]: Բարձրացված հարցերի պատասխաններն իմանալն անհրաժեշտ է, որովհետև, ինչպես XIX դարի հայ մտածող Մ. Մամուրյանն է նկատում, «իր անցյալից, ներկայից անտեղյակ ու նպատակը չիմացող ազգը նման է երկոտանի անբանների դասակի»[12]:

Եվ այսպես, խիստ համառոտ (որովհետև հարցը տարողունակ է և մանրամասն ու համակողմանի վերլուծության կարիք ունի) քննարկենք, թե որն է մեր ազգի ոգին և պատմական առաքելությունը: Ա. Նալչաջյանի կարծիքով. ***«Ազգի (էթնոսի) ոգին նրա հոգեբանական կերտվածքի հուզական դրսևորումն է՝ կայուն տրամադրության, հոգեվիճակի ձևով»[13]:***

Կարծում ենք՝ «ոգի» ասելով չպետք է հասկանալ միայն «հոգեբանական կերտվածքի հուզական դրսևորումը» կամ «հոգեվիճակը», այլև ազգի հոգևոր-բարոյական կերպը, ինքնությունը, որը դրսևորվում է որոշակի արժեհամակարգում, գործունեության մեջ, վարքագծում և մշակույթում: Իսկ ինքնությունը նշանակում է. «….ինքզինք ըլլալ, այսինքն՝ ան մեր անձնականութիւնն է… մեր անհատականութիւնը…. մեր «Է»-ն է, իբր գոյութեան եւ գործունէութեան սկզբունք…»[14]:

---

[8] Նույն տեղում, էջ 174:
[9] *Հ. Թումանյան*, Հայոց պատմություն, ԵԼԺ տասը հատորով, հ. վեցերորդ, Եր., 1994, էջ 355:
[10] *Հ. Թումանյան*, Հայի ոգին, նույն տեղում, էջ 194, 195:
[11] *Գարեգին Նժդեհ*, Ցեղային արթնութիւն, Հատընտիր, Եր., 2006, էջ 491:
[12] *Մ. Մամուրյան*, Երկեր, Եր., 1966 , էջ 108:
[13] *Ա. Նալչաջյան*, Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 252:
[14] *Հ. Լևոն Զէքիան*, Ինքնութեան խճանկար, Պէյրութ, 2002, էջ 109:

Փորձելով ներկայացնել մեր ազգի հոգևոր-բարոյական կերպարը, նկարագիրը (այն, ինչով առանձնանում է, աչքի ընկնում) ընդհանուր գնահատականների ձևով՝ ականատես ենք դառնում շատ խայտաբղետ, նույնիսկ հակասական պատկերի՝ ամենադրական, հիացական բնութագրություններից մինչև ամենաբացասական արժևորումները:

Հայն իր բնավորության և վարքագծի հակասականության պատճառով չի կարող արտահայտել ազգի ընդհանրական ոգին, հոգևոր-բարոյական կերպը: Ոգին և կերպը չեն կարող արտահայտել նաև հայրենիքը, որը պատմական դեպքերի բերումով մեկ ընդլայնվել է, մեկ՝ սեղմվել, իսկ այսօր մնացել է պատմական հայրենիքի 1/10 մասը: Այդ ոգին չի կարող արտահայտել նաև պետությունը, որովհետև պատմական շատ քիչ ժամանակահատվածներում ենք ունեցել պետություն, ունենալիս էլ գինը չենք իմացել:

Հաճախ այն տեսակետն է հայտնվում, որ մեր ճշմարիտ էությունն արտահայտում է հայ եկեղեցու դավանած քրիստոնեությունը: Սրա հետ կապված՝ նշենք միայն հետևյալը.

ա) Քրիստոնեությունը ստեղծվել է օտար վայրում, օտար միջավայրում, մեզ պարտադրվել է և մեր էության արտացոլումը լինել չէր կարող: Հակառակը, կտրել է մեզ մեր նախածին հոգևոր-բարոյական կերպարից:

բ) Եթե դարերի ընթացքում (գաղափարախոսական, վարչական իշխանության, ծիսապաշտամունքային պրակտիկայի և ստեղծած մշակույթի միջոցով) ունեցած ազդեցության և ներգործության հետևանքով հայի կերպարի մեջ, այնուամենայնիվ, իշխող է դարձել մեր եկեղեցու դավանած ու քարոզած քրիստոնեությունը, ապա դա հայի ոչ թե ճշմարիտ, այլ սնող ակունքից կտրված կերպարն է (որովհետև հայ եկեղեցին չորացրել է մեր նախաքրիստոնեական սնուցող հարազատ ակունքը):

Հետևաբար, մնում է միայն մշակույթը (որի պահպանման գործում մեծ դեր է կատարել հայ եկեղեցին): Մեր ստեղծած մշակույթն է դարձել հայի ոգու, հոգևոր-բարոյական կերպարի, հայի ինքնության արտահայտիչը: Մեզանում «էթնիկական» և «մշակութային ինքնություն» հասկացությունները նույնացվել են, որի մասին կխոսվի այս գլխի երրորդ պարագրաֆում:

Այժմ անդրադառնանք ազգային ընդհանրական նպատակի կամ առաքելության խնդրին և դարձյալ սկսենք XIX դարից:

Դեռևս այդ դարից սկսած՝ հայ մտածողները նշել են հայի բնավորության բացասական գծերից մեկի՝ անմիաբանության մասին[15], թվարկել դրա

[15] Տե՛ս, օրինակ, ***Յ. Պ. Պօղոսեան,*** Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958, էջ 80, ***Գ. Արծրունի,*** Տաճկահայերի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս, 1882, էջ 17, ***Լ. Զորմիսեան,*** Կուսակ-

ձևավորման բազմաթիվ պատճառներ, բայց և անմիջապես ավելացրել, որ ազգը սիրով ու միաբանությամբ կաշխատի, «երբ որ իրեն առջեւը նպատակ մը, վախճան մը ունի, եւ անոր հասնելու կ'աշխատին մէջի ամեն մեկ անձինքը»[16], ուստի «…. մեր ազգին առաջին մեծ կարօտութիւնը եւ ուրիշ ամենայն կարօտութիւններուն աղբիւրը հասարակաց վախճան մը, նպատակ մը չունենալն է»[17]:

Իրոք, ազգային ընդհանրական նպատակի կամ առաքելության բացակայությունն է ազգին զրկում միասնությունից, ազգային խնդիրների մեջ մեկ միասնական միտք ունենալուց, հանուն մեկ միասնական գաղափարի հայրենիքում մնալու, նույնիսկ զրկանքների գնով հայրենիքը շենացնելու գիտակցումից: Եվ այսպես, ո՞րն է հայ ազգի գոյության նպատակը, պատմական առաքելությունը: XIX դարի շատ մտածողներ այն տեսակետին էին, որ հայ ժողովրդի պատմական առաքելությունը երկու քաղաքակրթությունների՝ Արևմուտքի և Արևելքի միջև միջնորդ լինելն է: Ըստ հայ (նաև մի քանի օտար) մտածողների՝ Հայաստանն է եղել այն կամուրջը, կապող օղակը, որով արևմտյան մշակույթը փոխանցվել է Արևելք, իսկ փոխանցողները եղել են հայերը: Այժմ, կարծում ենք, այդ առաքելությունն այլևս գործուն չէ, աշխարհը շատ է փոքրացել, և եթե Արևելքը շատ ցանկանա, առանց մեզ էլ կհաղորդակցվի Արևմուտքի հետ:

Առաքելության ավելի որոշակի խնդիրներ են առաջադրում XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ մտավորականները, որոնց կարծիքով՝ ազգի գոյության նպատակների մեջ են (թվարկումները ներկայացվում են, որովհետև դրանք էական են նաև այսօր).

ա) ազգի տնտեսական վիճակի բարելավումը (տնտեսական առաջադիմությունը),
բ) ազգի մտավոր և բարոյական վիճակի բարելավումը (բարոյական առաջադիմությունը),
գ) գաղթականության դադարեցումը (հայությունը հայրենիքում պահելը),
դ) ազգի քաղաքական վիճակի բարելավումը (անկախ պետականության ստեղծումը), մեր պարագայում՝ ամրապնդումը, անվտանգության երաշխավորումը:

Թվարկված խնդիրները վերաբերում են պետության մարտավարությանը և ճիշտ, ուղղորդված քաղաքականության դեպքում հաջողության հույս կարելի է ակնկալել:

ցութիւններ, Եր., 1995, էջ 131, ***Գ. Այվազովսքի***, Մեր ազգին կարօտութիւններ // Մասեաց աղաւնի, 1861, թիվ 1, էջ 6 և այլն:

[16] ***Գ. Այվազովսքի***, Մեր ազգին կարօտութիւններ // Մասեաց աղաւնի, 1861, թիվ 1, էջ 7:

[17] Նույն տեղում, էջ 7:

Կարծում ենք՝ հայ ազգի պատմական առաքելության մեջ պետք է առանձնացնել լուծման ենթակա խնդիրների երկու խումբ՝ արտաքին և ներքին: Արտաքինը վերաբերում է հայոց պահանջատիրության արդարացի լուծմանը (Հայկական հարց, հայրենատիրում, Արցախի խնդրի վերջնական լուծում և այլն): Առաքելության ներքին խնդիրներից կարևորագույնը հայի հոգևոր-բարոյական և արժեքային-մշակութային ինքնատիպությունը զանազան շերտանստվածքներից զտելն է (անաղարտ վիճակին վերադառնալը), պահպանելը, վերարտադրելը, զարգացնելը և աշխարհին ներկայանալը որպես առաքինի ու մշակութաստեղծ ազգ: Ինչպես Ա. Աղայանն է գրում. «Ազգային գոյության նպատակը կամ առաքելությունը հայկական հոգևոր-մշակութային ինքնատիպության և արժեքային համակարգի պահպանմամբ և զարգացմամբ աշխարհը հարստացնելն է»[18]:

Արդեն նշվեց, որ ազգային առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ է մեկ միասնական միտք և նպատակ՝ հանուն ազգային խնդիրների լուծման: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր հայ պետք է գիտենա, թե որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը պետք է հային հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական, գործնական սիրով: Դրա համար անհրաժեշտ է (փորձենք պատասխանել դարձյալ մեր մեծերի օգնությամբ).

ա) Մաքրվել բարոյապես, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ «մենք և՛ մեր սրտում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը», որին կհետևի «ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը: Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»[19]:

բ) Քանի որ ազգի հոգևոր կառույցի հիմքն ազգային բարոյականն է, ուստի պիտի դառնանք այդպիսին, որպեսզի որպես ազգ չկորչենք[20]:

գ) Ազգին այնպիսի գաղափարներով տոգորել, որ բերեն խոր հավատ, լավատեսություն, «անսպառ կորով, ոգու լիութիւն, միութեան ծարավ», որով կվերակառուցվի քայքայիչ ուժերից պառակտված ազգը[21]:

---

[18] ***Ա. Աղայան***, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, էջ 77:

[19] ***Հ. Թումանյան***, Դառնացած ժողովուրդ ենք // ԵԼԺ տասը հատորով, հ. վեցերորդ, էջ 225:

[20] Տե՛ս ***Գ. Նժդեհ***, Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, Հատընտիր, էջ 651:

[21] ***Գ. Նժդեհ***, Մեծ գաղափար, նույն տեղում, էջ 636:

դ) Առաջնորդել այն մտայնությամբ, որ ճակատագրի եղբայր է ամեն հայ: Ավելին՝ ամեն հայ հենց դու ես. ահա՛ ազգային բարոյականի անխախտ օրենքը[22]:

Ամփոփելով մեծերի խորհուրդների այս ընդհանուր տրամաբանությունը՝ ավելացնենք. ամեն մեկն իր տեղում, իր գործում պետք է անի առավելագույնը, ապրի երկրում՝ սիրելով և ոչ թե զզվելով, չնույնացնի օրվա իշխանավորին պետականության և հայրենիքի հետ, աշխատի ու պայքարի այնպես, որ ռաբիսն ու զոռբայությունը նահանջեն, արդարությունը վերականգնվի, մարդն աշխատանք ունենա ու կարողանա իր աշխատանքով ընտանիք պահել, ապահով զգալ իր երկրում, ունենա վաղվա օրվա հավատ, երկիրը հայրենիք դարձնի, հեռացածներն էլ կամենան վերադառնալ:

Ընդունելի չէ իրեն հայրենասեր համարողի այն վարքագիծը, երբ ամեն պատեհ առիթով փորձում է լքել հայրենիքը և արդարացնել սեփական քայլը: Իսկական հայրենասերը հայրենիքում մնալու հազարումեկ փաստարկ պետք է գտնի: Եվ եթե բոլորս մնայինք հայրենիքում ու բռունցքվեինք մեկ գաղափարի շուրջ, ինչե՞ր չէինք անի: Այս իմաստով ըմբռնված ազգային գաղափարախոսությունն ազգային անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է:

1.2 Հոգևոր-բարոյական արժեքների տեղն ու դերը ազգային անվտանգության համակարգում

Լայն ըմբռնմամբ՝ արժեքն աշխարհի անհատականորեն գունավորված ընկալումն է, որն առաջանում է տեղեկատվության, գիտելիքի և սեփական կենսափորձի հիման վրա[23]: Արժեքը ցանկացած երևույթի, առարկայի, օբյեկտի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության սուբյեկտիվ նշանակությունն է մարդու համար: Լայն ըմբռնմամբ՝ արժեքը վերաբերմունք է, գնահատական, որ կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական:

Նեղ ըմբռնմամբ՝ արժեքն իրի, առարկայի, երևույթի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության դրական նշանակությունն է մարդու համար: Այս իմաստով՝ ***արժեքը կենսականորեն կարևորն է, նշանակալիցը, որը հուզական և իմաստային գնահատման է ենթարկվում սուբյեկտի (անհատ, խումբ, հասարակություն, ազգ) կողմից և ուղղորդում նրա գոր-***

[22] Տե՛ս *Գ. Նժդեհ*, Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, նույն տեղում, էջ 651:

[23] Տե՛ս *Ãóõåäàè÷ Ï. Ñ.* Ôèëîñîôèÿ êóëüòóðû. Ì. 1995, էջ 120: Արժեքների լայն ըմբռնման սահմանումների մասին տես նաև *Մ. Գաբրիելյան, Ա. Դաբաղյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան,* Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, էջ 7, Իդեոլոգեմները Հայաստանի տեղեկատվական տարածքում, էջ 7-10, Մշակութաբանություն, Եր., 2007, էջ 34:

ծունեությունը որոշակի չափանիշների (իդեալի, նշանակության) տեսանկյունից:

Եթե արժեքն այն ամենն է, ինչը դրական նշանակություն ունի մարդու համար, ապա հակարժեքը բացասական նշանակություն ունեցողն է:

Այս ուսումնասիրության մեջ խոսքը լինելու է միայն արժեքի նեղ ըմբռնման մասին:

Արժեհամակարգը որոշակի անհատի կամ հանրույթի հոգևոր-բարոյական, գաղափարական-աշխարհայացքային պատկերացումների ընդհանրացված գումարն է (summa), որը դառնում է անհատի, հանրույթի հոգեկերտվածքի բնութագիր:

Արժեքի գնահատման չափանիշը իդեալն է: Իդեալը կատարելատիպն է, կատարելությունը, մարդկային ձգտումների բարձրագույն նպատակը: Իդեալն ու արժեքը հարաբերակից են. ինչպիսին անհատի, ազգի, հասարակության իդեալներն են, այնպիսին էլ արժեքներն են: Իդեալն է դառնում արժեքի գնահատման ցուցիչ:

Արժեքների դասակարգման հիմքում դրվում են տարբեր չափանիշներ: Երբ հիմքում դրվում է մարդկանց պահանջմունքների բավարարումը, արժեքները դասակարգվում են նյութականի և հոգևորի: Արժեքների դասակարգման համար հաճախ հիմք է ընդունվում հասարակական կեցության և հասարակական գիտակցության փոխհարաբերությունը: Կեցության բարձրագույն արժեքը մարդն է ու նրա կյանքը: Հոգևոր գործունեության մակարդակում արժեքները դասակարգվում են գեղագիտականի, կրոնականի, բարոյականի, փիլիսոփայականի:

Ըստ կայունության աստիճանի՝ առանձնացվում են անանց և անցողիկ արժեքներ: Անանց արժեքները մնայուն են, փոխանցվում են սերնդից սերունդ: Անցողիկ արժեքները պայմանավորված են ժամանակաշրջանի իշխող սոցիալ-հոգեբանական գործոններով: Մնայուն արժեքները երբեմն անվանում են համամարդկային, որոնցից են կյանքը, արժանապատվությունը, սերը, գեղեցիկը, բարին: Համամարդկային և անձնային բարձրագույն արժեքներից են նաև արդարը, հավատը, հույսը, սերը:

Դասակարգման հիմքում դնելով անհատին՝ առանձնացվում են անձնային և վերանձնային արժեքներ:

Հանրույթի ներսում ընդհանրության աստիճանը հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել արժեքների անհատական, խմբային, համազգային, հասարակական ձևերը:

Եթե անհատական և խմբային արժեքները չեն համապատասխանում համազգայինին և համահասարակականին, ապա նեղանում են արժեքների ազդեցության ոլորտները և հանգեցնում ազգի պառակտմանը: Ազգի առանձին հատվածներին միավորում, միասնություն ու հոգևոր ընդհանրություն են ապահովում համազգային արժեքները:

Արժեքը նաև տնտեսագիտական կատեգորիա է, ընդ որում՝ տնտեսագետների կարծիքով՝ իրենց ոլորտին պատկանող այս կատեգորիան ամենափիլիսոփայականն է: Էական տարբերություններ գոյություն ունեն արժեքի տնտեսագիտական և մշակութափիլիսոփայական ըմբռնումների միջև: Տնտեսագիտության մեջ արժեքը մարդկանց պահանջմունքները բավարարող ապրանքների (բարիքների) գնահատականն է, որը ձևավորվում է փոխանակության ընթացքում: Գնահատականը ստանում է դրամական արտահայտություն և ամրագրվում փողով: Փողը (որոշակի գինը) դառնում է արժեքի չափման միավոր: Գնի մեջ արտահայտվում է ապրանքի (բարիքի) օգտակարության հատկանիշը: Հետևաբար, արժեք է համարվում այն ապրանքը, առարկան, որն ունի օգտակարության հատկանիշ և մարդու պահանջմունքների բավարարման միջոց է: Այդպես չէ մշակույթի և փիլիսոփայության մեջ: Այստեղ արժեք կարող են լինել այնպիսի առարկաներ, որոնք օգտակարության որևէ հատկանիշ չունեն: Մշակույթում արժեքի գնահատման միավորը ոչ թե օգտակարությունն է, այլ թանկն ու հարազատը: Հոգևոր-բարոյական արժեքները գին չունեն: Սերը՝ սիրածդ աղջկա, հարգանքը մեծի նկատմամբ, նվիրվածությունը ազգային ու համամարդկային գաղափարներին, հայրենասիրությունը գին չունեն, դրամական արտահայտման ենթակա չեն: Գին կարող է ունենալ միայն արժեքի նյութական կրողը (արվեստի ստեղծագործությունը, օրինակ՝ որևէ կտավ, քանդակ), բայց ոչ արժեքը: Իսկ արժեքները ոչ թե գնի, այլ գնահատման, արժեքավորման են ենթակա:

Արժեքային համակարգն ազգային ու մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության ամենակարևոր բաղադրիչն է: Արժեհամակարգը ձևավորող ոլորտներն են ընտանիքը, գիտակրթական, մշակութային հաստատությունները, պետական, քաղաքական ինստիտուտները, ԶԼՄ-ները, ազգային պատմության և ավանդույթների յուրացումն ու իմաստավորումը: Երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը (դեռևս սոփեստներից եկող մոտեցում), արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Բարոյականությունը մարդկային հարաբերությունների ոչ կենսաբանական, մշակութանորմատիվային կարգավորումն է: Բարոյականությունը կանոնների համախմբություն է, որը սահմանում է մարդկանց վարքագիծը, փոխհարաբերությունը հասարակական կարծիքի և ավանդույթների հիման վրա:

Բարոյականությունը պարտքի գիտակցումն է, իսկ պարտքի հիմքում, ըստ Կանտի, ընկած է սեփական կատարելության և ուրիշին երջանիկ դարձնելու ձգտումը: Բարոյականության ուժն ազատ ընտրության մեջ է, որտեղ չկա ազատ և գիտակցված ընտրություն, չկա նաև բարոյականություն, և արարքը, որքան էլ լավը լինի, դուրս է բարոյական գնահատումից:

Բարոյական արժեքներից կարևորվում են ավանդական արժեքները՝ բարին, արդարը, պատիվը, պարտքը, արժանապատվությունը, խիղճը: Առանձնացվում են նաև միջանձնային բարոյական արժեքները, որոնցից են սերը, բարեկամությունը:

Բարոյականության մեջ բարձրագույն արժեք եղել և մնում է մարդը, նրա կյանքի իմաստը և երջանկությունը: Բարոյական որոշ արժեքներ ներկայացնենք ընտրողաբար և շատ համառոտ[24].

1. Պարտք, պատիվ, արժանապատվություն: Պարտքը սեփական բարոյական պատասխանատվության գիտակցումն է: Բարոյագիտական տեսություններում իշխել է այն տեսակետը, թե առաքինի է նա, ով առաջնորդվում է պարտքով, որովհետև բարոյականությունը պայմանավորված է պարտքի կատարման աստիճանով: Պարտքի գիտությունը (դեոնթոլոգիա) հանդես է գալիս որպես ընդհանուր բարոյական օրենք, որը Քրիստոսի մոտ ձևակերպվում է որպես «ոսկե օրենք» (ըստ որի՝ «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արե՛ք նրանց»), իսկ Կանտի մոտ՝ կատեգորիկ իմպերատիվ: Հետագայում Գարեգին Նժդեհը, զարգացնելով կանտյան կատեգորիկ իմպերատիվը, ձևակերպեց իր վարքականոնը, ըստ որի՝ պետք է ապրել այնպես, որ կարողանաս դիմացինիդ ասել. «Վարվի՛ր՝ ինչպես ես»:

Եթե պարտքը պարտականությունների կատարման պահանջն է, ապա պատիվը մարդու ծառայությունների հանրային ընդունումն է, գործունեության ոլորտում հասած հաջողությունների գնահատումը: Պատիվը նաև մյուսների կողմից մարդու արժանապատվության ընդունումն է, նրա ծառայությունների գնահատումը: Արժանապատվությունը սեփական արժեքի հանդեպ ներքին վստահությունն է, ինքնահարգանքի արտահայտությունը:

Արժանապատվությունը սեփական բարոյական կոչմանը համապատասխան ապրելն է, այն ցուցիչն է (նշաձողը), որից ներքև իջնել չի կարելի: Արժանապատիվ մարդը ցանկացած հարաբերության մեջ, իրավիճակում չի կորցնում մարդկային նկարագիրը, արժանապատիվ կեցվածքը: «Ցանկացած իրավիճակում ապրի՛ր բարոյական նկարագրիդ համապատասխան». ահա՛ արժանապատիվ մարդու կարգախոսը:

---

[24] Ավելի մանրամասն տե՛ս ***Ա. Սարգսյան***, Հումանիզմի փիլիսոփայություն, Եր., 2012, էջ 95-96, 103-118, 120-138:

Արժանապատվությունը և պատիվը սերտորեն կապված են: Պատիվը սեփական սոցիալական արժեքի գիտակցումն է, համապատասխան վարքագծի ընտրությունը, իսկ արժանապատվությունը սեփական արժեքի գիտակցումն է և ինքնահարգանքը՝ անկախ հանգամանքներից: Պատիվը պահպանվում է արժանապատվությամբ: Հիշենք Կանտի խոսքը. «Առուծախի առարկա չդառնալ երբեք»: Չդառնալ հացկատակ և շողոքորթ, չհանդուրժել սեփական իրավունքների ոտնահարում, չկքել («վիզ չծռել») ոչ մեկի, նույնիսկ աստծո առջև: Արժանապատվության խնդրում բարոյականությունը և իրավունքը հատվում են. արժանապատվությունը բարոյական արժեք է, որ պահպանվում է նաև իրավունքով:

Որքան կարևոր է արժանապատվություն ձեռք բերելը, նույնքան և՝ պահպանելը: Իհարկե, բոլորը չէ, որ կարողանում են: Այստեղից էլ արժանապատվության շեմից վար արարքներ, որ դիտվում են այսօր՝ զանգվածային արտագաղթ, կանանց արտագնա աշխատանք, մարմնավաճառություն, միմյանց «գցելը», խաբելով «գործ կպցնելը», համոզմունքն ու հավատը հանուն փողի, պաշտոնի վաճառելը և այլն:

Անշուշտ, դժվար է արժանապատվություն պահելը, պահողներն արժանապատիվ մարդիկ են: Ուստի, հասարակությունն ու իշխանությունն այնպիսի պայմաններ պետք է ապահովեն, որ մարդը հարկադրված չլինի իր արժանապատվության հետ գործարքի մեջ մտնելու: Չպետք է մարդուն բարոյապես ոչնչացնել: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է մշակել մարդու սոցիալական պաշտպանվածության մեխանիզմներ:

Արժանապատվության բարձրագույն դրսևորումն ազնվազարմությունն է: Ազնվազարմությունը մարդու բարոյական վեհությունն է, որը հենց պիտի լինի բարոյականության, օրինակելիության, կատարելության, մտավորականության, հարգալից կյանքով ապրելու բարձրագույն չափանիշը (էտալոնը):

2. Հայրենասիրություն: Հայրենասիրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Նժդեհը, մարդկային առաքինությունների թագն ու պսակն է:

Հայրենիքը նախնիների համատեղ պատմական պրակտիկայի վայրն է, նրանց արյամբ պահպանված (նահատակների թափած արյունով շաղախված հողն է հայրենիքը, գրում է Նժդեհը) և սերունդներին որպես անօտարելի ժառանգություն թողած բնօրրանն է, որտեղ ձևավորվել են ազգային ավանդույթները, սովորույթները, հիշատակները:

Հայրենիքում ապրելը, անկախ գոյության կերպից (հարուստ, թե աղքատ, պաշտոնյա, թե սովորական գյուղացի, մտավորական, թե բանվոր, ուսանող և այլն), ազգասիրության մեծ խթան ու սնող երակ է: Հայրենասիրությունը հայրենիքում մնալն է, նրա շենացման համար զօրուգիշեր պայքարելը, առանց ամպագոռգոռ ճառերի, խոսքերի, լուռ՝ իր գործին նվիրված ու գործը կատարող:

Հայրենիքում ապրելը, հայրենիքը շեն պահելն ամենամեծ ազգասիրությունն է, որովհետև. «Այն հողը կկոխեին, ուր որ իրենց նախնիքն ալ կոխեր և վերջը ծածկվել էին, այն հովանիներուն տակ կաշխատեր երկրագործը, որն որ իր սիրելի նախորդներուն ալ եղած էր, այն եկեղեցյաց մեջ կաղոթեին, որ իրենց մեծ հայրերուն բարեպաշտությունը կանգներ էր, և այն գերեզմաններուն մեջ կքնանային, որն որ իրենց նահապետները փորեր էին»[25]:

Դրսից հայրենիք «սիրելը» հեշտ է: Նման հայրենասիրությունը Նժդեհն անվանում է «ստահայրենասիրություն»: Հայրենասիրությունը երբեք չպետք է լինի սոսկ գեղեցիկ խոսք, մի բան, որի պակասը հայ ժողովուրդը երբեք չի զգացել: Մեկը կռվել է, տասնյակները, լսածը տեսած ներկայացնելով, անուն են վաստակել: Նժդեհը ցավով, բայց ճիշտ է նկատում, թե մեր ժողովրդի զգալի մասի հայրենասիրությունն աղքատիկ է, անպտուղ, անզոհաբեր: Վտանգի պահին նման «հայրենասերներն» առաջինն են հեռանում հայրենիքից և հեռվից սիրում:

«Որտեղ հաց, այնտեղ կաց» կարգախոսով առաջնորդվողները հայրենիք չունեն: Հայրենասիրությունը գերագույն արժեք է: Հայրենիքը ոչ այնքան գեղեցիկ խոսքի, շռնդալից բաժակաճառերի, ցուցադրական հույզերի, որքան որոշակի, կենդանի, «զոհահոժար» (նժդեհյան բառապաշարից) գործունեության կարիք ունի: Հայրենիքը պահանջում է մեր ճշմարիտ սերը, նվիրումը, զոհաբերումը ոչ միայն պատերազմի, այլև խաղաղ պայմաններում: Թվարկած և չթվարկած բազում գործոնները հաշվի առնելով է, որ ազգային անվտանգության (այդ թվում՝ հոգևոր-բարոյական) հայեցակարգի հիմքում որպես հիմնարար արժեք դնում ենք հայրենասիրությունը (հայրենասիրության թեման արծարծվում է բոլոր բաժիններում, ավելին՝ մենագրությունն ամբողջությամբ ներծծված է հայրենասիրությամբ և հայկականությամբ):

3. Ազատություն: Ազատությունը հոգու վիճակ է, ներքին ապրում: Մարդը կարող է լինել ստրկության մեջ հոգով ազատ և արժանանալ հարգանքի: Յոթնիցս զզվելի է հոգով ստրուկը, որ ապրում է ազատության մեջ, բայց՝ ստրկորեն, գրում է Գարեգին Նժդեհը:

Ազատությունը գիտակցված ընտրությունն է և այդ ընտրության համար պատասխանատվություն ստանձնելու վճռականությունը:

Ազատ վարքագծի համար անհրաժեշտ են.

- օբյեկտիվ սահմանափակությունների գիտակցում,
- ընտրության հնարավորություն,
- ընտրություն սեփական կամքով և ոչ թե հարկադրանքով,
- արտաքին հարկադրանքների ու արգելքների հաղթահարում,
- որոշակի արժեքների, աշխարհայացքի, նպատակի առկայություն:

[25] *Դ. Ալիշան,* Երկեր, էջ 183-184:

Ազատ է մարդու այն ընտրությունը, որը հակասության մեջ չի մտնում սեփական արժեքների, արժեհամակարգի, համոզմունքների հետ: Ընտրությունը, ներքին համոզվածությունից և արժեքային կողմնորոշումից բացի, պայմանավորված է նաև արտաքին հանգամանքներով, քաղաքական պայմաններով: Բռնապետական ռեժիմներում, որպես կանոն, հակասություն է առաջանում անհատի ներքին համոզումների և վարքագծի միջև, ինչն էլ առաջացնում է խղճի խայթ, ամոթի զգացում: Նման վարքագիծն ազատ համարել չի կարելի: Հարմարվածներն ապրում են, չհարմարվածները՝ հալածվում:

Ազատությունը՝ որպես բառ, գաղափար, քաղցր է, գայթակղիչ, ձգող, բայց որպես իրականացում, ապրում՝ բեռ է, որին ոչ բոլորն են դիմանում՝ ինչպես անհատական, այնպես էլ ազգային ու քաղաքական իմաստով: Ազատությունը ենթադրում է զոհողություն, զրկանք, բայց բոլորը չէ, որ պատրաստ են զոհողությունների ու զրկանքների: Ինչո՞ւ, որովհետև, մեզանում ազատության տեսական և իրավական սկզբունքները սահմանված են, մարդն ազատ է իր ընտրության մեջ, բայց՝ տեսականորեն: Իրականում՝ ոչ այնքան, որովհետև ընտրությունների ժամանակ հազարումի բարոյական ու հոգեբանական բնույթի ճնշումներ են գործադրվում, նույնիսկ աշխատանքից ազատելու սպառնալիք, գործի են դրվում դրամաբաժանումը, փողոցների և տարածքների ասֆալտապատումը և այլն, որոնք հոգեբանորեն կաշկանդում են անհատի գործողությունները, զրկում ազատ ընտրելու հնարավորությունից: Եվս մեկ գործոն. մարդկանց մի ստվար հատվածի համար «ազատություն», «արդարություն», «պայքար» կոչվածները գլխացավի պես բաներ են: Նրանց ի՞նչ է պետք. առավոտյան գնան աշխատանքի, երեկոյան գան տուն, ուտեն այն, ինչ կդնեն սեղանին, հեռուստացույց նայեն, քնեն, այլ բան պետք չէ: Նրանք այդքանից էլ գոհ են: Ընտրությունից ընտրություն բարեխղճորեն կգնան ընտրության, կընտրեն՝ ում կասեն, թե հետո էլ փող տան՝ ավելի լավ: Ավանդույթը, հոգեբանական կարծրատիպերը, վախը աշխատանքի կորստից, վաղվա օրվա անորոշությունից, ի լրումն՝ «Իմ ինչ գործն է», «Ինչպես բոլորն, այդպես էլ ես» և նման այլ մոտեցումները սպանում են ազատության ձգտումը, դատապարտում կրավորական գոյության:

4. Արդարություն: Արդարությունը սոցիալ-բարոյական և իրավական արժեքներից է, պետական իշխանությունների գործունեության միջոցով կարգավորում է մարդկանց փոխհարաբերությունները բաշխման և վերաբաշխման ոլորտում: Արդարությունը համարվում է սոցիալական առաքինություն, հաճախ նույնացվում է ճշմարտության (արդարի) հետ: Եթե ճշմարտությունը մտքի գլխավոր առաքինությունն է, ապա արդարության պահպանումը՝ պետական հիմնարկությունների:

Ցավոք, հայրենի իշխանությունները չկարողացան արդարություն ու իրավահավասարություն ապահովել բոլորի համար: Երկրի ներսում ակնհայտ է արդարության և իրավունքի պակասը, որը հաղթահարելու անզորությունն էլ դառնում է արտագաղթը խթանող կարևորագույն գործոն:

Մինչդեռ հասարակության կառուցվածքը և պետության քաղաքականությունը պետք է լինեն այնպիսին, որ բոլորի համար ապահովեն հավասար իրավունքներ՝ օրենքի և պարտականություններ՝ պետության առջև, հասարակական գործունեության մեջ, գործարարության ասպարեզում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ հոգևոր-բարոյական անվտանգության համակարգում մարդը արժեքների արժեքն է. հանուն նրա երջանկության ու բարօրության՝ պետք է արվի ամեն ինչ՝ անկախ նրա կարողություններից:

Այսինքն՝ ողջ հասարակության և անհատի համար պետք է ստեղծվեն այնպիսի արժեքային կողմնորոշիչներ, հոգևոր-բարոյական պայմաններ, որոնք կնպաստեն ազգային-հանրային միասնությանը, հետևաբար՝ հոգևոր-բարոյական անվտանգության ապահովմանը:

1.3 Մշակույթը՝ որպես ազգային ինքնության և հասարակության հոգևոր միասնության ապահման գործոն

Լատինական ծագման «cultura» բառը ժամանակակից և ինքնուրույն իմաստով օգտագործվել է միայն Նոր ժամանակի փիլիսոփայության մեջ, դարձել բազմիմաստ և բազմագործառնական XX–XXI դարերում*:

Մշակույթը մարդու գոյության միջավայրն է, «երկրորդ բնությունը», որը նա ստեղծում, վերարտադրում և փոխանցում է սերունդներին՝ նյութական, հոգևոր, սոցիալական կայուն արժեքների, խորհրդանիշների, նորմերի, ավանդույթների ձևով, այսինքն՝ մշակույթը, որպես մարդկային գործունեության ընթացք և արդյունք, բնության վերափոխումն է, արտեֆակտների աշխարհի ստեղծումը: Մշակույթը ոչ միայն արտեֆակտների, այլև իմաստակազմավորումների աշխարհ է, որ մարդը ստեղծում է իր գործունեության ընթացքում և ներդնում գործունեության արդյունքների մեջ:

Ազդելով մարդու կյանքի բոլոր ոլորտների վրա՝ մշակույթը, միաժամանակ, կրում է աշխարհում և հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը: Զարգացման հակասականությամբ հանդերձ՝ մշակույթը հասարակական կյանքում մնում է սոցիալական փորձի հաղորդ-

*Մշակույթի տեսության խնդիրների և սահմանումների մասին տե՛ս ***Ա.Սարգսյան***, Մշակույթի տեսություն, Եր., 2003, նույնի՝ Փիլիսոփայության դասընթաց, Եր., 2010, էջ 431-436:

ման, անձի սոցիալականացման միակ և անփոխարինելի ձևը: Այս համընդհանրական գործառույթների շնորհիվ՝ մշակույթն իրականացնում է հասարակության սոցիոմշակութային կյանքի միասնության ապահովումը՝ մարդու մեջ պահպանելով բարձրագույն արժեքը՝ ոգեղենությունը:

Ազգային անվտանգության հայեցակարգն ամբողջական չէր լինի առանց ընդգրկելու ազգային մշակույթի պահպանման, վերարտադրության և կատարելագործման միջոցառումների հիմնավորված համակարգը: Ազգային մշակույթի պաշտպանությունը, մեծ հաշվով, բանակի, իրավապահ համակարգի, արդարադատության, երկրի ներքին և արտաքին հետևողական քաղաքականության կարևոր գործառույթներից մեկն է, քանի որ մշակույթը, որպես երևույթ, ընդգրկում է էթնիկ հանրույթի հաղորդակցության ողջ համալիրը, և մշակույթի յուրահատկությամբ է պայմանավորված տվյալ հանրույթի ինքնատիպությունը:

Մշակութային համակարգը սերտորեն փոխկապակցված է քաղաքական ու տնտեսական համակարգերի հետ, և դրանցից որևէ մեկի փոփոխությունը փոփոխություններ է առաջացնում նաև մյուսներում: Զարգացած երկրներին ինտեգրվելու միջոցով արևմտյան մշակութային միջավայրում ձևավորված և այդ մշակույթի զարգացման արդյունք հանդիսացող տնտեսական և քաղաքական մոդելների յուրացումն անխուսափելիորեն հանգեցնում է մշակութային փոփոխությունների: Դրանք չեն կարող վտանգավոր լինել էթնոմշակութային ինքնության վերարտադրության տեսանկյունից, եթե ազգային մշակութային համակարգ ներմուծվող արժեքները յուրացվում են ոչ թե պարզ ընդօրինակման, այլ վերափոխումների միջոցով: Հակառակ դեպքում՝ էթնիկ սոցիոմշակութային միջավայրում առաջանում են մշակութային բախումներ և օտարումներ, ինչն էլ թուլացնում է ազգային մշակույթի ինքնությունն ու հաղորդակցային գործառույթը:

Մեր երկրի կյանքի տարբեր ոլորտներում արմատական փոփոխությունները, անցումը ազատ շուկայական տնտեսությանը, ինչպես նաև հասարակական գիտակցության վրա Արևմուտքի նպատակաուղղված ազդեցությունը հարուցել են հոգևոր-բարոյական բնույթի մի շարք բացասական երևույթներ: Մասնավորապես՝ մեծացել է բնակչության մի հատվածի հոգևոր պահանջմունքները բավարարող՝ զանգվածային մշակույթի ցածրաճաշակ արտադրանքի ծավալը: Անարգել իրականացվում է տարբեր կարգի ամենաթողության ու բռնության վրա հիմնված կենսակերպի քարոզչություն: Տեղի է ունենում հոգևոր-մշակութային արժեքների արժեզրկում: Մշակույթը սկսել է կորցնել հասարակության կենսագործունեության ոլորտում իր գլխավոր՝ մարդկանց վարքի բարոյական կարգավորչի և արժեքային հիմքերն ամրագրողի դերը:

Արդի պայմաններում հայոց ազգային ոգու վերածնունդը հարկավոր է սկսել ազգի հոգևոր առողջացման հայեցակարգի ձևավորումից: Վերջինս ունի մի շարք ուղղություններ: Առաջնահերթ է հասարակության զարգացման ռազմավարական հնարավորությունների և միջոցների ձևավորումը: Քաղաքացիների ակտիվ մասի նպատակաուղղումը կենսականորեն կարևոր ազգային նախագծերի իրականացմանը կարող է նախապայմաններ ստեղծել՝ դաստիարակելու ազատ և պատասխանատու, խորությամբ մտածող, հայրենասեր, հայրենիքի գաղափարով տոգորված ազգային ընտրախավ: Այսինքն՝ հնարավոր բոլոր ուղղություններով գործունեության ծավալում, որը նպաստելու է ազգի հոգևոր վերածննդին, ինչն էլ, իր հերթին, հանգեցնելու է ազգային ռազմավարական գաղափարների ձևավորմանը:

Ազգային անվտանգության համակարգում մշակույթի դերին անդրադառնանք փոքր-ինչ այլ դիտանկյունից՝ որպես աշխատանքային ըմբռնում առաջադրելով հետևյալը. ***ազգային մշակութային գործունեությունը և մշակույթն իրենց էությամբ պատմական գործընթացի ամեն մի իրավիճակում ազգը ներկայացնող ստեղծագործ խմբերի ու անհատների մտավոր և հոգեզգացմունքային բացահայտումներն ու անդրադարձներն են՝ սեփական ազգի ինքնության, քաղաքակրթական նվաճումների, հոգեբարոյական կերտվածքի, համամարդկայինի ընդհանրական համակարգում տեղի ու նշանակության, անցյալի ու ներկայի նվաճումների, արժեհամակարգի, արժեքներով առաջնորդվելու, ապագա հնարավոր զարգացումների մասին:***

Ազգի մշակույթն ապրում է ինքնածավալման, ինքնազարգացման ու ժառանգորդման անընդհատականություն՝ վերածվելով ազգի պատմության յուրօրինակ արձանագրության, անձնագրի, հատկապես՝ սեփական պատմական նվաճումների շնորհիվ: Այդ նվաճումների միջոցով է ազգը երկխոսում համաշխարհային ու ազգային այլ մշակույթների հետ ու նորովի ինքնահաստատվում: Այս յուրահատկությունը ուղղակիորեն ընորոշ է հայոց պատմությանն ու մշակութային նվաճումներին:

Ներկա փուլում ավելի պետք է շեշտադրվի ամբողջ հայկական մշակութային տարածքում ազգային, հայեցի կրթության ու դաստիարակության անհրաժեշտությունը, ամրապնդվի ազգային արժանապատվությունը, հայ լինելու հպարտությունը, հայկականությունը, հայրենասիրության ոգին: Իսկ այս ամենը դարձյալ առնչվում է մշակույթին, ազգային մշակութային քաղաքականություն ունենալուն: Այս հանգամանքի գիտակցումը չափազանց մեծ է, քանզի ազգային մշակույթի ու մշակութային պատմության յուրացումն է, որ նախապայման է դառնում նաև հայերենի պահպանման ու յուրացման համար: Այստեղ հսկայական դեր ունի մշակույթի մի այլ կարևոր ոլորտ՝ ազգային կրթությունը, դպրոցական համակարգը ՀՀ-ում և սփյուռքում: Հայաստանի ու հայության ներկայի ու ապագայի ազգային անվտանգությունը պայ-

մանավորված է նաև նրանով, թե որքանով հայությանը հնարավոր կլինի համախմբել ընդհանուր շահի, Հայաստանի հանդեպ ազգային պարտքի ու նվիրվածության շուրջ, որքանով հնարավոր կլինի պատմական Հայաստանի հիշատակները պահպանել և յուրացնել ՀՀ հոգևոր, հասարակական-քաղաքական պահանջմունքների գիտակցման շնորհիվ, որքանով հայությունը կդառնա նաև հոգևոր հայրենիքի կրողը: Իսկ այս ամենին հասնելու, հայկականի բաղադրիչ դարձնելու համար մշակույթն ունի առանձնահատուկ ու գերակայող նշանակություն: Դա ունի նաև ընդգծված հոգեբարոյական յուրահատկություն ու հիմնավորում, այսինքն՝ ազգայինով առաջնորդվող ամեն հայ ու խումբ պետք է ոչ միայն ինքը դառնա ազգայինով իմաստավորված հոգեբարոյականի ու մշակութայինի կրողը, այլև վստահություն ունենա իշխանավորների, ազգային կյանքը տնօրինողների նկատմամբ: Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է քաղաքական միավորից բացի՝ դառնա նաև բարոյական ու արժեքային միավոր: Այսինքն՝ պետությունը պետք է լինի ոչ միայն իրավական, այլև բարոյական:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հետևյալին.

ա) Անգնահատելի է ազգային մշակույթի դերը հասարակական, մարդկային հարաբերությունների, բարեկրթության, կրթվածության, հոգեբարոյական ինքնության, անհատականորեն ձևավորված ազգային պատկանելության, ազգային ավանդույթների, արժեքների ստեղծման, մշակման, զարգացման ու արդիականացման մեջ:

բ) Որպես մարդկային ու հասարակական երևույթ՝ մշակույթը վերածվում է ինքնատիպ ազգային ապրելակերպի, ստեղծում ապրելու ձև, ոճ, շրջապատի ու սեփական կյանքի նկատմամբ որոշակի վերաբերմունք:

գ) Հայկական քաղաքակրթությունը, առաջին հերթին, մշակութային քաղաքակրթություն է, որովհետև դարերի ընթացքում, անկումներով, հարկադիր շեղումներով, հոգևոր աղետներով հանդերձ՝ միշտ պահպանել է զարգացման ընթացքը: Հայությունը հատկապես մշակույթով և մշակութաստեղծ հանճարով է ճանաչվել ամբողջ աշխարհում որպես քաղաքակիրթ ազգ: Դա է հիմք դարձել նաև աշխարհում հայոց պատմության նկատմամբ հետաքրքրության մեծացման, ճանաչման համար: Դրանով է հայությունն իր նպաստը բերել համաշխարհային քաղաքակրթական մշակույթի մի շարք ոլորտների՝ երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի, գիտության, շինարարական արվեստի զարգացմանը: Էթնոկազմավորիչ ու մշակութաստեղծ այդ որակները պահպանվում ու նորովի իրականության են վերածում նաև ներկայումս: Այս նվաճումներով ևս հայը ապահովել է իր ազգային անվտանգությունը, էթնիկ ինքնագիտակցությունը, մշակութային «Ես»-ով հաստատված արժանապատիվ գոյության իրավունքն ու պատմականորեն հաստատված ինքնությունը:

Հիմք ընդունելով ողջ ասվածը՝ կարող ենք պնդել, որ.

1. Հայության ու Հայաստանի Հանրապետության գոյությունը, հայոց քաղաքակրթական հնարավոր զարգացումը, ազգի հավաքական ուժի կենտրոնացումն ու անվտանգության ապահովումն առանց հոգեբարոյական ու մշակութային նվաճումների պատկերացնել հնարավոր չէ: Այն հասարակությունը, որը զուրկ է այդ ամենից կամ դրանց տալիս է երկրորդական, ածանցյալ նշանակություն, անհեռանկար է, ինքնաքայքայվող ու ոգեզուրկ: Այս կողմնորոշիչն էական նշանակություն պիտի ունենա նաև ՀՀ տնտեսության, տնտեսագիտության զարգացման, հասարակական կյանքի տնտեսական կազմակերպվածությունն ավելի նպատակասլաց դարձնելու, հանրության որոշ շերտերի հոգեզրկվածությունը հաղթահարելու, հասարակական համակարգի բաղադրիչները արդյունավետ փոխկապակցելու համար: Ավելին՝ ազգի ինքնությունը, մեր համոզմամբ, ոչ այնքան տնտեսական, քաղաքական իրողություն է, որքան մշակութային, հոգեբարոյական ու քաղաքակրթական:

2. Հայաստանի ու հայության ազգային անվտանգությունը զգալիորեն պայմանավորված է հայկական մշակույթի ու էթնիկ հոգեբարոյական կերտվածքի պահպանմամբ, զարգացմամբ, ազգային գերխնդիրների լուծմանը միտված ակտիվությամբ:

3. Հայկական մշակույթը հպարտ ու արժանապատիվ ապրելու հայության մեծագույն երաշխիքն է, քանզի հազարամյակների ընթացքում հայը արարել է իր կեցության հիմքը՝ սեփական էթնոպատմամշակութային հայրենիքը, հոգևոր Հայաստանը, հայկական Հայաստանը:

4. Ազգային մշակույթի ընդհանուր գաղափարական, մշակութաբանական ու արժեքաբանական հարացույցում առանցքայինն այն է, որ մշակույթը եղել ու մնում է հայրենասիրության, հայկականի ոգով վերապրելու, սերունդներին ու հայոց պատմական ընթացքին հաղորդակցվելու, հայրենիքի հոգևոր յուրացման և ազգային ոգու ամրապնդման ամենանպատակային միջոցը: Հայրենասիրությունը՝ որպես բարձրագույն, խորը ու բազմաշերտ ապրումների, հույզերի, զգացումների համակարգ, գիտակցական վերաբերմունք է ու նվիրվածություն հայոց անցյալին, ներկային ու ապագային: Մշակույթի միջոցով հայրենիքը և հայրենասիրությունը միասնանում են, իսկ հոգևոր հայրենիքի կերպարի ձևավորմամբ ապահովվում է դրանց հարատևությունը:

Հայրենիքի գաղափարը միահյուսվում է ազգային գիտակցության, գաղափարախոսության ու բարոյական պատկերացումների, մտածողության, իդեալների հետ, վերածվում գործունեության ուղեցույցի:

Հայրենիքի կենսաուժի պահպանման գիտակցությունն առավել կարևոր է մեր օրերում, երբ նկատի ենք առնում Հայաստանի ծանր կացությու-

նը, արտագաղթը, սփյուռքի ուծացման վտանգը, անկումայնությունը, համաշխարհականացման բացասական հետևանքները: Եվ այս ամենի հաղթահարման մեջ հսկայական նշանակություն ունի մշակույթը՝ բոլոր դրսևորումներով, ազգային, հայեցի կրթությունը, ազգի հայրենասիրական ոգու ձևավորումը, հայրենապաշտությունը, հայրենասիրության գիտակցությամբ աճող սերունդի կրթումն ու դաստիարակումը, պետական համակարգի գործիչների իրավաբարոյական նկարագիրը, պետության որդեգրած արժեհամակարգը, ժողովրդի բարեկեցության ապահովումը և այլն:

Անառարկելի է, որ թե՛ պետական, և թե՛ հասարակական գիտակցության մակարդակներում պետք է խորապես իմաստավորվի այն ակնհայտ փաստը, որ ՀՀ քաղաքական, տնտեսական, ռազմական անվտանգության ապահովումը, ՀՀ զարգացման իրականացումը, Հայաստան-սփյուռք հարաբերության կազմակերպումը, համահայկականի ձևավորումը, ազգային գիտակցության ու արժանապատվության հաստատումը էապես պայմանավորված են նաև հանրապետության հոգեբարոյական կայունությամբ ու, հատկապես, ազգային մշակույթի կազմավորված համակարգի ստեղծմամբ:

ԳԼՈՒԽ 2

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

(ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

2.1 Կրթական հաստատությունների և մտավորականության դերը հոգևոր-բարոյական անվտանգության ապահովման համատեքստում

Գիտությունը և կրթությունն, իրենց ընդհանուր կազմավորմամբ ու հասարակական, ազգային կյանքում կարևոր դերակատարումներով, հոգևոր մշակույթի ամենաինքնատիպ ու կարևորագույն, միմյանց սերտորեն կապված դրսևորումներից են: Սակայն դրանց խնդիրները տարբեր են: Գիտությունը՝ որպես հոգևոր մշակույթի մտավոր արտահայտություն, ունի մի հիմնական նպատակ՝ ճանաչել, հայտնաբերել աշխարհն իր ամենատարբեր դրսևորումներում, բացահայտել օրենքներն ու օրինաչափությունները, տալ համապատասխան գիտական ձևակերպումներ: Կրթության նպատակը նոր մարդու, ներդաշնակորեն զարգացող անհատի, նոր սերնդի ձևավորումն է՝ դրա համար անհրաժեշտ ու պարտադիր գիտելիքների, հոգեբարոյական հատկությունների, արժեքների ձևավորմամբ ու յուրացմամբ: Ըստ մասնագետների՝ կրթությունը մարդաստեղծման, մարդակերտման հատուկ համակարգ է երեք հիմնական բաղադրիչներով՝ ***ԳԻՏԵԼԻՔ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ:*** ***Սակայն սրանում բացակայում է մի կարևոր բաղադրիչ՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի կատարելության, դաստիարակության հարցը, մարդու դաստիարակության հրամայականը: Հետևաբար, նշված բաղադրիչներին պետք է գումարել նաև հոգեբարոյական կատարելությունը, բարեկրթությունն ու դաստիարակությունը:***

Կրթության հենքի վրա բարձրանում է գիտությունը, վերջինս՝ նոր հնարավորություններ, գիտելիքային հենք ստեղծում կրթական համակարգի հետագա զարգացման համար:

Եթե արդի գիտակրթական ու տեխնիկական զարգացման տեսանկյունից անդրադառնանք ազգային անվտանգության խնդրին, ապա հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալին. ՀՀ անվտանգության պահպանման, ռազմավարության մշակման ու կենսագործման համար չափազանց արդիա-

կան ու անհրաժեշտ են ստորև վկայակոչվող հիմնարար կողմնորոշիչները ու դրանց իրականացման գործողությունների կիրառումը.

- տնտեսական, քաղաքական, ռազմական,
- ընդհանուր մշակութային, հոգեբարոյական,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ու բարձր տեխնոլոգիայի համակողմանի զարգացում,
- համաշխարհային նվաճումների յուրացում ու համագործակցություն,
- ազգային գոյության նյութական ու հոգեբարոյական հարստության ստեղծում,
- միջազգային ճանաչվածություն,
- հայապահպանություն,
- «հայ մարդ» կապիտալի և արժեքի համար գոյության ու բարեկեցության պայմանների ստեղծում,
- ազգային գենոֆոնդի ամրապնդում և զարգացում,
- ազգային ինքնաճանաչում ու ինքնաարժեքավորում,
- Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների ամրապնդում,
- արդի նորամուծական տեխնոլոգիաների ներդրում,
- բնապահպանություն,
- ինտեգրում համաշխարհային քաղաքակրթության համակարգի մեջ:

Գիտակրթական համակարգի առաջընթացն ապահովում է գիտական կանխատեսումների մշակումը, դրանց իրականացումը: Ուստի, կարելի է պնդել հետևյալը՝

- գիտակրթական համակարգը այս առումով ևս նպաստում է ազգային անվտանգության հայեցակարգի իրականացմանը,
- սա, իր հերթին, նշանակում է՝ հասարակության հիմնախնդիրների լուծման նպատակով գիտականության ու կրթության զարգացման անընդհատության ու արդյունավետության ապահովում,
- հիմնարար կրթությունն է այն վստահելի հիմքը, որը հնարավորություն է ստեղծում գիտական մտքի հետագա զարգացման, ծավալման համար, իսկ գիտությունը, իր հերթին, նոր հիմնարար սկզբունքներ ու ծրագրեր է առաջադրում կրթության համար:

Գիտության պետական քաղաքականությունը մշակում ու իրականացնում են ՀՀ ԿԳ նախարարությունը և նրա համակարգում գործող Գիտության պետական կոմիտեն, որի տեսադաշտում գիտության ու բարձր տեխոլոգիաներին առնչվող այն խնդիրներն են, որ բխում են գիտության զարգացման արդի պահանջներից, ՀՀ տնտեսական զարգացման արդյունավետությունից ու հեռանկարներից: Ուստի, կարելի է ասել, որ կոմիտեն նպատակ ունի ապահովելու ՀՀ ազգային անվտանգությունը՝ գիտության զարգացման ու դրա արդյունքների ներդրման միջոցով:

Կարևորելով վերը նշված հաստատությունների ծավալած գործունեությունը՝ հարկ ենք համարում նրանց ուշադրությունը կենտրոնացնել հայագիտության համակողմանի զարգացման խնդրին, որովհետև.

- գիտությունների ընդհանուր համակարգում հայագիտության դերն ու նշանակությունը ավելի է մեծանում իր ազգապահպան հիմնավորումներով, գլոբալացման տրամաբանությամբ թելադրվող ազգերի համահարթեցման գաղափարական ու գործնական հոռի քաղաքականության, անկանխատեսելի հետևանքների պայմաններում,
- տարածաշրջանի ընդհանուր լարվածությունը, թուրք-ադրբեջանական հակահայ քարոզչությունն ու գործունեությունը, նրանց հովանավորող արտասահմանյան վարձու ուժերի գործունեությունն ավելի են մեզ համոզում, որ անհրաժեշտ է զարգացնել հայագիտությունը բոլոր ասպարեզներում՝ ոչ միայն ՀՀ-ում, այլև սփյուռքում,
- հայագիտության նվաճումների հիման վրա կատարվող ընդհանուր եզրահանգումները ու կողմնորոշիչները կարող են ու պետք է ձեռք բերեն նաև քաղաքական նշանակություն՝ ընդդեմ հակահայկական ամեն մի դրսևորման ու, որպես այդպիսին, վերածվեն ազգային անվտանգության պահպանման վճռական ու հիմնավորված գործոնի:

Կրթության ոլորտի գոյությունն ու գործունեությունը ՀՀ-ում կազմակերպվում է Սահմանադրությամբ և «Կրթության մասին» օրենքներով:

Կրթական օրենսդրությամբ ՀՀ-ում բոլոր հնարավորությունները ստեղծվում են կրթության ոլորտը հզորացնելու, արդիականացնելու, կրթության հիմնական նպատակները կյանքի կոչելու, դրանցով ազգային-հասարական կյանքը, գիտությունն ու մշակույթը, տնտեսությունը զարգացնելու, անհրաժեշտ մասնագետներ պատրաստելու, հետևաբար, նաև ազգային անվտանգությունն ավելի հուսալի դարձնելու համար: Սակայն հսկայական ճեղքված գոյություն ունի օրենսդրական պահանջների ու կրթության իրական վիճակի միջև: Եվ պետության հիմնական նպատակը պետք է լինի այդ հակասության վերացումը: Այլ դեպքում՝ անիմաստ կդառնան այն հսկայական ծախսերը, ներդրումները, որոնք կատարվում են այդ նպատակների իրականացման համար: Ավելին, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, կրթությունը զգալիորեն կտրված է հասարակական կյանքի պահանջներից, չի կողմնորոշվում դեպի տնտեսության զարգացում՝ իր դանդաղ ընթացքով ու ձգձգվող բարեփոխումներով:

Կրթական համակարգի զարգացման և արդիականացման խնդիրները ներկայումս ստացել են ազգային անվտանգության ապահովման մշակութային հիմնավորման ևս մեկ փաստարկում: Ըստ Գագիկ Վարդանյանի. «Հայաստանի այսօրվա կրթական համակարգը և մարդկային կապիտալի հիմնական բաղադրիչը հանդիսացող գիտելիքի կապիտալի ձևավորման ըն-

թացքը չեն համապատասխանում (շատ քիչ բացառություններով) երկրի երկարատև և կայուն զարգացման պահանջներին»[26]:

Քանի որ գիտություն, իդեալներ և արժեքներ ստեղծում են մտավորականները, ուստի համառոտ այն մասին, թե ի՞նչ է մտավորականությունը և ինչպիսի՞ մտավորական է այսօր մեզ պետք, մանավանդ՝ հոգևոր-բարոյական անվտանգության հիմնական սուբյեկտներից մեկը մտավորականությունն է:

Ըստ ամենատարածված սահմանման՝ ***մտավորականությունը հասարակության այն շերտն է, որը մասնագիտորեն զբաղվում է մտավոր աշխատանքով և, որպես կանոն, ունի բարձրագույն կրթություն:***

Ավելի հարմար ժամանակի թողնելով «մտավորականություն» հասկացության ծագմանը, սահմանմանը, եվրոպական և ռուսական ըմբռնումներին վերաբերող տարբմբռնումները[27]՝ պարզապես փաստենք, որ մտավորականը հայրենասիրության և ազգասիրության նվիրյալն է, և այս տեսանկյունից էլ անդրադառնանք ժամանակակից հայ մտավորականության խնդիրներին:

Խորհրդային տարիներին մեզ ժառանգություն հասած ավերակների վրա մեր հայրերը ***Երկիր ու Պետություն*** ստեղծեցին, սոված ու հալածված ժողովրդից՝ ***Ազգ ու Մշակույթ***, դժվարությամբ, բայց կարողացան նաև «գլխատված» ժողովրդից մտավորականություն ստեղծել, և ի՞նչ մտավորականություն՝ մեծարժեք ստեղծագործություններով, հայրենապաշտ ու ազգապաշտ մտածումով, գործունեությամբ և, ամենակարևորը, հպարտ՝ իր արժանապատվությամբ ու առաքելության գիտակցությամբ:

Այսօր հնարավոր չէ հասարակությունը պատկերացնել առանց մտավորականության, որը ոչ միայն հոգևոր արժեքներ, հատկապես՝ գիտություն և մշակույթ ստեղծողն է, այլև՝ հոգևոր և բարոյական արժեքների վերաարժեքավորողն է, հասարակությունն առաջ մղող գաղափարական ուժը, ինչպես նաև հազարամյակների ընթացքում ձևավորված ազգային ավանդույթները, գիտելիքները և արժեքները հաջորդ սերունդներին փոխանցողը և, այս առումով, կապող օղակ, կամուրջ անցյալ և ներկա սերունդների միջև: Մտավորականությունը, միևնույն ժամանակ, նաև հասարակության կենդանի հիշողությունն է, նրա ոգին, շարժիչ ուժը, հասարակության ուսուցիչն ու դաստիարակը, և վստահորեն կարող ենք ասել, որ վաղը մենք կունենանք այնպիսի հայրենիք, այնպիսի հասարակություն, ինչպիսի մտավորականություն ունենք այսօր:

---

[26] ***Գ. Վարդանյան***, Գիտելիքահենք տնտեսություն, Եր., 2008, էջ 202: Տե՛ս նաև 203-213 էջերը, որոնցում վերլուծություններ ու համեմատություններ են անցկացվում Հայաստանի ու Եվրոպայի կրթական վիճակների միջև:

[27] Այդ ամենի մանրամասն վերլուծությունը տե՛ս ***Յու. Հովհաննիսյան,*** Հայ մտավորականությունը և ազգային գաղափարախոսությունը, Եր., 2005, էջ 11-55:

Մտավորականն իդեալ պետք է լինի իր ժողովրդի, հատկապես երիտասարդության համար: Բարձրացող սերունդը նրանից պետք է վերցնի ճշմարտության որոնման ջահը, նրանից պետք է սովորի սիրել Հայրենիքը, սիրել մարդուն, ապրել առաքինի, որպես սկզբունք ունենալով Գեղեցիկը, Բարին, Ճշմարիտը …

Նժդեհը համոզված էր՝ որտեղ ճշմարիտ մտավորականությունը չէ առաջնորդը, այնտեղ «կոյր է ժողովուրդը, նաւ՝ պառակտուած: … Ճշմարիտ մտաւորականութեա՛ն է ընկնում՝ բուժել այդ կուրութիւնը իրենց ժողովրդի մէջ մշակելով բարոյական առաքիինութիւններ-ճշմարտասիրութիւն, արդարամտութիւն, մեծահոգութիւն»[28]:

Ճշմարիտ մտավորականը չի կեղծում նույնիսկ այն դեպքում, երբ իր գործողությունները հակադրվում են ընդունված արժեքային համակարգին, և ինքը ոչ միայն կարող է ճիշտ չհասկացվել, այլև հալածվել:

Մտավորականությունը պետք է կարողանա հոգեբանորեն բարձրացնել հայությանը, որովհետև, ինչպես նշում է Նժդեհը, ժողովուրդը այնպիսին է, ինչպիսին որ նրան համարում է մտավորականությունը, երկիրն ապրում է այնքան, ինչքան նրան տալիս է մտավորականությունը:

Այժմ խիստ համառոտ հոգևոր-բարոյական այն բացասական երևույթների մասին, որոնք դիտվում են մեր դպրոցում, բուհում, մտավորականության միջավայրում:

Դարեր շարունակ դպրոցը եղել է մեր սրբավայրը: Մեր ողջ արժեքային համակարգը, հոգևոր-բարոյական նկարագիրը պատանին, երիտասարդը բերում էր դպրոցից: Ահա թե ինչու էին դպրոցի դերն այդքան կարևորում մեր մեծերը: Մ. Մամուրյանի կարծիքով՝ դպրոցում ստացած կրթությունն է, «…կըրնա՝ ըստ տեսակին, զայն կնամարդի ու ստրուկ ընել, կամ արի ու ազատ…», Նիկոլ Աղբալյանը գտնում է, որ ազգային գիտակցության ձևավորման երկու հիմնաքարերն են մայրենի լեզվով կրթությունը և կրթությունը ազատության համար: Եվ վերջին վկայությունը՝ Մ. Նալբանդյանի կարծիքով. «Մարդու առաքինությունն ու վատթարությունը կախված է նորա դաստիարակությունից»:

Թվարկված բոլոր գործառույթներն էլ նախկինում հայ դպրոցը կատարել է: Հարգանքը աշխատողի, մեծի նկատմամբ, աշխատասիրությունը, ազնվությունը, նվիրվածությունը ազգային գաղափարներին, հայրենիքին, մի խոսքով՝ ճշմարիտ արժեքները տալիս էր դպրոցը: Նորանկախ Հայաստանում դպրոցը նույնպես ներառված է վերափոխումների և փորձարկումների հորձանուտի մեջ, և միշտ չէ, որ սպասելիքներն ու արդյունքները համապատասխանում են, բայց անմիջական ազդեցություն են թողնում պատանիների

[28] ***Գ. Նժդեհ,*** Ժողովուրդ եւ առաջնորդ, Հատընտիր, էջ 577:

փխրուն հոգիների և վարքագծի վրա: Դա է պատճառը, որ բուհում հայտնվում են ոչ միայն լուրջ ու պատասխանատու, իդեալներով առաջնորդվող, հայրենասեր, այլև ցինիկ, թերուս, հայոց պատմության այբուբենին անհաղորդ երիտասարդներ:

Դպրոցի բացթողումները փորձում է լրացնել բուհը, բայց միշտ չէ, որ հաջողվում է, որովհետև ուսանողների զգալի մասի համար գիտելիքն արժեք չէ: Բուհը դժվարանում է ապահովել մարդ-մասնագետ-քաղաքացի եռամիասնությունը:

Բուհը լուրջ խնդիր ունի նաև ազգային արժեքների կրողը լինելու կարևորագույն խնդրում: Դրա վկայություններից մեկն էլ հետևյալն է. հանրապետությունում իրականացված սոցիոլոգիական հարցումները, որոնք կատարվել են մինչև 30 տարեկան երիտասարդների շրջանում, ցույց են տալիս, որ հարցման ենթարկվածների մոտ 78.8%-ը (հնչել է նաև 81%-ը) հայտնել է, որ հնարավորության դեպքում կհեռանա հայրենիքից: Հարցման ենթարկվածների 48%-ը ցանկանում է երկրից հեռանալ՝ աշխատանք գտնելու նպատակով, իսկ 21%-ը՝ իշխող բարոյահոգեբանական մթնոլորտի պատճառով: Այս և այլ երևույթներ վկայում են, որ երիտասարդության մի զգալի մասի համար հայրենիքը, նրա նկատմամբ պարտքի, պատասխանատվության զգացումները դադարել են արժեք լինելուց:

Դաստիարակության և ազգի առջև պատասխանատվության տեսանկյունից էլ պետք է գնահատել հայ մտավորականության այսօրվա դերը:

Նժդեհի գնահատմամբ՝ «Ճշմարիտ մտաւորականը նա է, որ իր մտաւոր կարողութեան, ամէն բանից առաջ, միացնում է խորապէս բարոյական նկարագիր, բարձր գաղափարականութիւն, ստեղծագործելու նոր իտէալներ, արժէքներ, կեանքի ձեւեր ստեղծելու ընդունակութիւն, սրբազանի զգացում, տեսական խղճմտանք, հոգեւոր արիութիւն, ժողովուրդն իր ամբողջութեան մէջ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողութիւն»[29]:

Ունե՞նք այդպիսի մտավորականներ, ցավոք՝ քիչ: Հրապարակում չէ իդեալներ և արժեքներ արտադրող մտավորական վերնախավը, որը, ազգային-հասարակական արժեքները տեղափոխելով իրական դաշտ, ազդեր ազգային գիտակցության և հոգեբանության վրա: Մտավորականությունն իր ակտիվ քաղաքացիական ու հասարակական կեցվածքով, բարոյական նկարագրով, ազնվաբարո մտածողությամբ պետք է դառնար ազգային անվտանգության և առաջադիմության դրոշակակիրը, ամրապնդեր ազգային գոյության հիմքերը, հասարակության հոգևոր-բարոյական կերպարը: Թեև թվարկված հատկանիշների կրող առանձին անհատ-մտավորականներ գոյություն ունեն, բայց հասարակության մտավոր-բարոյական դեմքը բնութագրող մտավորականության առանձին շերտ դեռ չի ձևավորվել:

---

[29] ***Գ. Նժդեհ,*** Ցեղի յաւիտենական զէնքը, Հատընտիր, էջ 159:

2.2 Հասարակական-քաղաքական կառույցների հոգևոր բարոյական գործառույթները

Հասարակական-քաղաքական կառույցներից են ընտանիքը, պետությունը, կուսակցությունները, արհմիությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, ստեղծագործական միությունները և այլն: Այս փուլում համառոտ անդրադարձ կլինի միայն հոգևոր-բարոյական անվտանգության ոլորտում ընտանիքի և պետության գործառույթներին և դերին:

Ընտանիքը որոշակի կայուն կառույց է, որը ձևավորվում է ամուսինների և նրանց զավակների փոխհարաբերության հիմքի վրա: Ընտանիքի ձևավորումը պայմանավորված է ամուսին-կողմերի առկայությամբ, իսկ կողմերն ամուսին են դառնում ամուսնությամբ, որը տղամարդու և կնոջ հարաբերության իրավական կարգավորումն է (որոշ երկրներում ամուսնություն է համարվում նաև նույնասեռ կողմերի հարաբերության իրավական կարգավորումը):

Դարեր շարունակ ընտանիքը եղել է մեր ազգային անվտանգության միջնաբերդը: Պետության բացակայության երկար դարերի ընթացքում ազգը պահպանվել և վերարտադրվել է ընտանիքի կայունությամբ: Ընտանիքը համարվել է փոքր հայրենիք: Ահա թե ինչու Նալբանդյանի կարծիքով՝ եթե այնտեղ հայրենասեր չի ծնվում, ապա զուր են մեծ հայրենիքի երազանքները:

Ընտանիքում առանձնացվում է փոխհարաբերությունների չորս ոլորտ.

ա) ընտանեկան պարտականությունների կատարում,

բ) երեխաների դաստիարակություն,

գ) որոշումների ընդունում,

դ) ազատ ժամանակի կազմակերպում:

Ընտանիքի գործառույթներն են.

1. սերնդի վերարտադրությունը,
2. սերնդի սոցիալականացումը:

Դարեր շարունակ հայ ընտանիքում երեխաների դաստիարակությամբ զբաղվել է մայրը, այդ պատճառով, Նժդեհի կարծիքով, մոր մասին կարելի է դատել երեխայի հայրենասիրության աստիճանով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո պատկերը փոխվում է: Կինն ակտիվորեն ներգրավվում է հանրային աշխատանքի մեջ, և երեխայի դաստիարակության համար պատասխանատու են դառնում ծնողները հավասարապես: Պատկերը նույնն է նաև այսօր, նույնիսկ ավելին: Շատ ընտանիքներում միակ աշխատողը և երեխաների հոգսը հոգացողը կինն է՝ մայրը: Այս պայմաններում հայրը զավակների դաստիարակության անմիջական պարտականություն է ձեռք բերում և դառնում պատասխանատու: Ուստի, վերաիմաստավորելով Նժդեհի

խոսքը՝ կարող ենք նշել, որ ծնողների մասին կարելի է դատել ըստ երեխաների հայրենասիրության աստիճանի:

Նշված հանգամանքը բավական է համոզվելու, որ երեխայի սոցիալականացման, որպես հասարակական և ոգեղեն էակ ձևավորման ու դաստիարակության առաջին և անփոխարինելի վայրն ընտանիքն է: Ծնողների վարքագիծը, զրույցները, տրված խրատներն ու խորհուրդները, միմյանց, ընտանիքի մյուս անդամների, հյուրերի, հարազատների, մտերիմների, անծանոթների հանդեպ վերաբերմունքը տեսնելով, լսելով՝ երեխան յուրացնում է համակեցության որոշ նորմեր, արժեքների որոշակի պաշար, որոնք ձևավորում են նրան որպես անհատի, անձնավորության: Այսինքն՝ ընտանիքն այն առաջին քուրան է, որտեղ ձուլվում ու կաղապարվում է մարդ-անհատի ամենասկզբնական, համեմատաբար կայուն կերպը, կերպարը (համեմատաբար, որովհետև կերպարի ամբողջականացման գործում իրենց դերն են կատարում միջավայրը և դպրոցը): Ընտանեկան դաստիարակության (լայն իմաստով) արդյունքում ստացածի միջոցով է երեխան, պատանին, երիտասարդն արտահայտում իր վերաբերմունքը (եթե, իհարկե, միջավայրի ազդեցությունն ավելի ուժեղ չէ) շրջապատի, հայրենիքի և աշխարհի հանդեպ:

Այժմ ժամանակակից ընտանիքներին բնորոշ մի քանի խնդիրների մասին:

1. ***Ծնելիության խնդիրը***: Լավ է, երբ ընտանիքը բաղկացած է մի քանի երեխաներից. նրանք մեծանում են՝ միմյանց նկատմամբ ուշադիր, հոգատար, նվիրված, պատրաստ փոխադարձ օգնության: Ծնելիությամբ է պայմանավորված բնակչության վերարտադրությունը. նվազումը վիճակագրական փաստից փոխարկվում և վերածվում է սոցիալ-ազգային հիմնախնդրի: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնելիությունը մեզանում արագորեն նվազում է, ինչը ծնում է նվազագույնը երկու խնդիր.

ա) ազգի քանակի նվազում, որը դառնում է ազգային անվտանգության լրջագույն խնդիր,

բ) հասարակության ծերացում:

2. ***XX դարի 90-ական թթ. մեր հանրապետությունում տեղի ունեցած տնտեսական, սոցիալական, քաղաքական խորը ցնցումները*** (երկրաշարժի հետևանքներ, ԽՍՀՄ-ի փլուզում, տնտեսության անկում, արտագաղթ, զանգվածային գործազրկություն ու աղքատություն) լուրջ խնդիրներ հարուցեցին հայկական ընտանիքների կազմում, կառուցվածքում, արժեհամակարգում: Տղամարդու արտագնա աշխատանքին գումարվեցին նաև կնոջը, ցավոք, զանգվածային դարձան ոչ լրիվ կազմով ընտանիքները՝ իրենց բոլոր հետևանքներով:

3. ***Ձևավորվում է գործարար կանանց խավ*** (մեզանում՝ գուցե ուշացումով), որի ներկայացուցիչները գործարարությունը, հաջողությունը հասարակական արտադրության և ծառայությունների ոլորտում, սեփական «Ես»-ի կայացումը գերադասում են ամուսնությունից, ընտանիք ստեղծելուց, երեխա ունենալուց կամ աշխատանքում սեփական տեղն ամրագրելուց, և միայն ֆինանսական անկախություն ձեռք բերելուց հետո են մտածում ամուսնության և ընտանիք ստեղծելու մասին: Ամուսնությունն ու ընտանիքը (առանց երեխայի կամ երեխայով) մղվում են երկրորդական պլան: Այդ պատճառով շատ երիտասարդներ ամուսնանում, ընտանիք են ստեղծում 30 տարեկանից հետո: Այդ տարիքում երկրորդ, առավել ևս երրորդ երեխան ունենալն ու մեծացնելը դառնում են խնդիր ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև հոգեբանական առումով:

Թվարկած (և չթվարկած) գործոնները ցույց են տալիս, որ ընտանիքին վերաբերող արժեքային շատ պատկերացումներ փոխվել կամ իմաստազրկվել են: Ժամանակակից հայ ընտանիքը ձևախեղվել է: Ձևախեղվել են ընտանեկան արժեքները: Արտագնա աշխատանք միշտ եղել է, բայց տղամարդու համար: Հիմա նաև կանայք են մեկնում արտագնա աշխատանքի, այն էլ Թուրքիա, որն ազգի բարոյական անկման վերջին շեմն է: Ոչ լրիվ կազմով ընտանիքներ, խեղված հոգիներ, թերի արժեհամակարգով երեխաներ: Ընտանիքն այսօր չի ապահովում ազգի նույնիսկ պարզ վերարտադրությունը:

Եթե նախկինում ընտանիքը ազգի անվտանգության ապահովման ամենահուսալի հենարանն էր, ապա այսօր դարձել է ամենամտահոգողներից մեկը: Եթե ընտանիքը չապահովի իրեն բնորոշ գործառույթները, ապա ազգը զրկվելու է վերարտադրվելու, հետևաբար, գոյատևելու հեռանկարից:

Եվս մեկ կարևոր գործոն. թուլանում, քայքայվում, երբեմն նույնիսկ կազմալուծվում է ազգային անվտանգության, ընտանիքի վերարտադրության, մտավոր ներուժի ապահովման ամենահիմնական սկզբնաղբյուրը՝ գյուղը: Գյուղերը դատարկվում են, երիտասարդները մնալու հեռանկար չեն տեսնում, որոշ գյուղերում առաջին դասարան չի ձևավորվում, փակվում են դպրոցները: Անմխիթար վիճակում են հատկապես բարձրլեռնային և սահմանամերձ գյուղերը:

Ազգային անվտանգության ամենամեծ երաշխավորը, անշուշտ, պետությունն է: Ցավոք, մեր պետությունը միշտ չէ, որ կարողացել է ազգի անվտանգության գործառույթ իրականացնել, որովհետև տևական ժամանակ գոյություն չի ունեցել:

Հիմա, բարեբախտաբար, ունենք պետություն, իսկ պետականաստեղծման առաջին տարիներին կար նաև համոզվածություն, թե ազգային պետությունը կստեղծի կառավարման այնպիսի համակարգ, որը երկրում

կապահովի արժանավայել ապրելու և աշխատելու բոլոր իրավական պայմանները և, որպես ազգային անվտանգության սուբյեկտ, կկատարի իր գործառույթները նաև հոգևոր-բարոյական ասպարեզում:

Ազգային պետության հոգևոր-բարոյական գործառույթների մեջ առանձնացնում են.

ա) ինքնիշխանությունն ու ազատությունը,
բ) ազգի բոլոր անդամների համար հավասար պայմանների ապահովումը, հասարակական տարբեր շերտերի միջև խտրականության վերացումը,
գ) կառավարման մեջ ժողովուրդ–իշխանություն անջրպետի վերացումը,
դ) օրենսդրական հատուկ դաշտի ստեղծման և գործադրման միջոցով սոցիալական արդարության ապահովումը,
ե) օրենքի առջև բոլորի հավասարության և հավասար պատասխանատվության սկզբունքի կիրառումը և այլն[30]:

Փաստաթղթերով (իրավական ակտերով) ամեն ինչ, կարծեք, այդպես է՝ Սահմանադրությամբ ամրագրված: Արտաքին հատկանիշները նույնպես կան՝ տնտեսության ազատականացում, դատաիրավական անկախ համակարգ և այլն: Բայց թվարկված գործառույթների մի մասն իրականացվում է առերևույթ և թերի: Մասնավորապես.

Առաջին՝ Անցած քսան տարվա ընթացքում մեր առանձին իշխանավորներ այդպես էլ չբարձրացան պետականության վեհ գաղափարի գիտակցման մակարդակին, չարդարացրին ժողովրդի բազում հույսերը: Անշուշտ, անկախությունը, պետականությունը, դրանց խորհրդանիշները մեծ արժեքներ են, եթե կրող անհատ իշխանավորներն իրականացնում են ժողովրդի հոգսը հոգալու, անկախության իդեալներն ու գաղափարները, թափած արյունը իմաստավորելու քաղաքականություն: Հակառակ դեպքում՝ «անկախություն», «ազատություն», «պետականություն» արժեքները իմաստազրկվում են:

Երկրորդ՝ Հասարակության ներսում խորանում է սոցիալական բևեռացումը: Մեծ դժվարությամբ ու շատ դանդաղ են ձևավորվում իշխանություն–ընդդիմություն քաղաքակիրթ հարաբերությունները:

Երրորդ՝ Իրականացրած բազմաթիվ բարեփոխումներով հանդերձ՝ մեր արդարադատության համակարգում դեռևս դիտվում են բազմաթիվ թերություններ: Օրենքն իր ողջ զորությամբ գործում է ընդդիմադիրի, թույլի, անպաշտպանի նկատմամբ:

---

[30] Այդ մասին տե՛ս նաև ***Մ. Գաբրիելյան, Ա. Դարաղյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան,*** Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, էջ 57:

Չորրորդ՝ Գործազրկության և աշխատատեղերի պակասի պատճառով մարդը ստրկական կախման մեջ է ընկել իր աշխատանքից և գործատուից: Ի դեպ, «աշխատանք» ասելով՝ արդեն քսան տարի է, հասկանում ենք ոչ թե մասնագիտական կարողությունների իրացում, այլ ցանկացած զբաղմունք, որը կարող է փող բերել և ընտանիք պահել: Ապրելը վերածվել է գոյատևման, ամեն կերպ փող աշխատելուն: Այս ամենի հետևանքով ձևավորել է հայի մի տեսակ, որին կարելի է անվանել «օրվա հայ» կամ «իրավիճակային հայ»: Այստեղից էլ՝ վախը, ապագայի անորոշությունը, հիասթափությունն ու հուսախաբությունը:

Թվարկվածները նաև բարոյական անկման, այլասերման պատճառ դարձան: Աշխատանքը կորցնելու վախը, ընտանիքը պահելու հոգսը մարդուն ստիպեցին գործարքի մեջ մտնել սեփական խղճի հետ, իջնել արժանապատվության շեմից ներքև, դառնալ էակ, որի անունը պարզ չէ: Այստեղից էլ համընդհանուր հոգևոր-բարոյական անկումը: Արտագաղթն այդ ամենի հետևանքն է: Արտագաղթը պետք է դիտել որպես սոցիալական բողոքի ազգակործան ձև:

1978–1988 թթ. մարդահամարների միջակայքում ժողովուրդը քանակապես աճել էր՝ հասնելով 3 միլիոն 200 հազարի: Իսկ 2001–2011 թթ. մարդահամարի միջակայքում նվազել է 250.000 մարդով:

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի տվյալներով՝ 2013 թ. մայիսի 15–25-ն ընկած ժամանակահատվածում Երևանում 1000 հարցվածի 46%-ը նշել է, որ ցանկանում է հեռանալ Հայաստանից: Հեռանալու մտադրության մասին հայտնել է տղամարդկանց 50%-ը: Տարիքային առումով 18–29 տարեկան երիտասարդների 52%-ը ցանկանում է հեռանալ երկրից: Արտագաղթի դրդապատճառների մեջ առանձնացվել են.

ա) աշխատանք չկա՝ 31%,

բ) հեռանկար չկա՝ 29.6%,

գ) արդարություն չկա՝ 19.3%,

դ) ապրուստ չկա 17.2%:

Փաստորեն, հարցվածների 48.9%-ի՝ երկրից հեռանալու պատճառը սոցիալ-տնտեսականը չէ, այլ հեռանկարի և արդարության բացակայությունը: Իսկ մի՞թե ողբերգություն չէ, երբ մարդն արդարություն ու հեռանկար է որոնում հայրենիքից դուրս: Ձավեշտն այն է, որ հարցվածների 82.3%-ը իրեն համարում է հայրենասեր, 69.8%-ը՝ երջանիկ:

Ըստ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի ղեկավար Գևորգ Պողոսյանի՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հաշվարկներով 2025–2030 թթ. Հայաստանում կարող է լինել ընդամենը 1.5-2 միլիոն բնակչություն: Իր մեկ այլ հարցազրույցում, շարունակելով թեման, Գ. Պողոսյանը նշում է, որ երկրից հեռացողների տարիքը տատանվում է 18–55-ի միջև, որը երկիրը

զարգացնող հիմնական զանգվածն է: Երկրում մնացել են հոգատարության կարիք ունեցողները՝ 550.000 թոշակառու, 600.000 տնային տնտեսուհի, 450.000 անչափահաս, որոնցով երկիր չես զարգացնի: Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ ծնելիությունը երկու անգամ նվազել է, մահացածության տոկոսը՝ աճել, ժողովուրդը՝ ծերացել[31]:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2013 թ. երեք անգամ ավելի շատ են Բագրատաշենի սահմանն անվերադարձ հատել, քան նախորդ տարիներին: Լքածներից 126 հազարն այլևս չի վերադարձել: Ժողովրդագրական իրավիճակին վերաբերող պաշտոնական տվյալներից պարզ է դառնում, որ գնալով նվազում է մեր այն հայրենակիցների թիվը, որոնք հեռանալով հայրենիքից՝ պարբերաբար այցելում են: Միայն վերջին երեք տարում Հայաստանը դատարկվել է 250.000 մարդով[32]:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2013 թ. առաջին կիսամյակում Հայաստան ժամանած ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձանց թիվը կազմել է 9.5 հազար՝ նախորդ տարվա 14 հազար՝ 700-ի համեմատությամբ: Ֆրանսիայի քաղաքացիություն ունեցող սահմանը հատող անձանց թիվը 6800 է 11 հազարի փոխարեն, Հոլանդիայից՝ 1700 է 3400-ի փոխարեն:

Կտրուկ նվազել է այն անձանց սահմանահատումների քանակը, որոնք, ապրելով այլ երկրներում, պահպանել են իրենց քաղաքացիությունը: Եթե 2012 թ. Հայաստան մուտք են գործել 440 հազար ՀՀ քաղաքացի, ապա այս տարի նույն ժամանակահատվածում՝ 298 հազար[33]: Տեղափոխվելով այլ երկիր, ձեռք բերելով նոր քաղաքացիություն՝ նրանք իրենց մահացածներին այլևս Հայաստան չեն տեղափոխում, այլ նոր վայրում ստեղծում են գերեզմաններ և ամբողջապես կտրվում հայրենիքից:

Այսօրվա արտագաղթը բազմաթիվ գծերով տարբերվում է մինչև խորհրդային կարգերի հաստատումը դիտված գաղթականությունից և խորհրդային շրջանի «խոպանչիությունից»: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը՝ հայրենիքից հեռացել են օտարի լծից ազատվելու համար, հեռացել են նախարարական տները, մտավորականները և ունևոր զանգվածը: Բնակչության բացարձակ մեծամասնությունը ապրում էր հայրենիքում: Պատկերը փոխվել է եղեռնից հետո: Խորհրդային իշխանությունների օրոք արտագաղթ, ըստ էության, չկար, հեռանալու ձգտումը տարածված էր հայրենադարձների և այլախոհների շրջանում և նկատելի դարձավ միայն այդ իշխանության վերջին տարիներին: Բուն ԽՍՀՄ-ի ներսում դիտվող երևույթը «խոպանչիությունն» էր, երբ տղամարդիկ գնում էին ժամանակավորապես (գարնանը գնում էին, աշնանը՝ վերադառնում)՝ գումար վաստակելու և

[31] Տե՛ս Հայկական ժամանակ, 4 հուլիսի 2013, էջ 4:
[32] Տե՛ս Գրական թերթ, 22 նոյեմբերի 2013, էջ 1:
[33] Տե՛ս Հայկական ժամանակ, 2 օգոստոսի 2013, էջ 4:

կենսական խնդիրներ լուծելու համար (բնակարան կառուցել, ամուսնանալ) և այլն: Նրանց նկատմամբ առանձնապես հարգանք էլ չկար, որի վկայությունը «խոպանչի» անվանումն էր: Ներկայիս արտագաղթը զանգվածային փախուստ է մեր ստեղծած հայրենիքից, մեր իշխանություններից, հանրապետությունում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտից: Սա բողոքի սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական ձև է, բայց անընդունելի, որովհետև դրանով ոչինչ չենք լուծում, փոխարենը, եթե դեմը չառնվի, ինչպես վերևում նշեցինք, կործանելու ենք երկիրը, ինչը սրբապղծություն է հայրենիքի ու հայրենի հողն իրենց արյամբ շաղախած մարդկանց հիշատակի նկատմամբ:

Այս արտագաղթը կենսական հանգամանքներին չդիմադրելու կամ դիմադրելու ցանկության պակասի հետևանք է, և ոչ մի ժողովուրդ այս ճանապարհով ուժեղ պետություն և ապահով հայրենիք չի ստեղծել:

Շատ հետազոտողներ պնդում են, որ այս երևույթի անվանումը «արտագաղթ» չէ, այլ «փախուստ»: Նույնիսկ մշակվում է «փախուստի» փիլիսոփայություն[34]:

Քանի որ այդ ամենում իրենց մեղքի բաժինն ունեն մեր իշխանավորները, այդ պատճառով անդրադառնանք իշխանություններին ուղղված Գարեգին Նժդեհի մտքերին, որոնցից ամեն մեկը, կարծեք, ասված է մեր օրերի համար: Եվ այսպես. «Միայն պարտականութիւններն ու դժբախտութիւնները չեն, որ ընդհանուր պետք է լինեն, այլեւ իրաւունքներն եւ ուրախութիւնները», որովհետև.

ա) Ամուր չէ այն պետության հիմքը, ուր առատության մեջ գտնվողների ուրախ քրքիջների հետ լսվում է և աղքատի ողբը:

բ) Ապագա չունի այն պետությունը, ուր արևը չի ծագում բոլորի համար, ուր առանց ամոթի ու խղճի խայթի մարդիկ անցնում են թշվառների մոտով:

գ) Անիծված է այն իշխանությունը, որն արդարացնում է որոշ տարրերի ընչազրկությունը, չի ապահովում հասարակական արդարություն, ասել է, թե կա այն ամենը, ինչն արագացնում է պետության անփառունակ անկումը:

դ) Եթե հայ մարդը խեղճ և անարի պիտի մնար նաև իր անկախ հայրենիքում, էլ ինչի էր պետք անկախությունը: Եթե դարերով օտարի լծի տակ ապրած հայության մի մասը թշվառ պիտի մնար նաև իր ազատ հայրենիքում, էլ ինչի էր պետք ազատությունը:

ե) Երբ մի ժողովրդի գործիչները եսապաշտ են, անհաշտ, ոչ ընկերական, այլևս կարիք չկա ժողովրդին ավելի մեծ դժբախտություն ցանկանալ:

---

[34] Տե՛ս ***Լ. Ամալեկյան,*** Արտագաղթ և փախուստ //Հայկական ժամանակ, 2013, օգոստոսի 10:

զ) Ժողովուրդները տառապել և տառապում են իրենց առաջնորդների անմիաբանության և հոգևոր անզորության պատճառով: Եվ միշտ էլ ժողովուրդն է քավում իր ղեկավարների մեղքը[35]:

Ավելին, հենց իշխանությունը պետք է մշակի ազգային-հասարակական կյանքի բարոյականացման ծրագիր, որոշակի քայլեր ձեռնարկի՝ այն իրականացնելու և գործնական դարձնելու համար: Այդ պատճառով պետք է իրականություն դարձնել սահմանադրական նորմերը, դեմքով շուռ գալ դեպի ժողովուրդը, գործով և ոչ թե խոսքով նեցուկ կանգնել նրան: Եվ պետք է սկսեն իրենցից, որովհետև. «Ով չի կարող իր կրքերը ենթարկել կամ ծառայեցնել իր կամքին, իր բանականութեանը, չի կարող նաեւ արդիւնաւոր կերպով ծառայել իր ազգին»[36]:

Սկսելով իրենցից, մաքրելով իրենց վարք ու բարքը, հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ սիրո, հարգանքի, դրական վերաբերմունքի օրինակ դառնալով՝ իշխանությունները կարող են փոխել իրենց հանդեպ ժողովրդի վերաբերմունքը: Դարձյալ իրավացի է Նժդեհը՝ նշելով, որ. «Ոչինչ այնքան կրթիչ, ազնուացուցիչ չէ անհատի եւ զանգուածների համար, որքան ղեկավարների յարաբերութեանց վեհութիւնը»[37]:

Նժդեհը գտնում էր, որ ցեղային բարոյականությունը պահանջում է երկու բան.

1. քաղաքական միակրոնություն,
2. բարոյական այն հատկությունների և ռազմարվեստագիտական կարողությունների միավորում, որոնք համապատասխանում են մեր ժողովրդի հավաքական կարիքներին և էապես անհրաժեշտ են մեր ժողովրդի նյութական և հոգևոր ինքնապահպանման համար[38]:

Ոչ թե արտագաղթել, այլ ստիպել իշխանություններին լուծելու խնդիրների այս համախումբը: Արտագաղթով ոչ միայն հարց չես լուծում (եթե, իհարկե, արտագաղթն այս արագությամբ շարունակվի, ապա կլուծվեն ազգային բոլոր խնդիրները, որովհետև ո՛չ հայրենիք կմնա և ո՛չ էլ այնտեղ ապրող ազգ), այլև քանդում ես պետության պահպանման, դրանով իսկ ազգի անվտանգության ու գոյության հիմքերի հիմքը: Այդ ամենի հետևանքով պետությունը ազգային անվտանգության սուբյեկտից փոխարկվում է օբյեկտի:

---

[35] Տե՞ս ***Գ. Նժդեհ,*** Ցիշի՛ր պատերազմը // Բ հրատարակություն, էջ 78-90:
[36] ***Գ. Նժդեհ,*** Ցիշի՛ր պատերազմը // Բ հրատարակություն, էջ 91:
[37] Նույն տեղում, էջ 89:
[38] Տե՛ս նույն տեղում, էջ 66:

2.3 Հայ եկեղեցու և կրոնական այլ հարանվանությունների գաղափարախոսության և գործունեության գնահատումը ազգային անվտանգության դիտանկյունից

Հայ եկեղեցու գործունեության համակողմանի վերլուծությունը թողնելով ապագային՝ համառոտ անդրադառնանք ազգային անվտանգության (նաև հոգևոր-բարոյական) բնագավառում նրա դերի մի քանի հանգրվանային պահերին:

Ըստ ընդունված տեսակետի՝ պետականացնելով քրիստոնեությունը՝ հայոց արքունիքը հույս ուներ, որ ձեռք բերելով գաղափարական հզոր զենք՝ կարող է համախմբել կենտրոնախույս նախարարական ուժերին թագավորի շուրջ և ստեղծել ուժեղ կենտրոնաձիգ իշխանություն, որը հնարավորություն կտար դիմագրավելու հռոմեապարսկական նվաճողական քաղաքականությանը և հպատակեցնելու կենտրոնախույս նախարարական տներին: Արդարացրե՞ց այդ հույսերը քրիստոնեությունը: Դատելով հետևանքներից՝ ո՛չ. նույն դարում Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմի միջև, իսկ 428 թ. կորցրեց պետական անկախությունն ընդհանրապես, որում, ըստ որոշ հետազոտողների, քիչ չէր նաև եկեղեցու դերը[39]:

Պետականության կորստից հետո Հայաստանում, իսկ հետագայում նաև գաղթօջախներում ժողովրդի միակ տերն ու տնօրենը դարձավ հայ եկեղեցին:

Երկրում ստեղծվեց ինքնատիպ կրոնապետություն, որը պահպանվեց մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Ինչո՞ւ ինքնատիպ, որովհետև Հայաստանում իշխում էին օտար տերերը, որոնք հայ եկեղեցուն ժողովրդի ներքին կյանքի կարգավորման արտոնություն էին տվել: Եկեղեցին ոչ միայն իրականացնում էր գաղափարական, այլև վարչատնտեսական, հասարակական վարքի կարգավորման և հսկողության, ծիսապաշտամունքային պրակտիկայի միջոցով ժողովրդին ներքին ու արտաքին տիրողների (որոնց մեջ էր նաև ինքը) հպատակության մեջ պահելու գործառույթները:

Հայ եկեղեցին դարձավ յուրահատուկ միջնորդ իշխող տերության և հայ ժողովրդի միջև: Փաստորեն թուրքական, պարսկական, նվազ չափով՝ ռուսական տերությունները հայ ժողովրդի վերահսկողությունը, հպատակության մեջ պահելն իրականացնում էին եկեղեցու միջոցով: Հայ եկեղեցին այդ խնդիրը հաջողությամբ լուծելու համար գործադրեց քրիստոնեության գաղա-

[39] Տե՛ս *Հ. Դավթյան*, Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը (Հայաստանյաց առաքելական եկեղեցին եւ մեր պատմության ընթացքը), Եր., 2007, էջ 277-278, *Գ. Հովհաննիսյան,* Հայոց տերերը, Եր., 2012, էջ 18, 289:

փարական ողջ զինանոցը, մասնավորապես՝ «չարին չհակառակվելու», «թշնամուն սիրելու», մարմնավոր և հոգևոր տերերին ենթարկվելու պատվիրաններն ու պահանջները:

Վերլուծելով քրիստոնեության գաղափարական էությունը, հատկապես՝ «չարին չհակառակվելու» և «թշնամուն սիրելու» պատվիրանները՝ Ռաֆֆին, Մ. Մամուրյանը, Ղ. Աղայանը այն կարծիքն էին հայտնում, որ դրանք քաղաքական հսկայական վնաս են պատճառել և բացասական դեր կատարել հայ ժողովրդի կյանքում: Ղ. Աղայանի կարծիքով՝ «Չարին հակառակ չկենալը, անճարակության, թուլության և ստրկության հետևանք է. այսինքն՝ չարին հակառակ չկենալը առաքինություն չէ, այլ անկարողի խոհեմություն... Չարին հակառակ չկենալը շատ անգամ խոհեմություն էլ չէ, այլ անբարոյականություն, անբանականություն, անասնություն, որովհետև թույլ է տալիս չարերին, որ բարիների հետ վարվեն իրանց ուզածի պես... Չարին հակառակ չկենալը՝ ուղիղ և բարոյական վարդապետություն չէ... դա դեմ է և՛ խելքի, և՛ բարոյականության»[40]:

Հայ հասարակական մտքում մեկ այլ տեսակետ էլ է դիտվել, ըստ որի Հայ եկեղեցին, սխալ ըմբռնելով քրիստոնեական սիրո խորհուրդը, դարեր շարունակ պատճառ է դարձել «մեր ժողովուրդի անօրինակ ողբերգութեան», որովհետև թուլությունը առաքինություն համարելով, սպանել է «մեր ժողովրդի կամքը»: «Սխալուել, չարաչար սխալուել է մեր Եկեղեցին՝ «տնանկ»-ների եւ «սնանկ»-ների բարոյականութիւն քարոզելով»[41],- գրում է Գ. Նժդեհը: Նրա կարծիքով՝ մեզանում պահպանվելու համար քրիստոնեությունը պետք է դաստիարակի այնպիսի ժողովուրդ, որն ընդունակ «լինի արհամարհել մահը՝ յանուն իր սեփական գոյութեան:

Այսպիսով կ'ապրի ոչ միայն հայութիւնը, այլ եւ Հայոց եկեղեցին: ***Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովուրդի - ահա եւ Հայ եկեղեցոյ նոր հաւատքամքը:*** Չընդունե՞ց այս ճշմարտութիւնը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամէն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանութեան գործին - կործանուած է դա»[42]:

Բայց չմոռանանք նաև, որ հայ եկեղեցին քարոզել և գործադրել է այս պատվիրանները ժողովրդին արտաքին նվաճողներին, իշխողներին հնազանդության և հպատակության մեջ պահելիս: Փոխարենը՝ բոլորովին անտեսել կամ մոռացել է դրանք սեփական շահերը պաշտպանելիս. այստեղ եկեղեցին հարձակվող է, անխնա, Քրիստոսի որևէ պատվիրան չհիշող ու չկիրառող: Նա Հայաստանում հիմքից բնաջնջեց պավլիկյան և թոնդրակյան

---

[40] ***Ղ. Աղայան***, Մի կալ հակառակ չարի, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Երևան, 1963, էջ 64-65:

[41] ***Գ. Նժդեհ,*** Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Հատընտիր, էջ 74-75:

[42] Նույն տեղում:

շարժումները, հալածեց և բանադրեց բողոքական հայերին: Հիմա էլ չի հիշում, երբ պայքարում է աղանդավորների և բոլոր նրանց դեմ, ովքեր հայ եկեղեցու հետևորդ չեն:

Եթե այդպես է, ապա պետք է ընդունենք, որ հայ եկեղեցու դերն ազգի անվտանգության ապահովման ոլորտում եղել է խիստ հակասական. մի կողմից՝ գաղափարական կապերով միավորել է, ծիսապաշտամունքային պրակտիկայի միջոցով համախմբել ազգին՝ նպաստելով միությանն ու հակազդել ձուլմանը, այսինքն՝ ապահովել է ազգի գոյությունը և պահպանությունը, իսկ մյուս կողմից՝ քարոզած գաղափարախոսությամբ թուլացրել է ազգի դիմադրողական ոգին, դրանով իսկ՝ վտանգել ազգի անվտանգությունը:

Հայ եկեղեցին դրական դեր է կատարել և, ըստ էության, ազգային անվտանգությունն ապահովել է մշակութային գործունեությամբ:

Առանձնացնենք այդ գործունեության մի քանի կողմ: Դեռևս V դարում կանգնելով պետականության կորստի փաստի առջև՝ Հայաստանում զինված պայքարին ու քաղաքական մաքառումներին զուգընթաց մշակութային այնպիսի գործունեություն ծավալվեց, այնպիսի հզոր մշակույթ ստեղծվեց, որ պետականության կորստից հետո դարեր շարունակ այն դարձավ ազգային ինքնության և ինքնապահպանության ամենահիմնական կռվաններից մեկը: Այդ գործընթացներին իր էական նպաստն է բերել հայ եկեղեցին (ակտիվ մասնակցություն գրերի գյուտին, ինքնուրույն գրականության ստեղծմանը և այլն):

Դարեր շարունակ Էջմիածնի ձեռքում են գտնվել ազգային կյանքի ներքին գործերի ղեկավարությունը, հավատը, լեզուն, գրականությունը, կրթական գործը: Վանքերը մշակութային կյանքի կենտրոններ են եղել: Այդ վանքերին կից դպրոցներում են հայ մանուկները ազգային կրթություն ստացել և դաստիարակվել: Եկեղեցին Հայաստանում նպաստել է հասարակական կյանքի կարգավորման ավանդական բարոյական-սովորութային ձևերից իրավաքաղաքական ձևերի անցմանը, մշակույթի ավելի բարձր՝ քաղաքակրթական մակարդակի ձևավորմանը:

Հայ եկեղեցու սարկավագը, քահանան կատարել են նաև ուսուցչի, դաստիարակի, կառավարչի պարտականություններ, իսկ աբեղան, վարդապետը, եպիսկոպոսը, կաթողիկոսը զբաղվել են նաև մանկավարժությամբ, աստվածաբանությամբ, լայն իմաստով՝ մշակութային գործունեությամբ: Այդ հոգևորականների շնորհիվ են ստեղծվել մեր կրոնաաստվածաբանական միտքը, մատենագիտության, պատմագիտության, փիլիսոփայության զգալի մասը, և այդ ամենով ապահովվել է մեր մշակույթի զարգացման անընդհատականությունը:

Երկար ժամանակ կրոնն է դիտվել մեր պատմության անջատված օղակները միավորողը: Երկար ժամանակ հայի հայրենիքը նրա եկեղեցին է

համարվել: Այս ամենով էլ հայ եկեղեցին դարեր շարունակ դարձել է ազգային անվտանգության ապահովման և՛ սուբյեկտը, և՛ օբյեկտը:

Այսօր ազգային պետության առկայությունը էապես փոխել է եկեղեցու գործառույթները երկրի ներսում և դրանից դուրս՝ սփյուռքում: Երկրի ներսում եկեղեցու հիմնական խնդիրը հավատացյալ ժողովրդի կրոնական պահանջմունքների բավարարումն է, հոգևոր-բարոյական վիճակի բարոյականացմանը նպաստելը, բայց որպեսզի այդ խնդիրն իրականացնի, պետք է.

- եկեղեցու ներքին կյանքը բարոյականացնելու խնդիրը լուծի,
- ազգայնացնի իր արժեհամակարգը,
- իր քարոզչության մեջ հիմնավորի, որ մարդու փրկության ուղին անցնում է ազգին ծառայելու մայրուղիով,
- հուդայաքրիստոնեություն քարոզելու փոխարեն ազգային քրիստոնեություն քարոզի,
- ազգին ծառայելը ոչ թե բեռ, այլ հաճելի պարտականություն դիտի:

Փոքր-ինչ այլ են հայ եկեղեցու գործառույթները սփյուռքում: Այստեղ հավատացյալ ժողովրդի կրոնական պահանջմունքները բավարարելուց բացի՝ եկեղեցին իրականացնում է նաև տվյալ երկրներում ապրող հայերի գաղափարական միավորման, եկեղեցու շուրջ համախմբման, հայապահպանության, հետևաբար՝ ազգային անվտանգության խնդիրները:

Այսօր մտավորականության մի զգալի մասն այն համոզմանն է, որ սերնդի հոգևոր-բարոյական, արժեքային դաստիարակության խնդիրը պետք է հանձնել եկեղեցուն: Այս մոտեցումը, կարծեք, դառնում է իշխող: Կարծում ենք, ճիշտ չէ, երբ «հոգևոր-բարոյական արժեքներ» ասելով՝ հասկանում են միայն կրոնաեկեղեցականը և առաջարկում հասարակության, հատկապես՝ մատաղ սերնդի հոգևոր-բարոյական դաստիարակության գործն ամբողջությամբ հանձնել եկեղեցուն, որովհետև.

1. Հոգևոր-բարոյական ոլորտը շատ ավելի լայն է, քան կրոնականը, կրոնն այդ ոլորտի տարրերից մեկն է միայն:
2. Եկեղեցում հոգևոր-բարոյական դաստիարակությունը բեկվում է աստծո նկատմամբ հավատի, գերբնականի հանդեպ ունեցած վախի ու պատասխանատվության ոսպնյակով, ինչն իրական, գիտակցված, ազատ ընտրության ու բարոյականության հետ որևէ աղերս չունի:
3. Միանգամայն սխալ է մեզանում հաճախ հնչող (նույնիսկ հայտնի մտավորականների կողմից) այն տեսակետը, թե ով հավատից դուրս է, նա կրոնից է դուրս, իսկ կրոնից դուրս գտնվողը բարոյականությունից է դուրս:

Բարոյականության հիմքը կրոնը չէ, և ոչ էլ Աստված է պայմանավորում բարոյականությունը:

Կրոնը և աթեիզմը բարոյականության անհրաժեշտ պայմաններ չեն, դրանք մարդկանց բարոյական առավելություն չեն տալիս: Ոչ թե կրոնական զգացմունքներն են մարդուն լավը դարձնում, այլ՝ ազգի, հայրենիքի, մարդկանց նկատմամբ սեփական պարտքի ու պատասխանատվության գիտակցումը, սեփական արժանապատվության զգացումը: Դա է պատճառը, որ ինչպես հավատացյալների, այնպես էլ անհավատացյալների միջավայրում եղել են ու կան թե՛ հոգեկան բարձր հատկանիշներ ունեցող, և թե՛ հոգեզուրկ անձնավորություններ: Եվ դա բնական է, որովհետև բարոյականության և անբարոյականության սահմանները չեն համընկնում կրոնական ու ապակրոն գիտակցության սահմաններին: Կրոնը մարդու հոգևոր կյանքի միակ հնարավոր ձևը չէ: Աստծո հավատի վրա հենված բարոյականության կողքին գոյություն ունի նաև աշխարհիկ հումանիզմի վրա հենված ապակրոն բարոյականություն: Երկուսի խնդիրն էլ անբարոյականության, բարոյական անկման դեմ պայքարելն է:

Եվ ամենակարևորը՝ մենք մեր՝ ուրույն ազգային բարոյականության լավագույն ըմբռնումները պետք է վեր հանենք, կյանքի կոչենք: Ճիշտ են այն հեղինակները, որոնք առաջարկում են ստեղծել հայ մարդ-քաղաքացու բարոյականություն և բարոյական կոդեքս[43]:

Բացի հայ եկեղեցուց՝ Հայաստանում գործում են նաև ավանդական եկեղեցիներ (կաթոլիկ, ուղղափառ, ասորի), բազմաթիվ կրոնական ուղղություններ (վաղ բողոքական) և աղանդավորական խմբեր: Վերջին 30–40 տարիների ընթացքում և, հատկապես, ԽՍՀՄ փլուզումից հետո՝ հայ ազգային հասարակական կյանքը վրդովող երևույթներից մեկը օտարամուտ ու կասկածելի ծագման կրոնական ուղղությունների՝ տարեցտարի ուժգնացող թափանցումն է Հայաստան՝ աղմկոտ գործունեությամբ: Այդ ուղղություններին ժողովուրդն անվանում է «աղանդ», իսկ գիտական գրականության մեջ՝ նաև ոչ ավանդական պաշտամունքներ, նոր կրոններ, պարականոն (եկեղեցու կողմից չկանոնականացված, չօրինականացված) հավատալիքներ, այլընտրանքային կրոններ և այլն: Դրանց զգալի մասն իր բնույթով քրիստոնեական է (համեմատաբար մոտ կամ հեռու (մարգինալ) է գտնվում ավանդական քրիստոնեական եկեղեցիներին), մյուսներն արևելյան բնույթի են, երրորդները՝ սինկրետիկ, ունիվերսալ միավորումներ, նոր դարի գաղտնագիտական (օկուլտիստական) ուսմունքներ և այլն:

Այսօր աղանդավորությունը մեզանում հանդես է գալիս իր ողջ խայտաբղետությամբ: Նրանց մի մասի հրահրիչ, սադրիչ, կպչուն գործունեությունը, կրոնադավանական հողի վրա կատարած արարքները (ինքնասպա-

[43] Տե՛ս ***Մ. Գաբրիելյան, Ա. Դաբաղյան, Ա. Թադևոսյան, Ն. Մարգարյան,*** Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, էջ 45:

նություն, սպանություն, հոգեորսություն և այլն) հասարակական լայն հնչողություն, արձագանք են ստանում, որը երբեմն ժողովուրդն արտահայտում է այդ աղանդների գործունեությունն արգելելու պահանջով: Արգելքի փոխարեն՝ իշխանությունները գրանցեցին Եհովայի վկաներին, ինչն առաջացրեց ոչ միայն եկեղեցու, այլև ժողովրդի դժգոհությունը[44]:

Հայաստանում աղանդավորության ծավալած գործունեությունը խիստ վտանգավոր է ոչ միայն հոգևոր-բարոյական, այլև ազգային անվտանգության տեսանկյունից, որովհետև այդ կառույցները.

1. Իրենց ապազգային քարոզչությամբ թուլացնում են հայի էթնիկ ինքնագիտակցությունը: Որոշ աղանդներ ազգային պատկանելությունը համարում են պարզ պատահականություն և զուտ ֆիզիոլոգիական երևույթ: Այդ քարոզչությունը և դրան համապատասխան գործունեությունը թուլացնում են հայի ոգին, ազգային «էգոն», դիմադրողական ուժը, ճանապարհ բացում ապազգային գործունեության, ազգային խնդիրների լուծման մեջ անտարբերության: Աղանդավորական գաղափարախոսության մեջ մարդն ազգի ու հայրենիքի կրողն ու ներկայացուցիչ չէ, այլ դարի ու ժամանակի:
2. Պառակտում են ազգն իրենց պահանջներով, կպչուն գաղափարախոսությամբ, ծեսերով:
3. Պայքարում են եկեղեցական այնպիսի տոների և արարողությունների դեմ, որոնցով մարդն ընդգծում է իր պատկանելությունը տվյալ էթնոմշակութային հանրույթին (մոմավառություն, մատաղ, կնունք, պսակադրություն):
4. Որոշ աղանդների երիտասարդներ հրաժարվում են բանակում ծառայելուց, ազգային պետական խորհրդանիշներն ընդունելուց:
5. Ղեկավարվում են արտասահմանյան կենտրոններից, որոնք այստեղ կրոնական քարոզչությունից բացի՝ կարող են ունենալ նաև այլ շահեր, հետաքրքրություններ:

Հենց այդ պատճառով էլ այդ կառույցների գործունեությունը և քարոզչությունը ՀՀ-ում դարձել է ոչ միայն հայոց հոգևոր-բարոյական միասնությունը խարխլող, այլև բուն իմաստով ազգային անվտանգության սպառնալիք:

---

[44] Աղանդների Հայաստան թափանցելու, Հայաստանում նրանց ծավալած գործունեության, աղանդների դավանաբանության և ծիսապաշտամունքային առանձնահատկությունների վերլուծությունը տե՛ս ***Ա. Սարգսյան,*** Հոգևոր ճնշման ճիրաններում (Աղանդավորության ազգային-հասարակական գնահատման փորձ), Եր., 1997, նույնի՝ Աղանդավորությունը Հայաստանում (տարածման դրդապատճառները և հաղթահարման ուղիները) // Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կրթության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևանի Գլաձոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և մագիստրանտների երրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2007, էջ 265-281:

Այստեղից էլ՝ առաջարկվող այն միջոցառումները, որոնցով հնարավոր է դիմակայել աղանդավորության քարոզչությանը և գործունեությանը: Դրանց մեջ առանձնացնենք կրոնական և ազգային-քաղաքական կողմերը: Կրոնական տեսակետից խնդիրը միայն եկեղեցունն է: Եկեղեցին պետք է այնպիսի գործունեություն ծավալի (այդ մասին՝ քիչ հետո), այնպիսի նկարագիր և հեղինակություն ունենա, որ կրոնական պահանջներ ունեցողները նախապատվությունը չտան աղանդին:

Բայց աղանդների գործունեության հետևանքները նաև ազգային-քաղաքական են, և, այս առումով, ճիշտ չէ աղանդների ազդեցության հաղթահարումը միայն եկեղեցու պարտականություն դիտելը: Անշուշտ, եթե անհատը, իր կրոնական պահանջմունքները բավարարելուն զուգահեռ, մնար լավ հայ, քաղաքացի, կատարեր ազգային-քաղաքացիական պարտականությունները, ապա որևէ մեկը նրան մեղադրելու իրավունք չէր ունենա, բայց փորձը ցույց է տալիս, որ աղանդավորները դադարում են գործուն քաղաքացի լինելուց, երբեմն՝ դառնում կրոնախև, հրաժարվում ազգային սովորույթներից ու պարտականություններից, բանակում ծառայելուց: Ճիշտ է, ապրում են երկրի վրա, բայց, կարծեք, երկնքի քաղաքացի են, խոսում են հայերեն, բայց գիտակցությամբ, վարքագծով, կարծեք, և՛ հայ են, և՛ ոչ: Այսպես էլ ազգի պառակտման, ազգի ներսում լարվածության առաջացման պատճառ են դառնում:

Ավելացնենք այն կարևոր հանգամանքը, որ բոլոր աղանդներն էլ դրսից են թափանցել, դրսից են ղեկավարվում, և դժվար է ասել, թե, կրոնականից բացի, ուրիշ ինչ շահեր են այստեղ հետապնդվում: Ահա թե ինչու նրանց գործունեությանը և գաղափարախոսությանը հակազդեցությունը, կրոնականից բացի, ձեռք է բերում ազգային-քաղաքական նշանակություն:

Այժմ, խիստ համառոտ, առաջարկվող համալիր ծրագրի մի քանի կողմի մասին:

1. Ազգային իշխանությունների գործունեություն: Իշխանությունների դերը լինելու է հստակ քաղաքականություն տանելը երեք ուղղությամբ.

ա) Օրենսդրական կատարյալ դաշտի ստեղծում՝ ներառյալ ոչ միայն խղճի ազատության ապահովումը, այլև կրոնական կազմակերպությունների գրանցման, հոգեորսության արգելման իրավական-իրավաբանական ավելի հստակ, որևէ սողանցք չթողնող ձևակերպումները:

բ) Իշխանությունները, միաժամանակ, պետք է իրականացնեն ուղղորդված սոցիալական քաղաքականություն, հրապարակային ու հասկանալի դարձնեն այն ջանքերը, որոնք ուղղված են սոցիալական արդարության հաստատմանը, մարդու իրավական պաշտպանվածությանը, աղքատության հաղթահարմանը:

գ) Պետությունը նաև պետք է առաջադրի համազգային գաղափարներ, այնպիսի գաղափարներ, որոնք ընդունակ լինեն միավորելու մարդկանց, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի սեփականությունը՝ անկախ դավանանքից, դրանց իրականացումը դիտեն ազգի գոյության նպատակ և իմաստ: Նման համազգային գաղափարների մշակման և դրանք ժողովրդի սեփականությունը դարձնելուն ակտիվորեն պետք է մասնակցեն մեր մտավորականները:

2. Եկեղեցու գործունեությունը: Որպեսզի կրոնական պահանջմունքներ ունեցող մարդը եկեղեցին նախընտրի աղանդից, մեր հոգևորականները պետք է իրենց քարոզչության և գործունեության մեջ էական շտկումներ կատարեն: Ոչ թե հեռուստախցիկի առջև նստած նախատեն մարդկանց եկեղեցի չհաճախելու, ծեսերին չմասնակցելու համար, այլ գնան դեպի ժողովուրդ: Հոգևորականները պետք է ազատվեն այն թյուր մտայնությունից, թե անցյալում կատարած ծառայությունների համար ողջ ազգով պարտք ենք եկեղեցուն, և դրա գինը ազգովի եկեղեցու հպատակ դառնալն է: Մինչդեռ հայ եկեղեցին, հոգևորականությունը այսօրվա գործունեությամբ պետք է արժանի դառնան այսօրվա հայ ժողովրդին: Նրանք պետք է առաջնորդվեն այն համոզմունքով, որ իրենք են ժողովրդի համար և ոչ թե հակառակը:

3. Մասնագետների գործունեությունը: Այս բնագավառում լուրջ դժվարություններ կան: Ակնհայտ է շիտակ կրոնագետների պակասը: Թեև մեկ տասնամյակից ավելի է, ինչ Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը շրջանավարտներ է պատրաստում, բայց նրանք դառնում են ոչ թե կրոնագետ մասնագետներ, այլ, փաստորեն, հայ եկեղեցու աշխարհիկ ջատագովներ, ինքնատիպ աշխարհիկ հոգևորականներ: Նրանք իրենց քարոզչության մեջ անաչառ չեն և պարզապես ձգտում են, Ռաֆֆու խոսքով, «հայրենի եկեղեցուց բաժանված եղբայրներին կրկին դարձնել Լուսավորչի փարախը...»: Մինչդեռ աղանդավորության խնդրում կարևորը մարդկանց մեջ ազգայնության գաղափարի արմատավորումն է, ազգային ինքնագիտակցության, հայ լինելու հպարտության զգացումի ձևավորումը, հանուն ազգային ու հասարակական իդեալների ապրելու ու գործելու մեր կյանքն իմաստավորելը. գաղափարներ, որոնց յուրացման և իրականացման աստիճանով պետք է պայմանավորվի յուրաքանչյուրիս վերաբերմունքը ամեն մի դավանության հանդեպ: Ավելին՝ աղանդի մեջ հայի որոնումը պետք է ուղեկցվի մարդու որոնմամբ: Պահանջվում է համառ, հետևողական, համբերատար, հասցեական աշխատանք: Հայհոյելով և միմյանց մեղադրելով՝ խնդիր չի լուծվում:

Հայաստանի Հանրապետությունում, կրոնական ուղղությունների բազմազանությամբ հանդերձ՝ հասարակության մի հատվածի կրոնական պահանջմունքների բավարարումը թերատ է. այդ մարդիկ եկեղեցուց հիասթափված են, իսկ աղանդները վախեցնող և վանող են:

ԳԼՈՒԽ 3

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

(ԿԻՐԱՌԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

3.1 Հոգևոր-բարոյական անվտանգության ձևավորման տեղեկատվական բաղադրիչները

Վերջին տարիներին բազմակողմանի քննարկման առարկա է դարձել տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը, որը գլոբալացման, համացանցի զարգացման, տեղեկատվական հասարակությունների, ինչպես նաև գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում իր նշանակությամբ հավասարվել է ռազմական, տնտեսական և քաղաքական ոլորտների անվտանգության խնդիրներին: Տեղեկատվական տեխնոլոգիաները նաև կերպափոխում են միջանձնային հարաբերությունների բնույթը, իսկ տեղեկատվական հոսքերը վճռորոշ նշանակություն ունեն ինչպես առանձին երկրներում, այնպես էլ գլոբալ մակարդակով ձևավորվող հասարակական կարծիքի վրա: Այդ պատճառով էլ գովազդը, քարոզարշավները, քաղաքական տեխնոլոգիաները, PR և տեղեկատվական տարաբնույթ արշավները դարձել են ժամանակակից հասարակական գործընթացների բնութագրական գիծը:

Ազգային անվտանգության ապահովման շրջանակներում տեղեկատվական ռեսուրսների, տեխնոլոգիաների և տեղեկատվության դերի բարձրացումը առաջին պլան է մղել հոգևոր-բարոյական անվտանգության տեղեկատվական բաղադրիչների հարցերը: Հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվական ոլորտում անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանությունն է ներքին և արտաքին սպառնալիքներից: Հետևաբար, տեղեկատվական ոլորտում ազգային շահերի անվտանգության ապահովումն ու ամրապնդումը երկրի ազգային անվտանգության համակարգի կարևորագույն գործոններից են:

Հայաստանի Հանրապետության հոգևոր-բարոյական անվտանգությունը ևս պայմանավորված է տեղեկատվական անվտանգության ապահովման մակարդակով, իսկ տեխնիկական առաջընթացի պայմաններում այդ կախվածությունն անընդհատ մեծանում է: ՀՀ տեղեկատվական անվտան-

գությունը ազգային շահերի պաշտպանվածության կայուն իրավիճակն է տեղեկատվական ոլորտում, որը որոշակիացվում է անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված ընդհանրությամբ: Հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից տեղեկատվական ոլորտում ազգային շահերին են վերաբերում, առաջին հերթին, ՀՀ հոգևոր վերածնունդի ապահովումը, հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրության ու մարդասիրության ավանդույթների, երկրի մշակութային ու գիտական ներուժի պաշտպանությունն ու ամրապնդումը:

Տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական խնդիրներն են.

1. Տեղեկատվական ոլորտում առկա սպառնալիքներից ազգային շահերի պաշտպանությունն ապահովող պետական միասնական քաղաքականության ձևավորումն ու իրագործումը:
2. Երկրի հոգևոր վերածնունդը, ավանդական-հոգևոր արժեքների պահպանումը:
3. Ազգային-մշակութային ժառանգության ամբողջականության և պաշտպանվածության ամրապնդումը:
4. Զանգվածային լրատվության միջոցներով ազգային մշակույթի, հոգևոր-բարոյական արժեքների քարոզումը:
5. Զանգվածային գիտակցության մանիպուլյացիոն (ձեռնածուական) մեխանիզմների վնասակար ազդեցության կանխարգելումը:

Նշված խնդիրների լուծմանը խանգարում են որոշ գործոններ ու հանգամանքներ, որոնք ընդհանրացվում են «տեղեկատվական անվտանգության սպառնալիքներ» հասկացությամբ: Տեղեկատվական անվտանգության հոգևոր-բարոյական բնույթի հիմնական սպառնալիքներից են.

- հոգևոր արժեքների արժեզրկումը, հասարակության արժեքային համակարգին հակասող հոգևոր ու բարոյական նորմերի, բռնության վրա հիմնված զանգվածային մշակույթի քարոզումը,
- երկրի բնակչության հոգևոր, բարոյական ու ստեղծարար ներուժի նվազումը,
- ՀՀ տեղեկատվական և հոգևոր միասնական տարածության կազմալուծումը, հասարակության հոգևոր կյանքին զգալի վնաս հասցնող կրոնական աղանդների և տարբեր կազմակերպությունների ակտիվացումը,
- ազգային շահերին համապատասխանող տեղեկատվական հստակ քաղաքականության բացակայությունը,
- ՀՀ տեղեկատվական համակարգերի զարգացումը և բնականոն գործունեությունը խոչընդոտող արտաքին նպատակաուղղված միջամտությունը,

- տեղեկատվական տարածության թափառող չկարգավորված, քաոսային տեղեկատվական հոսքերը, որոնք թեև հատուկ ուղղված չեն ՀՀ-ի դեմ, բայց բացասական ազդեցություն են գործում հասարակական գիտակցության վրա,
- տեղեկատվական պատերազմների վարման մեթոդների անընդմեջ կատարելագործումն ու տեղեկատվական զենքի օգտագործումը:

Այսօր շատ է խոսվում տեղեկատվական զենքի և պատերազմի նոր դեմքի մասին: Քննարկումների հիմնական էությունն այն է, որ ներկայումս պատերազմական գործողություններ հնարավոր է վարել ավելի «քաղաքակիրթ» ձևով:

«Տեղեկատվական պատերազմ» տերմինն առաջին անգամ գործածել է ֆիզիկոս Թոմաս Ռոնը՝ 1976 թ. Boeing ընկերության համար իր պատրաստած «Զենքի համակարգերը և տեղեկատվական պատերազմը» հաշվետվության մեջ[45]: Ռազմական տեսաբանների ուշադրության կենտրոնում «տեղեկատվական պատերազմ» տերմինը հայտնվեց XX դարի 80-ական թթ.՝ կապված սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ զինված ուժերի առջև դրված նոր խնդիրների հետ, և հանդիսացավ ամերիկյան ռազմական տեսաբաններ Գ. Էքլզի ու Գ. Սամերզի ուսումնասիրությունների արդյունքը[46]: 1996 թ. վերջին Պենտագոնի փորձագետ Ռոբերտ Բանկերը գիտաժողովներից մեկի ընթացքում ներկայացրեց XXI դարի ԱՄՆ զինված ուժերի ռազմական նոր դոկտրինին նվիրված զեկույց, ըստ որի՝ նոր պատերազմներում հարձակման հիմնական օբյեկտներն են հակառակորդի տեղեկատվական ենթակառուցվածքը և հոգեկան աշխարհը (տե՛ս աղյուսակ 1):

1998 թ. հոկտեմբերին ԱՄՆ ՊՆ-ը գործողության մեջ դրեց «Տեղեկատվական պատերազմի միավորված դոկտրինը»[47]: Այդ փաստաթղթում, որի հիմքում դրված են RAND «ուղեղային կենտրոնի» մշակած դրույթները, տրվում է հետևյալ սահմանումը. ***«Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է հակադիր կողմի պետական ու ռազմական կառավարման համակարգի, ռազմաքաղաքական ղեկավարության վրա, ինչը արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական ներգործություն նախաձեռնող կողմի համար բարենպաստ որոշումների ընդունման, իսկ զինված բախման ժամանակ լիովին անդամալուծել հակառակորդի կառավարական ենթակառուցվածքի գործառությունը»***[48]:

---

[45] Տե՛ս ***Бедрицкий А.*** Информационная война: концепции и их реализация в США, М., 2008, էջ 98:

[46] Տե՛ս ***Гриняев С.*** Информационная война: история, день сегодняшний и перспектива, http://www.agentura.ru/equipment/psih/info/war/

[47] Այդ մասին տե՛ս ***Гриняев С.*** Поле битвы - киберпространство, Мн., 2004:

[48] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ***Арутюнян Г.*** Цивилизационный и идеологический контекст информационной безопасности, "О некоторых проблемах информационной безопасности", Ер., 2009, էջ 7-11:

Աղյուսակ 1

Տեղեկատվական զենքի կիրառման ոլորտները

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ	
Ռազմական ոլորտ	***Սոցիալական, քաղաքական և հոգևոր ոլորտներ***
Հարձակման օբյեկտ	
Զորքի կառավարման համակարգ, հակաօդային պաշտպանության միջոցներ, կապ, հակահրթիռային պաշտպանություն, զորքի գործողությունների ուղղորդման և ռազմական որոշումների ընդունման համակարգչային համալիրներ	Ազգային ինքնագիտակցություն, բնակչության տրամադրություններ, բարոյական վիճակ, արժեքային և աշխարհայացքային դիրքորոշումներ
Միջոցներ	
Հակառակորդի տեղեկատվական օբյեկտների ճնշման ու քայքայման ֆիզիկական միջոցներ	Տեղեկատվության աղավաղում ԶԼՄ-ներում, ասեկոսեներ, ապատեղեկատվություն, ազդեցություն մարդու հոգեկանի վրա
Նպատակ	
Կիրառվում է ռազմական տակտիկական գործողություններում արագ հաջողության հասնելու համար	Կիրառվում է երկարաժամկետ ռազմաքաղաքական հակամարտության, այդ թվում և զինված գործողությունների անցկացման փուլից դուրս, հաջողության հասնելու համար
Հասանելի արդյունք	
Հակառակորդի զորքերի՝ արդյունավետ դիմադրության ընդունակության կորուստ	Հակառակորդի պաշտպանունակության և պետության քաղաքական կայունության ընդհանուր նվազում

Այդ գործողությունների վարման հիմնական մեթոդներ են համարվում բարոյական կայունության, հույզերի ու որոշումների ընդունման շարժառիթների վրա ազդող հոգեբանական գործողությունները, ակտիվ միջոցառումները կամ ապատեղեկատվությունը, հակահետախուզությունը կամ անվտանգության ապահովման գործողությունները, էլեկտրոնային պայքարը և գործողությունները համակարգչային ցանցերում: Թվարկված հինգ մեթոդներից առավել կարևոր են հոգեբանական գործողությունները, որոնք պլանավորված տեղեկատվական-հոգեբանական ներգործություն են օտարերկրյա լսարանի վրա՝ նպատակ ունենալով նրա մոտ առաջացնել ցանկալի հուզական ռեակցիա, փոխել մոտիվացիան և նպատակային դիրքորոշումները, ուղղորդել կառավարությունների, կազմակերպությունների, խմբերի ու անհատների վարքը:

XX և XXI դդ. տեղեկատվական-հոգեբանական պատերազմները հա-

ղորդակցային տեխնոլոգիաների շնորհիվ մտել են զարգացման նոր փուլ[49]: Ուստի կարող ենք ասել, որ պատերազմում հաղթանակ կարող է տանել այն երկիրը, որում առավել զարգացած է քարոզչությունը: «Առաջին տեղն են գրավել ճակատամարտերը մարդկանց մտքերի, «ճիշտ» հասարակական կարծիքի ստեղծման, տեղեկատվական հոսքերի վերահսկման համար»[50]: Այլ կերպ ասած՝ ***հասարակական կարծիքը դիտարկվում է որպես կարևորագույն ռազմական-ռազմավարական ռեսուրս:***

Այսպիսով, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմը տեխնիկական ու հոգևոր-հոգեբանական ինֆոգեն սպառնալիքների իրականացումն է: Եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը դիտարկվում էր որպես կարևոր, բայց հավելյալ բաղադրիչ ավանդական միջոցների (միջուկային, կենսաբանական և այլն), ապա երկրորդ սերնդում ձեռք է բերում լիովին ինքնուրույն նշանակություն (տե՛ս աղյուսակ 2): Այս տեսակի տեղեկատվական պատերազմների օգնությամբ լուծելիք խնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալը.

- անհոգիության ու անբարոյականության մթնոլորտի, հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորում,
- երկրի բնակչության սոցիալական խմբերի հասարակական գիտակցության ու քաղաքական կողմնորոշման մանիպուլյացիա քաղաքական լարվածություն և քաոս ստեղծելու նպատակով,
- անվստահության ու կասկածամտության տարածում, կուսակցությունների, միավորումների և շարժումների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, նույնիսկ քաղաքական պայքարի սրում, փոխոչնչացման հրահրում,
- սոցիալական, քաղաքական, ազգային ու կրոնական բախումների հրահրում,
- ցույցերի, զանգվածային անկարգությունների և տնտեսական ու սոցիալական բողոքի այլ գործողությունների հրահրում,
- պետության ու ազգի միջազգային վարկաբեկում, մյուսների հետ նրանց հարաբերությունների վատթարացում,
- քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում ազգի ու պետության կենսականորեն կարևոր շահերի վնաս:

---

[49] Ազդեցության գործողությունների հայեցակարգը ձևակերպվել է XX դարի 90-ական թթ., բայց դրա հիմքում ընկած է առանց բացահայտ զինված հակամարտության մեջ մտնելու՝ դիմադրության և հաղթանակի կամքը կոտրելու ռազմավարությունը, որն առաջին անգամ նկարագրել է մ.թ.ա. III դարի չին մեծ մտածող Սուն-Ցզին «Պատերազմի արվեստը» երկում: Սուն-Ցզիի հայեցակարգի հիմքում ընկած է թշնամուն կառավարելու սկզբունքը, որը ստեղծում է հեշտ հաղթանակի հնարավորություն:

[50] ***Зелинский С.***, Информационно-психологические войны (современные психотехнологии манипулирования), http://psyfactor.org/lib/zln3.htm

Աղյուսակ 2

Առաջին և երկրորդ սերունդների տեղեկատվական պատերազմներ

	ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ	ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
11.	Պետական ու զինվորական ենթակառուցվածքի տարրերի կրակային ճնշում (պատերազմի ժամանակ)	Անհոգիության ու անբարոյականության մթնոլորտի, հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում
22.	Ռադիոէլեկտրոնային պայքարի անցկացում	Քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով հասարակական գիտակցության և սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշումների մանիպուլյացիա
33.	Հետախուզական տեղեկատվության ստացում կապուղիներով փոխանցվող տեղեկատվական հոսքերի զավթման և ապածածկագրման միջոցով, ինչպես նաև կողմնակի ճառագայթումներով	Բախումների, անվստահության, կասկածամտության հրահրման, քաղաքական պայքարի սրացման նպատակով կուսակցությունների, միավորումների և շարժումների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, նույնիսկ քաղաքացիական պայքարի հրահրում
44.	Տեղեկատվական ռեսուրսների չսանկցավորված հասանելիության իրականացում՝ դրանց հետագա աղավաղմամբ	Սոցիալական, քաղաքական, ազգային ու կրոնական բախումների հրահրում
55.	Որոշումներ ընդունող անձանց մտադրությունների գնահատականների վրա ազդելու համար ապատեղեկատվության ձևավորում և հակառակորդի տեղեկատվական ուղիներով կամ գլոբալ ցանցերով զանգվածային տարածում	Պետության միջազգային հեղինակության վարկաբեկում, այլ երկրների հետ նրա համագործակցության խզում

Այս տեղեկատվական պատերազմներում խոսքն աշխարհակարգի պարտադրման որոշակի մոդելի մասին է, որը կոչված է ապահովելու մարդկային վարքագծի ցանկալի տեսակների գոյությունը:

3.2 Տեղեկատվական մշակույթի դերը մարդ-անհատի հոգևոր-բարոյական անվտանգության ձևավորման գործում

Տեղեկատվական հասարակությունում կյանքի ցանկալի չափանիշներն ուժով չեն պարտադրվում, այլ նրբորեն քարոզվում և տարածվում են նոր տեխնոլոգիաների, այսպես կոչված, «մետատեխնոլոգիաների» օգնությամբ: «Մետատեխնոլոգիաների» ներգործության հիմնական օբյեկտն է զանգվածային գիտակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ ժամանակակից ԶԼՄ-ները, առաջին հերթին, էլեկտրոնային, որոնք ձևավորում են տեղեկատվական տարածությունը, զանգվածային գիտակցության վրա ազդելու տեխնոլոգիապես առավել արդյունավետ միջոցն են: Տեղեկատվական տարածության և հասարակական կարծիքի նոր կարգավիճակը ներկայումս ակտիվորեն օգտագործվում է արտաքին քաղաքականության մեջ: Ռազմաքաղաքական նպատակների ձեռքբերումն այսօր հնարավոր է հասարակական կարծիքի ձևավորման միջոցով: Օրինակ՝ ամերիկյան վերլուծաբանները խոսում են մեդիա-պատերազմի մասին, որը քաղաքական որոշումներ ընդունող մարդկանց վրա ունենում է ժամանակավոր հզոր ճնշում՝ հնարավորություն չտալով վերլուծելու ընդունվելիք որոշումների հետևանքները և ժամանակ չտրամադրելով խորհրդատվության համար:

«Զանգվածային լրատվության միջոցներ» հասկացությունն աստիճանաբար տեղը զիջում է նոր՝ «զանգվածային հեռահաղորդակցության միջոցներ» հասկացությանը, որը ավանդական ԶԼՄ-ները և զանգվածային լրատվության փոխանակման համակարգչային համակարգերը միավորում է հեռահաղորդակցության ցանցերի օգնությամբ: Այդ կապակցությամբ էլ այսօր ԶԼՄ-ների, տեղեկատվայնացման գործընթացների, համակարգչային տեղեկատվական համակարգերի ու զանգվածային հաղորդակցության ցանցերի զարգացումն անհրաժեշտ է դիտարկել անխզելի ամբողջության մեջ, որը վերածվել է տեղեկատվական հասարակության կարևորագույն և առանցքային բաղադրիչի:

Զանգվածային լրատվամիջոցներով իրականացվող մշակութային տեղեկատվական կապերի շրջանառությունն այսօր կարիք ունի բովանդակային լուրջ վերանայումների, քանի որ.

Առաջին. ԶԼՄ-ները կոչվում են նաև չորրորդ իշխանություն՝ նկատի ունենալով մաս-մեդիայի ունեցած հսկայական ազդեցությունը: Հասարակության զարգացման օրինաչափություններն առաջացնում են իշխանության մարմինների և ԶԼՄ-ների գործունեության բացահայտ կամ թաքնված (լատենտ) համաձայնեցման անհրաժեշտություն: Այդպիսի անհրաժեշտությունը

հետևում է այդ երկու հաստատությունների՝ միմյանց հանդեպ շահագրգռվածությունից: Պետական մարմինները հետաքրքրվում են ՋԼՄ-ներով՝ որպես հասարակության մեջ իրերի դրվածքի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության սկզբնաղբյուրի և իշխանությունների քաղաքականության հանդեպ բնակչության վերաբերմունքի ձևավորման, հասարակական կարծիքի կազմավորման կարևոր գործոնի[51]: ՋԼՄ-ները, իրենց հերթին, շահագրգռված են իշխանության մարմինների հետ համագործակցությամբ, քանի որ նորմալ հրատարակչական գործունեություն ծավալելու, լրագրողների գործելակերպի բարելավման, որոշակի արտոնությունների տրամադրման և այլ հարցերում դրանցից շատ բան է կախված:

Երկրորդ. ՋԼՄ-ներում առկա են նաև տեղական մշակութային փաստերի շրջանառության դրսևորումներ: Սակայն հարկ է նկատել, որ տեղականը դեռևս ազգային չէ: Այն, որ ՋԼՄ-ները հիմնականում զբաղված են ցածրաճաշակ խմբակային պահանջմունքներ բավարարող ստեղծագործությունների քարոզմամբ, ոչ միայն չի նպաստում ազգային մշակութային միջավայրի և արժեքների քարոզմանը, այլև, հակառակը, հաճախ հանգեցնում է դրանց աղավաղմանը և խմբակայնացմանը[52]: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, երգիծանքի և հումորի, երգարվեստի ու պարավեստի, կինոարվեստի ինքնուսների խմբակային «արվեստի» քարոզմանը, որոնց գործունեությունը ոչ միայն չունի մշակութային գործառույթ, այլև, հակառակը, հանգեցնում է հակամշակույթի ամրապնդմանը, որն իր քանակական գերակշռությամբ և խմբակային մատուցմամբ բովանդակազրկում է ազգային մշակութային կերպերն ու արժեքները:

Երրորդ. Այսօր ՀՀ-ում ՋԼՄ-ները հիմնականում ներառում են օտար մշակութային տարրեր, որոնք էապես խորթ են ազգային մշակութային արժեքային չափանիշներին, ներկայացնում են Արևմուտքի մշակութային կյանքի ցածրաճաշակ նմուշներ: Դրանք ծառայում են ոչ թե հայաստանյան հանրության մշակութային ճաշակի ձևավորմանը, այլ ապակառուցողական կրքերի քարոզմանը: Այս առումով խնդիրներից մեկն օտար մշակութային նորույթների մեջ համամարդկային մշակութային բարձրաճաշակ ստեղծագործությունների քարոզումն է, հատկապես դաժանությունների, սպանությունների, պատերազմների ու քայքայիչ կրքերի քարոզչության արգելումը[53]:

Չորրորդ. Զանգվածային լրատվամիջոցները հասարակության ամենօրյա կյանքում իրենց ոլորտների ընդլայնմանը զուգընթաց ստեղծում են

---

[51] Այդ մասին տե՛ս ***Գ. Պողոսյան, Ռ. Նաղդյան,*** Անձը փոխակերպվող հասարակությունում, Եր., 2008, էջ 41:

[52] Տե՛ս ***Ա. Թադևոսյան,*** Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, էջ 56:

[53] Տե՛ս Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, էջ 62-73:

անհատի հանդեպ մանիպուլյացիայի հնարավորություն:

XX դարի մի շարք տեսաբաններ (Թ. Ադորնո, Մ. Հորքհայմեր, Հ. Մարկուզե, Ժ. Բոդրիյար) խոսում են ոչ միայն «զանգվածային լսարանի»՝ իբրև փաստի առաջացման, այլև որպես նպատակաուղղված գործընթացի ձևավորման մասին, որում նշանակալի դեր ունեն զանգվածային լրատվամիջոցները. օգտագործելով մանիպուլյատիվ հոետորություն, գիտակցության վրա ազդող տեխնոլոգիաներ՝ ՋԼՄ-ները կառուցում են առանձնահատուկ վիրտուալ (երևութական) իրականություն, որը չի համապատասխանում սոցիալական օբյեկտիվ իրականությանը: Ձևավորվում է «խաղացող մարդու» կերպարը՝ իրական և երևակայական աշխարհների միջև սահմանի ոչ հստակ գիտակցմամբ, պատճառահետևանքային կապերի հստակ պատկերացումների բացակայությամբ: Մարդու այս բարոյահոգեբանական տեսակը հեղհեղուկ է, ինչն անհնար է դարձնում պատասխանատու որոշումների ընդունումը և իրավիճակին համապատասխան գործելաոճը: Ինքնուրույնության, ստեղծագործական նախաձեռնողականության և քննադատական տարրերը տեղը զիջում են իմիտացիային (նմանակմանը). մարդուն թվում է, թե կյանքը համակարգչային խաղ է, հետևաբար, ամեն վայրկյան կարելի է սեղմել “restart” կոճակը և ամեն ինչ կարգավորել:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնացված ազդեցությամբ անհատն անխուսափելիորեն կորցնում է ճշմարտության օբյեկտիվ չափանիշները: Այս կամ այն իրադարձության նշանակությունը, ամենից առաջ, պայմանավորվում է ոչ թե դրա իրական հետևանքներով, այլ սոցիալական խմբերում և «մեդիա-տարածությունում» առկա կարծիքներով ու ըմբռնումներով:

Փորձագետները մեդիա-ազդեցության մեջ շեշտադրում են հատկապես հեռուստատեսության դերը, քանի որ հենց վերջինիս միջոցով է հնարավոր դառնում ազդել մարդկանց մտածողության վրա[54]: Պատկերները, որ մարդիկ տեսնում են էկրանին, տարբեր խորհրդանիշների որոշակի ամբողջություն են, որոնք կարող են լինել ճշմարիտ կամ կեղծ, սակայն ինչ էլ լինի, մանիպուլյատիվ ազդեցություն են թողնում հեռուստադիտողի վրա: Տարբեր տեղեկությունների հեռուստատեսային տեսալսողական հոսքի համար կարևոր չէ տրամաբանությունը (շարադրման հաջորդականությունը, իմաստավորված համատեքստը), այսինքն՝ իրականությունը կարող է ներկայացվել առանց տրամաբանական կապի և փաստարկման: Հենց այս «աճպարարության» միջոցով է լսարանի մոտ ձևավորվում իրականության մասին այն պատկերացումը, որը ներշնչվում է էկրանից: Տեղի է ունենում որոշակի ծած-

[54] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ***Поликарпова Е.*** Аксиологические функции масс-медиа в современном обществе. Ростов-на-Дону, 2002:

կագրում (կոդավորում), որն աննկատ է մնում լսարանի համար, ինչն էլ հրաշալի հնարավորություն է ընձեռում մանիպուլյատիվ մեխանիզմների ակտիվացման համար[55]:

Ելակետային տեղեկատվության աղավաղման միջոցներն այստեղ բազմազան են՝ փաստերի կեղծում, հասկացությունների նենգափոխում, պարզունակացում, կարծրատիպային մտածողության ձևավորում, մանիպուլյատիվ իմաստաբանություն և այլն: Շատ դեպքերում աղավաղված տեղեկությունները մատուցվում են որոշակի հնարներով, որոնցից են ոչ միանշանակ կրկնությունը, պնդումը, սենսացիան, ինչպես նաև այլընտրանքային որևէ աղբյուրի բացակայությունը:

Զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն մարդկանց մոտ սերմանում են կարծրատիպային մտածողություն, այլև աստիճանաբար իջեցնում են տեղեկությունների հաղորդման մտավոր մակարդակը: Այդ նպատակին է ծառայում կրկնության հնարը, որով ժամանակի ընթացքում կշիռ է հաղորդվում պնդումներին առանց լրացուցիչ փաստարկման՝ դրանք վերածելով կպչուն գաղափարների, որոնց պարբերաբար հանդիպելով տարբեր մեկնաբանություններում՝ մարդը վաղ թե ուշ սկսում է հակվել վերջիններիս: Կրկնությունը դառնում է արգելապատնեշ այլընտրանքային կարծիքների համար: Այս հնարը օգնում է տարանջատել միտքը հեղինակից, վիճահարույց դրույթը վերածում աքսիոմի, որը կախված չէ ո՛չ ժամանակից, ո՛չ անձից: Գաղափարական հարցերը հիմնականում դուրս են մնում բանավեճի և վերլուծությունների ձևաչափից: Անհրաժեշտ գաղափարների ներմուծման փոխարեն (որն ավելի արդյունավետ մոտեցում է) պատրաստի կաղապարներով աշխատող լրատվամիջոցը «ներս չթողնելով» զտման է ենթարկում անցանկալի թեմաները, հատկապես սոցիալ-քաղաքական ոլորտին առնչվող խնդիրները: Որոշակի բազմազանություն է նկատվում միայն ժամանցային հաղորդումներում, ինչը, բնականաբար, այդքան էլ ազդեցիկ չի կարող լինել:

Հեռուստատեսությունը, դառնալով մեր կյանքի մշտական խորապատկեր, առաջ է բերում նոր մշակույթ՝ «իրական-վիրտուալ մշակույթ»: Իրական վիրտուալությունը համակարգ է, որտեղ հենց ինքն իրականությունը (այսինքն՝ մարդկանց նյութական-խորհրդանշական գոյությունը) ամբողջովին սուզված է վիրտուալ կերպարներով հարուստ հորինված աշխարհում, որտեղ արտաքին պատկերները ոչ միայն գտնվում են էկրանին, այլև իրենք են դառնում կենսափորձ: Այս կերպ հեռուստատեսությունն ազդում է ոչ միայն զանգվածային տեղեկատվության միջավայրի, այլև մարդկանց սովորույթների և կենսաոճի վրա:

---

[55] Տե՛ս ***Братимов О., Горский Ю., Делягин М., Коваленко А.*** Практика глобализации: игры и правила новой эпохи. М., 2000, էջ 62-63:

Ըստ սոցիոլոգիական հարցումների տվյալների՝ ՀՀ բնակչության մեծամասնության համար տեղեկատվության հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է[56]: Բացի դրանից, հայկական հեռուստատեսությունը մեծապես նպաստում է նաև սփյուռքահայության հասարակական կարծիքի, հայրենիքում տիրող քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրությամբ ուսումնասիրվել է ՀՀ հեռուստատեսային դաշտը, մասնավորապես, վերլուծվել են ամենամեծ հեռուստալսարան ունեցող (նաև սփյուռքում հեռարձակվող) որոշ հեռուստաընկերությունների (Հանրային Առաջին, «Արմենիա TV», Հանրային Երկրորդ, «Շանթ») ծրագրերը: Վերլուծության առաջին փուլն ընդգրկել է 2013 թ. հունիսի առաջին կեսը, երկրորդ փուլը՝ 2013 թ. հոկտեմբերի առաջին կեսը: Տվյալներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակներում:

Աղյուսակ 3

1 շաբաթվա ընթացքում ցուցադրվող հեռուստածրագրեր

ՀԸ	*Հեռուստածրագրերի թիվը 15.06.2013 թ.*	*Հեռուստածրագրերի թիվը 15.10.2013 թ.*	*Կրկնվող հեռուստածրագրերի թիվը*
Հ1	40	45	20
Արմենիա TV	29	29	16
Հ2	26	27	23
Շանթ	16	18	8

Ուշագրավ է, որ այդ հեռուստաընկերություններն ունեն հիմնականում ժամանցային ուղղվածություն, ընդ որում, չորս ամսվա ընթացքում այդ միտումն առավել ուժեղանում է (տե՛ս աղյուսակներ 4 և 5):

Աղյուսակ 4

1 շաբաթվա ընթացքում ցուցադրվող կինոնկարների թիվը 15.06.2013 թ.

ՀԸ	*Գեղարվ. կինոնկար*	*Փաստագր. կինոնկար*	*Սերիալ*	*Մուլտ-սերիալ*	*Ընդամենը*	*Հարաբ. մյուս հաղորդաշարերի թվին*
Հ1	11	1	2	1	15	30.6%
Արմենիա TV	2	-	4	-	6	20%
Հ2	18	-	2	3	23	54.7%
Շանթ	-	-	6	1	7	43.8%

[56] Տե՛ս ***Գ. Պողոսյան,*** Հայ հասարակությունը դարասկզբին, Եր., 2006, էջ 174:

Աղյուսակ 5

1 շաբաթվա ընթացքում ցուցադրվող կինոնկարների թիվը 15.10.2013 թ.

ՀԸ	Գեղարվ. կինոնկար	Փաստագր. կինոնկար	Սերիալ	Մուլտ-սերիալ	Ընդա-մենը	Հարաբ. մյուս հաղորդաշա-րերի թվին
Հ1	15	5	4	1	25	40.3%
Արմենիա TV	9	-	4	-	13	35.1%
Հ2	18	-	2	3	23	53.4%
Շանթ	5	-	6	1	12	54.5%

Հատկանշական է, որ շատ երկրներում հատկապես ֆիլմերն ու սերիալներն են դիտվում որպես օտար արժեքների ներխուժման առավել մատչելի եղանակ, և այդ իսկ պատճառով սահմանվում է ցուցադրվող արտասահմանյան կինոնկարների թվի որոշակի շեմ: Օրինակ, ֆրանսիական հեռուստաընկերություններով ցուցադրվող արտասահմանյան կինոնկարները չպետք է գերազանցեն կինոնկարների ընդհանուր թվի 50%-ը: Այս առումով հայկական հեռուստաընկերությունների վերլուծությունից բավական մտահոգիչ պատկեր է ստացվել (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

1 շաբաթվա ընթացքում ցուցադրվող արտասահմանյան կինոնկարներ (ֆիլմեր և սերիալներ) 15.10.2013 թ.

ՀԸ	Կինոնկարների թիվը	Համեմատ. բոլոր կինոնկարների քանակին (%-ներով)
Հ1	17	68%
Արմենիա TV	10	76.9%
Հ2	23	100%
Շանթ	8	66.7%

Այսպիսով, խոսելով ՀՀ-ում զանգվածային լրատվամիջոցների գործունեության բացասական կողմերի մասին՝ հարկավոր է առանձնացնել հետևյալը.

- կարևոր արժեքների ու գաղափարների իրավիճակային, չգիտակցված ներկայացում,
- գաղափարական հստակ դաշտի բացակայություն,
- գաղափարական լուրջ քննարկումների սղություն,
- արժեքային դաշտի տարերայնություն և անկայունություն,
- սոցիալական իրականության խիստ հատվածական մատուցում:

Արդի աշխարհի իրողությունները մարդկանց համար ստեղծել են նաև վտանգների ու սպառնալիքների արտակարգ լայն և բազմաբնույթ շրջանակ,

որոնք ունեն տեղեկատվական բնույթ կամ մարդու վրա ներգործում են տեղեկատվական ուղիներով: Ժամանակակից կյանքի տեղեկատվական դաշտի տարողության ընդլայնումը մարդուց պահանջում է հոգեբանական լուրջ պատրաստվածություն: Ահա թե ինչու անհատի ամենօրյա և մասնագիտական գործունեության ոլորտներում նրա անվտանգ տեղեկատվական վարքի հիմնախնդիրը մասնագետների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացնում: Հասարակության տեղեկատվայնացման հաջողությունները պահանջում են տեղեկատվական հիմնախնդիրների նկատմամբ դրսևորել սոցիոմշակութային մոտեցում:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացմանը, տեղեկատվայնացմանն ու համակարգչայնացմանը և մարդու ադապտացմանը (հարմարմանը) առնչվող մի քանի երևույթ է առանձնացվում:

Առաջին՝ մտավոր ծանրաբեռնվածությունն ու հոգնածությունը, որն ավելի ու ավելի է սաստկանում: Ամենօրյա կենսագործունեության ընթացքում տեղեկատվական հոսքերը հաճախ ծանրաբեռնում են մարդու գիտակցությունը, ինչը կարող է հանգեցնել աշխարհի աղավաղված յուրացմանը:

Երկրորդ՝ մշտական վերահսկողությունը, կենտրոնացումը, աշխատանքներին ու դրանց որակին հետևելը: Աշխատողի աշխատանքային գործունեության՝ համակարգչից կախվածությունն առաջացնում է ընդվզում, տեղեկատվական չպաշտպանվածության զգացում:

Երրորդ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հմտությունը խթանում է մտավոր ընդունակությունների զարգացումը միայն մեկ ուղղությամբ: Ընդօրինակումը փոխարինում է ճանաչողությանը, մեկնաբանությունը՝ ստեղծագործությանը:

Չորրորդ՝ լինելով բավականաչափ ինտենսիվ և ունենալով մենակյաց բնույթ՝ համակարգչային աշխատանքն իդեալական պայմաններ է ստեղծում սոցիալական ինքնամեկուսացման համար: Անձնական օգտագործման համակարգիչների և քաղաքակրթության տեխնոլոգիական այլ նվաճումների տարածումը հանգեցնում է մարդկանց մեջ անհատապաշտության հոգեբանության զարգացմանը և կոլեկտիվիզմի, խմբային նույնականության սկզբունքների խաթարմանը: Փիլիսոփաների ու հոգեբանների այդ զգուշացումը հիմնազուրկ չէ. անձնական օգտագործման համակարգչային և այլ տեղեկատվական տեխնիկայի օգտագործումը, իրոք, սահմանափակում է մարդկանց միջև շփումը, կարող է մարդուն կտրել իրականությունից, ստեղծել իրականությանը փոխարինող արհեստական միջավայր և դրանով ուժեղացնել սոցիալական ինքնամեկուսացումը: Դրա հետ մեկտեղ նկատվում է նաև վիրտուալ հանրությունների ձևավորում, որի անդամները թեև բաժանված են ֆիզիկական տարածությամբ, սակայն վիրտուալ տարածությունում ներկայանում են փոքր քաղաքների համայնքների ձևով: Այդ հանրույթները

կառուցում են իրենց նոր միֆոլոգիան (առասպելաբանությունը)՝ լի պատրանքներով, որոնցից գլխավորը հաջողության, առաջընթացի, տեխնիկական ամենակարողության պատրանքն է: Հասարակությունն այսօր, կարելի է ասել, գտնվում է ինչ-որ անորոշ վիճակի մեջ: Անորոշությունը, անհստակությունը, որոնք ըմբռնվում են որպես «նոր ազատություն», ստեղծում են ազատ տարածություն նոր պատրանքների առաջացման համար:

Էլեկտրոնային հաղորդակցության և թվային լրատվամիջոցների զարգացումը վերջին տարիներին ճանապարհ է բացում արժեքների և նորմերի գլոբալ համակարգի ձևավորման համար, որն էլ, որպես հետարդիականության մշակութային բնութագիր, հաստատվում է մանիպուլյացիաների, քարոզչության և մեկնաբանությունների ճանապարհով: Այսօր հաղորդակցության օրեցօր աճող միջոցների շնորհիվ հնարավոր է դառնում խախտել ազգային ու պետական, մշակութային ու կրոնական ցանկացած սահման, ամեն ինչ դառնում է on-line (առցանց), հասանելի: Ավելի բաց ու փոխթափանցելի, գայթակղություններով լի աշխարհում ապրող մարդու արժեհամակարգը լղոզված է, աշխարհայացքը՝ զուրկ իդեալներից, բարոյական առանցքից:

Էլեկտրոնային հաղորդակցության թեթևությամբ հանդերձ՝ ծագում է մեկուսացման և օտարման վտանգ: Տեղեկատվական հասարակությունը՝ տանը աշխատելու խրախուսման իր միտումներով ու կրթական համակարգերին և զվարճանքին վերաբերող հոսքերի գերհագեցվածությամբ, մարդուն հեռացնում է ընտանիքի և հասարակության մյուս անդամների հետ անմիջական շփումներից: Արագահոս տեղեկատվության ընկալումը դառնում է այնքան անհատականացված, որ մարդկանց մեկուսացնելով՝ աստիճանաբար զրկում է կոլեկտիվ որևէ ապրումից: Մարդու համար բուն շփումը ձեռք է բերում օգտապաշտական բնույթ՝ զրկված զգացմունքայնությունից ու մարդկային ջերմությունից: Ժամանակակից մարդը, որը գործածում է հաղորդակցվելու բազմազան արդիական հնարավորություններ, զարմանալիորեն միայնակ է:

Բացի դրանից, համակարգչի օգտագործման ընթացքում ծագում է մի երևույթ, որը ամերիկացի հոգեթերապևտ Կ. Բրոդն անվանում է «տեխնոսթրես»: Դա բացարձակապես ժամանակակից հիվանդություն է՝ պայմանավորված տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիայի հանդեպ անառողջ վերաբերմունքով:

Երիտասարդների համար տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակությունն ու ազդեցությունը պարզելու համար 2013 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին սոցիոլոգիական հարցում է անցկացվել ՀՊՏՀ ուսանողների և ՀՀ այլ քաղաքացիների շրջանում: Մասնակցել է 18–30 տարեկան 200 հարցվող: Հարցման տվյալները ներկայացված են ստորև (տե՛ս աղյուսակներ 7, 8, 9, 10, 11 և 12):

Աղյուսակ 7

Տեղեկատվության ստացման աղբյուրները

Համացանց	58%
Հեռուստատեսություն	17%
Մամուլ	7%
Շրջապատ	18%

Աղյուսակ 8

Բջջային հեռախոսը

Մշտապես միացված է	77%
Օրվա մեծ մասը միացված է	10%
Ցերեկը միացված է, գիշերը՝ անջատված	4%
Ցերեկն էլ է երբեմն անջատված լինում	9%

Աղյուսակ 9

Համացանցից օգտվելուն տրամադրվող ժամանակը

1–3 ժամ	49%
1 ժամից պակաս	26%
3–5 ժամ	18%
5 ժամից ավելի	7%

Աղյուսակ 10

Համացանցի նշանակությունը գիտելիքների ձեռքբերման գործընթացում

30–50%	53%
50–80%	30%
Մինչև 30%	15%
80–100%	2%

Աղյուսակ 11

Մեկ (կամ մի քանի) սոցիալական ցանցում գրանցված է	*Որևէ սոցիալական ցանցում գրանցված չէ*
93%	7%

Աղյուսակ 12

Համացանցի հետ ինտենսիվ շփման արդյունքում շեշտադրվող երևույթները

ԴՐԱԿԱՆ	ԲԱՑԱՍԱԿԱՆ
ինքնահաստատման ձգտում, ինքնավստահություն, անկաշկանդություն	ամաչկոտություն, ցածր ինքնագնահատական, ավելի հաճելի, հարմար կերպարի ստեղծում
մտքի ճկունություն, մտքերի արտահայտման ազատություն և համարձակություն	ռոբոտացում, սահմանափակ մտածելակերպ, անհատականության խեղաթյուրում, բարդութավորվածություն, կախվածություն, առանց համացանցի շրջապատի հետ շփման բարդութավորվածություն, իրական շփումների փոխարինումը վիրտուալով
անկեղծություն, ակտիվություն, աշխուժություն, մարդամոտություն, շփման հմտությունների ձեռքբերում	անտակտություն, կեղծիք, ագրեսիվություն, մեկուսացում, ինքնամփոփություն, անտարբերություն, անուշադրություն արտաքին աշխարհի նկատմամբ, մտավոր բացակայություն իրականությունից, շրջապատին համարժեքորեն արձագանքելու ունակության կորուստ
մշտապես տեղեկացված լինելու ձգտում, մշտապես տեղեկատվություն որոնելու հակվածություն, տեղեկատվության շուտ ընկալում, նորությունների ու նորույթների հեշտ յուրացում, տարբեր աղբյուրներում տեղեկատվության ստուգման ցանկություն, գիտելիքների մեծ հոսք	անհամբերություն, ամեն ինչ պատրաստի ստանալու ցանկություն, գերտեղեկացվածություն, ծուլություն, բթացում
պարտաճանաչություն, չափի զգացողություն	անպարտաճանաչություն, պատասխանատվության զգացման կորուստ
հանդարտություն	հուզականության, զգացմունքայնության անկում, սառնասրտություն, մելամաղձություն

3.3 Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները գլոբալացվող աշխարհի տեղեկատվական գործընթացների համատեքստում

Ժամանակակից աշխարհի միտումներից մեկը համաշխարհայնացումն (գլոբալացում) է, որը հանգեցրել է գլոբալ տեղեկատվական տարածության արագ զարգացմանը: Տեղեկատվական ոլորտի ներկա միտումները ցույց են տալիս, որ համաշխարհային քաղաքակրթության զարգացման վեկտորը հենց այդ հարթության մեջ է, և տեղեկատվական հեղափոխության արդյունքը նոր տեսակի՝ «տեղեկատվական հասարակությունն» է: Տեղեկատվական հասարակությունում տնտեսական զարգացումը, սոցիալական առաջընթացը, հասարակական կյանքի որակն ու կերպը կախված են գիտելիքներից և տեղեկատվության գործադրման բնույթից:

2000 թ. Օկինավայում Մեծ ութնյակի գագաթաժողովի «Գլոբալ տեղեկատվական հասարակության հռչակագրում» ընդգծվում է, որ տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաները դարձել են XXI դարի հասարակության ձևավորման առավել կարևոր գործոնները: Գլոբալացման գործընթացների մյուս կարևոր հետևանքներից է մարդկային պատմության մեջ ժամանակի գործոնի որակապես նոր ընկալումը. XX դարի վերջից մարդկային կյանքի տնտեսական, մշակութային ու հոգեբանական բաղադրիչները փոփոխվում են մեկ սերնդի կյանքի ընթացքում: Դա, իր հերթին, մեծացնում է անկայունությունը, իրավիճակի անկանխատեսելիությունը, նույնիսկ զարգացած երկրներում:

Ժամանակակից աշխարհում ավելանում են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, առավել շոշափելի են դառնում, այսպես կոչված, «տեղեկատվական ահաբեկչության», «ուղեղների լվացման», մարդկանց գիտակցության վրա ազդեցության տեղեկատվական-հոգեբանական մեթոդների և մեխանիզմների կիրառմամբ որոշակի շրջանակների շահերի լոբբինգից բխող սպառնալիքները: Ընդ որում, տեղեկատվությունը կարող է ազդել ինչպես առանձին անհատի, այնպես էլ մարդկանց խմբի վրա, ինչպես առանձին պետության կամ երկրների խմբի, այնպես էլ համաշխարհային քաղաքական ամբողջ համակարգի վրա: Տեղեկատվական-հոգեբանական ներգործությունը, որպես կանոն, իրականացվում է քարոզչության տարաբնույթ մեթոդների, հոգեբանական գործողությունների, տեղեկատվական պատերազմների կիրառմամբ: Դրանց բնութագրական գիծը մարդկանց վրա ներգործությունն ու հասարակական որոշակի կարծիքի ձևավորումն են:

Մշակութային տեսանկյունից համաշխարհայնացումն առավելապես

համահարթեցման գործընթաց է: Գլոբալ տեղեկատվական ցանցերի ինտենսիվ օգտագործման պայմաններում զարգացած երկրներից զարգացող երկրների հանդեպ ծագում են մշակութային ագրեսիայի նոր ձևեր, հասարակությունների գլխին մշակութային և ազգային յուրօրինակությունը կորցնելու վտանգ է կախվում: Այսօր աշխարհում ազդեցության լծակներ ձեռք բերած հզոր պետություններն իրենց արժեքների թելադրմամբ կամ նույնիսկ պարտադրմամբ անտեսում և արհամարհում են այլոց մշակութային ինքնատիպության պահպանման բնական ձգտումը:

Ըստ որոշ տեսակետների՝ գիտատեխնիկական առաջընթացին խարսխվող գլոբալացումն իրականում կարող է հանգեցնել հատկապես փոքր ազգերի հոգևոր և ինտելեկտուալ ստրկության, դրանց պետական ինքնիշխանության և ազգային ինքնատիպության կորստյան, մանավանդ որ գլոբալացման շրջանակներում Արևմուտքի իրականացրած գլոբալ տեղեկատվական-մշակութային ու տեղեկատվական-գաղափարախոսական ներխուժումը կատարվում է միջազգային հեռահաղորդակցման ցանցերի (օրինակ՝ համացանցի) ու զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ: Բազմաթիվ երկրներ, այդ թվում և Հայաստանը, ստիպված են ձեռնարկելու առանձնահատուկ միջոցներ՝ իրենց քաղաքացիներին, մշակույթը, սովորություններն ու հոգևոր արժեքները օտար տեղեկատվական ազդեցություններից զերծ պահելու համար: Երկրի ազգային անվտանգությունը էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց այդ կախվածությունն էլ ավելի կաճի:

Ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունը բնականոն զարգացման և սեփական մշակութային հենքի վրա տեղեկատվական նորամուծությունների միջոցով է ձևավորել սեփական ինքնությանը բնորոշ քաղաքական, հասարակական, արտադրական, հոգևոր և հումանիտար մշակութային այն համալիրը, որը չի վտանգում այդ պետություններում ապրող ժողովուրդների ինքնությունը և հնարավորություն է ընձեռում դա իրականացնել զարգացման ու առաջընթացի համատեքստում: Մինչդեռ ոչ արևմտյան ժողովուրդները, որոնք այդ ճանապարհը չեն անցել, արևմտյան արժեքների ազդեցության հետևանքով հաճախ կանգնում են ինքնության երկատման և վտանգի առջև:

Այս հանգամանքով է պայմանավորված նաև ազգայնական գաղափարախոսությունների և շարժումների ակտիվացումը, որպես ինքնատիպ հակազդեցություն համաշխարհայնացման հնարավոր սպառնալիքների և ի պաշտպանություն ազգային տնտեսության, ազգային մշակույթի ինքնատիպության, ազգային լեզվի, ազգային եկեղեցու, ազգային պետության: Անկասկած, այդ մտահոգությունները հիմնավոր են, սակայն չի կարելի մեր-

ժողական վերաբերմունք դրսևորել մի երևույթի հանդեպ, որն օբյեկտիվ է, օրինաչափ զարգացման արդյունք, և որի դեմ պայքարելը, առնվազն, դոնքիշոտություն է, նաև այն պատճառով, որ համապարփակեցումն ու ինտեգրումը դրական բազմաթիվ կողմեր ունեն, որոնցից, բնական է, հրաժարվելն անցանկալի է: Շահում են այն ազգերն ու ժողովուրդները, որոնք կարողանում են քայլել ժամանակի ոգուն համահունչ: Իսկ դա նշանակում է ընդօրինակել այն դրականը, առողջը, որ կա նոր մշակույթի, առաջարկվող նոր արժեհամակարգի մեջ, միաժամանակ հրաժարվել ազգային-ավանդական այն արժեքներից, որոնք ժամանակավրեպ են և չեն կարող աջակցել ազգի հոգևոր և նյութական առաջընթացին:

Համաշխարհայնացումը, եթե, մի կողմից, ենթադրում է սոցիալական աշխարհի «սեղմում», «փոքրացում», ապա, մյուս կողմից՝ «ընդարձակում», «մեծացում» ոչ միայն գործունեության դաշտի, այլև գիտակցության, մշակույթների փոխհարաբերության, քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից: Եվ բնական է, որ այս իրավիճակում, մշակույթների քաղաքակրթական հակամարտությունը հաղթահարելու համար միանգամայն նոր փիլիսոփայություն է անհրաժեշտ, կամ, ինչպես բնութագրում է Ն. Ֆեդոտովան, փոխըմբռնման փիլիսոփայություն է անհրաժեշտ[57]: Հետևաբար, «տափարակ աշխարհի» ձևավորումը պետք է օժանդակի տարբեր մշակույթների փոխհարստացման և փոխլրացման գործընթացին և ոչ թե սպառնալիք դառնա նրանց գոյությանը:

Ներկայումս ՀՀ-ի համար ևս ազգային-մշակութային ինքնության պահպանման խնդիրը ձեռք է բերում առաջնային նշանակություն: Իհարկե, ինչպես վերը նշվեց, արդի իրողությունների պայմաններում համաշխարհային զարգացմանը ձգտելը կարևոր է: Հետևաբար, մշակութային անաղարտության պահպանումը չի կարող համարվել մշակութային ինքնության և դրա վերարտադրության առանցքային պայման: Մեր խնդիրը ներկայիս զարգացող աշխարհին ինտեգրման համատեքստում մշակութային ինքնության, ազգային հոգևոր-բարոյական արժեքների պահպանման այնպիսի սկզբունքների պարզաբանումն է, որոնք հնարավորություն կընձեռեն, մի կողմից, հետ չմնալու արդի զարգացող աշխարհից՝ նաև համամարդկային արժեքների յուրացման միջոցով, մյուս կողմից՝ պահպանելու և վերարտադրելու մեր ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը: Չի կարող վտանգ լինել էթնոմշակութային ինքնության վերարտադրության տեսանկյունից, եթե ազգային մշակութային համակարգ ներմուծվող արժեքները յուրացվում են հարմարեցման միջոցով, այլ ոչ պարզ ընդօրինակման:

---

[57] Տե՛ս ***Федотова Н.*** Возможна ли мировая культура? // Философские науки, №4, 2000, էջ 58-68:

Ներկայումս ինչպես մշակութային ավանդույթների, այնպես էլ նորույթների համազգայնացման ոլորտում դրանց ներգրավման համար լայն հնարավորություններ են ընձեռում զանգվածային լրատվամիջոցները: Մինչդեռ այսօր պարզապես բացակայում կամ շատ թույլ է արտահայտված համարժեք մոտեցումների և նպատակների ձևակերպումը: Իրոք, ՀՀ-ում չնչին է զանգվածային լրատվության միջոցների դերն ազգային-մշակութային ավանդույթների և հոգևոր-բարոյական արժեքների տեղեկատվական շրջանառությունն ապահովելու առումով: Փաստորեն ՋԼՄ-ների մշակութային տեղեկատվությունն առավելապես նպաստում է օտար մշակույթի շրջանառությանը: Հետևաբար, մշակութային ոլորտում հոգևոր-բարոյական անվտանգության հիմնախնդիրը տեղեկատվական կապերի ազգային և պետական վերահսկողության հաստատումն է: Բնականաբար, խոսքն այն մասին չէ, որ ժամանակակից աշխարհի հետ ակտիվ փոխազդեցությունները բացառվեն, այլ պարզապես անհրաժեշտ է նաև ազգային մշակութային տեղեկատվության շրջանառության մեջ ՋԼՄ-ների ակտիվացմանն ուղղված քայլերի ու քաղաքականության ձեռնարկում: Եթե օտար մշակույթներին հաջողվի սողոսկել մշակութային տեղեկատվության շրջանառության և վերարտադրության ոլորտ, ապա նրանք կարող են իրենց ձեռքը վերցնել նաև հոգևոր ու բարոյական արժեքների քարոզչությունը, ինչը, բնականաբար, խիստ անցանկալի է: Հետևաբար, հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից ազգի մշակութային կյանքում առանձնահատուկ կարևորություն ունի տեղեկատվական կապերի շրջանառության կանոնակարգման պետական քաղաքականությունը, որը կներառի հետևյալ դրույթները.

- Մշակութային տարածքի փոխակերպումներում հանրության համար ապահովել տեղեկատվության թափանցիկության ու մասնակցության սկզբունքները՝ հաշվի առնելով հասարակության կարծիքը մշակութային տարածքի փոխակերպման կամ ձևավորման ոլորտում վճիռների կայացման մեջ:

- ՋԼՄ-ների և մշակութային քարոզչության այլ միջոցների նկատմամբ կիրառել ներազդեցության մեխանիզմներ՝ ապահովելով օտար մշակութային արժեքներից համամարդկային մշակութային բարձրաճաշակ ստեղծագործությունների քարոզումը և, միևնույն ժամանակ, բացառել դաժանությունների, պատերազմների, բռնությունների, սպանությունների, ահաբեկչության և այլասերում առաջացնող ապակառուցողական բնույթի այլ երևույթների քարոզումը:

Այս առումով ՀՀ մշակութային քաղաքականության առաջնային կարևորության խնդիրն է համապետական, համազգային ավանդույթների ձևավորումը և մշակույթի ավանդույթային շերտում դրանց արմատավորումը:

Հետազոտության մեջ արդեն ներկայացվել են հիմնական եզրակացությունները ու առաջարկությունները, ուստի ավելորդ կրկնությունից խուսափելու համար նշենք միայն հետևյալը.

Առաջին՝ Վերջին քսան տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ազգի միասնությունն ապահովող հոգևոր-բարոյական համահայկական արժեքների բացակայությունը կամ պակասը, ինչպես նաև ազգային-պետական-հասարակական-քաղաքական հիմնարկների և հաստատությունների բացթողումները իմաստազրկել են համազգային նշանակության բազմաթիվ արժեքներ ու գաղափարներ: Կորցրել ենք խորհրդային հասարակությունից եկող հոգևոր-բարոյական դաշտը, չկարողացանք ստեղծել նորը, ավելին՝ ձևախեղված է մեր անհատական, հասարակական հոգեբանությունը և գիտակցությունը: Ընդհանուր հասարակական և ազգային արժեքները նսեմացել են, իշխող են դարձել անհատական ու խմբային արժեքները, որոնց զգալի մասը հակարժեք է:

Ծավալվում ու ամրակայվում են բարոյալքվածությունը, նյութապաշտությունն ու օգտապաշտությունը: Անտարբերությունը, եսապաշտությունը տիրապետող են դառնում հանրային կյանքում: Խորանում են հասարակության տարբեր շերտերում, ժողովրդի գերակշռող մասի մեջ հոգեբարոյական, սոցիալական, մշակութային հակասությունները:

Երկրորդ՝ Մշակույթի ոլորտում վերջին տարիների նվաճումներով հանդերձ՝ չի հստակվում ու կազմավորվում մշակութային քաղաքականության ռազմավարությունը, հատկապես ազգայինի պահպանման ու զարգացման, նրա անվտանգության տեսանկյուններից: Ժամանակակից մշակույթի դիմակի տակ տեղի է ունենում էթնիկական և մշակութային առանձնահատկությունների «լվացում». պատանիներին ու երիտասարդությանը հրամցվում են գաղափարներ, որոնք ոչ միայն խորթ են մեր ազգային շահերին, հոգևոր-բարոյական արժեքներին, այլև լուրջ վտանգ են առողջ ապրելակերպի, առողջ մտածողության, ավանդական ընտանիքի համար, ապակառուցողական են, քարոզում են վարքի հակաօրինական մոդելներ:

Երրորդ՝ Աղավաղվում են հայոց լեզուն, հայերեն լեզվամտածողությունը, հայկականը: Կրթական համակարգը ներառվել է վերափոխումների մի այնպիսի ընթացքի մեջ, որի հնարավոր արդյունքները դեռևս անհայտ են ու անորոշ, կասկածելի ու զգալիորեն ներհակ են հայեցի կրթությանը: Կարծեք, երկրորդական է դարձել այն հրամայականը, որ կրթությունը պետք է լինի ոչ միայն գիտելիքակազմ, այլև մարդկայնացնող, դաստիարակող, հոգեբարոյականով ու արժեքայինով առաջնորդվող, հայկականը զարգացնող: Թվում է՝ կրթությունը ընթանում է ոչ թե զարգացման բնականոն ու օրինաչափ

հունով, այլ կատարում է քաղաքական պատվեր, վերածվում դրածոյական իրողության:

Լուրջ մարտահրավերների առջև են կանգնած դպրոցն ու բուհը: Վերջին քսան տարվա անընդմեջ փորձարկումները կասկածի տակ են դրել դպրոցի և բուհի տված գիտելիքների մրցունակությունն ու գիտականությունը:

Կորցրածի վերականգնման ու արժեքայինի հաստատման համար հսկայական դերակատարում ունեն մշակույթը՝ իր ամբողջությամբ ու կրթության համակարգը՝ մասնավորապես:

Ազգային կրթությունը որոշակի հայեցակարգ է, իդեալների, գաղափարների, արժեհամակարգի, հոգեբարոյական կերտվածքի, հայկականության, ազգային գիտակցության մշակում և համակարգում: Ազգային կրթությունը նոր մարդու ձևավորումն է՝ հայկականի ու համամարդկայինի հիման վրա, բայց ընդգծված հայկականի ճանաչմամբ ու յուրացմամբ, ազգային գիտակցությամբ ու արժանապատվությամբ, մի բան, որին հասու չէ մեր ներկայիս կրթական համակարգը:

Չորրորդ՝ Այսօր հնարավոր չէ հասարակությունը պատկերացնել առանց մտավորականության, որը ոչ միայն հոգևոր արժեքների, հատկապես գիտություն և մշակույթ ստեղծողն է, այլև հոգևոր և բարոյական արժեքների վերաարժեքավորողը, հասարակությունն առաջ մղող գաղափարական ուժը, ինչպես նաև հազարամյակների ընթացքում ձևավորված ազգային ավանդույթները, գիտելիքները և արժեքները հաջորդ սերունդներին փոխանցողը և, այս առումով, կապող օղակ, կամուրջ անցյալ և ներկա սերունդների միջև: Մտավորականն իդեալ պետք է լինի ժողովրդի, հատկապես երիտասարդության համար: Բարձրացող սերունդը նրանից պետք է վերցնի ճշմարտության որոնման ջահը, պետք է սովորի սիրել հայրենիքը, սիրել մարդուն, ապրել առաքինի՝ որպես սկզբունք ունենալով ***Գեղեցիկը, Բարին, Ճշմարիտը***:

Ցավոք, հանրային մեծ հեղինակություն ու ճանաչում ունեցող, հասարակական գործունեություն ծավալող մտավորական-անհատներ, որոնց ձայնին հասարակությունը կանսար և կհետևեր, այսօր հրապարակում չկան: Թեև առանձին անհատ մտավորականներ ունենք, բայց, ցավոք, ազգի մտավոր և բարոյական դեմքը բնութագրող մտավորականության խավ՝ ոչ:

Հինգերորդ՝ Ներկայումս ՀՀ անվտանգությանը սպառնացող մեծագույն վտանգը արտագաղթն է, հատկապես ստեղծագործող, գիտական մտքի արտահոսքը: Իսկ դա պայմանավորված է ոչ միայն սոցիալ-տնտեսական վիճակով, այլև հոգեբարոյական, արժեքային անկումով, իդեալների, մարդկայինի կորստով, մարդկայինի դեմ ուղղված կամայականություններով, ներկայի անորոշությամբ, ապագայի հանդեպ հոռետեսությամբ: Մար-

դը սեփական հայրենիքում իրեն զգում է անպաշտպան, արժեզրկված, անտեսված, իսկ դա կորուստներից մեծագույնն ու անդառնալին է ներկայի ու ապագայի տեսանկյունից:

Արտագաղթը զանգվածային փախուստ է մեր ստեղծած հայրենիքից, մեր իշխանություններից, հայրենիքում իշխող բարոյահոգեբանական մթնոլորտից: Սա, իհարկե, բողոքի սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական ձև է, բայց անընդունելի: Դրանով ոչինչ չենք լուծում, փոխարենը, եթե դեմը չառնվի, կործանելու ենք երկիրը, ինչը սրբապղծություն է հայրենիքի ու հայրենի հողն իրենց արյամբ շաղախած մարդկանց հիշատակի նկատմամբ: Արտագաղթը կենսական հանգամանքներին չդիմադրելու կամ դիմադրելու ցանկության պակասի հետևանք է, իսկ այս ուղին ընտրած ոչ մի ժողովուրդ ուժեղ պետություն և ապահով հայրենիք չի ստեղծել:

Վեցերորդ՝ Հայաստանում աղանդավորության ծավալած գործունեությունը խիստ վտանգավոր է ոչ միայն հոգևոր-բարոյական, այլև ազգային անվտանգության տեսանկյունից, որովհետև.

- Իրենց ապազգային քարոզչությամբ թուլացնում են հայի էթնիկ ինքնագիտակցությունը:
- Պառակտում են ազգն իրենց պահանջներով, կպչուն գաղափարախոսությամբ:
- Ղեկավարվում են արտասահմանյան կենտրոններից, որոնք այստեղ, կրոնական քարոզչությունից բացի, կարող են ունենալ նաև այլ շահեր, հետաքրքրություններ:

Յոթերորդ՝ Համաշխարհային տեղեկատվական ոլորտում սրընթաց փոփոխությունները ՀՀ պատկան մարմիններին պարտադրում են կատարելագործելու տեղեկատվական անվտանգության ապահովման առկա մոտեցումները և մեխանիզմները:

Ութերորդ՝ Կոլեկտիվ նույնականության զգացման ամրապնդման առումով հատուկ դեր է վերապահված ազգային գաղափարին՝ հասարակության արժեքային դիրքորոշումների համակարգին, որում արտահայտվում է ժողովրդի ինքնագիտակցությունը: Արդ՝ տեղեկատվական պատերազմում կարող է հաղթել այն երկիրը, որը տեղեկատվական տարածությունում կկառուցի և իր քաղաքացիներին կառաջարկի ազգային գաղափարի խորհրդանշական կուռ նախագիծ՝ ազգային նախապատվությունների, գաղափարների ու ավանդույթների կայուն համակարգ, որը մեծամասնության համար ավելի նշանակալի կլինի, քան տեղեկատվական ցանկացած արտաքին ներգործություն ու գայթակղություն:

Մշակույթի ոլորտում հոգևոր անվտանգության հիմնախնդիրը նաև տեղեկատվական կապերի նկատմամբ ազգային ու պետական վերահսկողության պահպանումն է: Չի կարելի հանդուրժել, որ օտար մշակույթները

սողոսկեն ազգային մշակութային տեղեկատվության, շրջանառության և վերարտադրության ոլորտ, աղավաղեն հայոց ավանդական հոգևոր ու բարոյական արժեքները:

Ազգի հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից մշակութային կյանքում առանձնահատուկ կարևորություն ունի տեղեկատվական կապերի շրջանառության կանոնակարգման պետական քաղաքականությունը:

Առաջարկություններ

Առաջին՝ Մշակել ազգը հոգևոր և գաղափարական կապերով միավորող գաղափարախոսություն, որը պետք է հային հուշի և հիշեցնի իր պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն ու պաշտպանելն է իրական, գործնական սիրով: Դրա համար անհրաժեշտ է, որ ազգովի.

ա) Մաքրվենք բարոյապես, դառնանք բարոյական որակների կրող ազգ, ունենանք խոր հավատ և լավատեսություն ներկայի ու ապագայի նկատմամբ, ապրենք ազգային արժանապատվությամբ:

բ) Առաջնորդվենք այն մտայնությամբ, որ ճակատագրի եղբայր է ամեն հայ (Գ. Նժդեհ) և աշխարհասփյուռ հայության հայրենիքը Հայաստանն է:

Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության, նրա հզորացման ու ինքնահաստատման համար մշակույթը նույնքան, իսկ որոշ դեպքերում առավել կարևոր է, քան տնտեսությունն ու քաղաքականությունը, քանզի, եթե այս վերջիններով ՀՀ-ը չի կարող մրցունակ լինել միջազգային ասպարեզում, ապա մշակույթի ոլորտում պատմական ու արդիական չափանիշներով դա իրատեսական է, իրականանալի ու ազգային ինքնության բացահայտման ամենահիմնարար միջոցն է: Աշխարհին ներկայանալու, հայկականի ուժը հավաստելու ամենակարևոր միջոցը մշակույթն է, ազգի հոգեբարոյական կերտվածքը: Մշակութայինն ու հոգեբարոյականն անհրաժեշտ է ագուցել տնտեսականին, քաղաքականին ու ռազմականին, նպաստել միմյանց զարգացմանն ու կայունությանը, գիտակցել, որ ազգային անվտանգության համընդհանուր խարիսխը, նպատակադիր կողմնորոշիչը գտնվում է հենց մշակութայինի, արժեքայինի ու հոգեբարոյականի մեջ: Մշակույթը պետք է համարել հասարակական կյանքի կազմակերպման պետական նշանակության անհրաժեշտ ու պարտադիր գործոն, ազգային անվտանգության ապահովման, հայության համախմբման, հայկականի պահպանման և հզորացման միջոց:

Երրորդ՝ Հատուկ ուշադրություն դարձնել կրթական համակարգի բնականոն զարգացմանը, այդ համակարգը հեռու պահել օտարամոտ ծայրահեղություններից, միջազգային ֆինանսական, քաղաքական ուժերի պար-

տադրանքից, արմատավորել ժամանակի փորձությանը դիմացած ազգային կրթության ու դաստիարակության լավագույն ավանդույթները, բարձրացնել կրթության, գիտության, գիտնականի, մտավորականի հեղինակությունը, կրթության միջոցով ապահովել մարդ-մասնագետ-քաղաքացի եռամիասնությունը:

Չորրորդ՝ Հայաստանյան ՋԼՄ-ներին պարտավորեցնել գործունեության մեջ ներառել ազգային անվտանգության իրականացման հիմնահարցերին նվիրված հաղորդաշարեր՝ ուշադրություն դարձնելով հատկապես դրանց հոգեբարոյական ու մշակութային առաձնահատկություններին: Պայքարել ազգայինն աղավաղող հակամշակութային երևույթների ու դրանք սնող պատճառների դեմ: Հեռուստատեսային հաղորդումներում ավելի մեծ տեղ հատկացնել ազգային ու համաշխարհային բարձրարժեք մշակութային նվաճումներին:

Հինգերորդ՝ Հայերենը համարել ազգային բարձրագույն արժեք, հայապահպանության կարևորագույն միջոց, ազգային անվտանգության իրականացման բնապատմականորեն ձևավորված ամենաիրական գործոն և արժանապատվություն ու հետևողականություն դրսևորել դրա իրականացմանը համահայկականի չափանիշներով: ՀՀ ԿԳ ու Մշակույթի նախարարությունների ջանքերով ու ծրագրային միջոցառումներով ամրապնդել հայերենի բարոյական ու իրավական կարգավիճակը, նվազեցնել կամ վերացնել բոլոր այն երևույթները, բարքերը, որոնք ուղղված են ազգայինի ու հայերենի դեմ մշակութային ոլորտներում ու կրթության համակարգում:

Վեցերորդ՝ Արտերկրում գնալով ավելի է ուժեղանում թուրք-ադրբեջանական հակահայ քարոզչությունը, ուստի գերնպատակ համարել ողջ հայության համախմբումը: Համայն հայությանը հասու դարձնել ազգային անվտանգության հրատապությանն առնչվող հիմնախնդիրներին: Իրական պահվածքով ու գործունեությամբ հոգեբարոյական վստահություն ձևավորել ազգային պետության ու պետականության նկատմամբ:

Յոթերորդ՝ Ազգային անվտանգության հիմնահարցերը համակողմանի մշակելու ու կենսագործելու համար՝ համակարգել հայաստանյան ու համահայկական գիտական մտքի, փորձագիտական, ճարտարագիտական կարողությունների հնարավորությունները, այդ նպատակով հիմնադրել Ազգային անվտանգության համահայկական կենտրոն՝ պետության հովանավորությամբ: Ստեղծել ազգային անվտանգության իրականացման հայկական հիմնադրամ՝ պետության ու անհատ ձեռներեցների ներդրումներով, համահայկական հանգանակությամբ: Ազգային անվտանգության կարևորությունը նկատի ունենալով՝ ավագ դպրոցներում, քոլեջներում, վարժարաններում որոշ գիտելիքներ հաղորդել սովորողներին «ԱԱ հիմունքներ» դասընթացի շրջանակներում: Բուհական համակարգում դասավանդել «ՀՀ ազգա-

յին անվտանգության ռազմավարության հիմունքներ»՝ ըստ մասնագիտական յուրահատկությունների:

Ութերորդ՝ Իշխանություններն իրենց գործունեության մեջ պետք է անեն առավելագույնը, որպեսզի հայն ապրի իր երկրում՝ սիրելով և ոչ թե զզվելով, օրվա իշխանավորին չնույնացնի պետականության և հայրենիքի հետ, իշխանության վերին օղակներում պետք է աշխատեն ու պայքարեն այնպես, որ ռաբիսն ու զոռբայությունը նահանջեն, արդարությունը վերականգնվի, մարդն աշխատանք ունենա ու կարողանա այդ աշխատանքով ընտանիք պահել, ապահով, իրավական առումով պաշտպանված զգա իր երկրում, վաղվա օրվա նկատմամբ հավատ ունենա, երկիրը հայրենիք դարձնի, իսկ հեռացածները կամենան հետ վերադառնալ:

Իններորդ՝ Հայ եկեղեցին իր հեղինակությունը բարձրացնելու խնդիր ունի: Այդ պատճառով պետք է.

ա) պատշաճ ուշադրություն դարձնի ներեկեղեցական կյանքի բարոյականացմանը, ազգայնացնի իր արժեհամակարգը,

բ) հուդայաքրիստոնեություն քարոզելու փոխարեն ազգային քրիստոնեություն քարոզի,

գ) ազգին ծառայելը ոչ թե բեռ, այլ նվիրական պարտականություն դիտի:

Տասներորդ՝ Աղանդավորության ազդեցությունը նվազեցնելու համար ձեռնարկել միջոցառումների համալիր, որտեղ.

ա) Պետությունը պետք է ստեղծի ավելի կատարյալ օրենսդրական դաշտ, առաջադրի համազգային գաղափարներ, իրականացնի սոցիալական ուղղորդված քաղաքականություն:

բ) Եկեղեցին ազատվում է այն մտայնությունից, թե անցյալում կատարած ծառայությունների համար ողջ ազգով պարտք ենք եկեղեցուն, և դրա գինը ազգովի եկեղեցու հպատակ դառնալն է:

գ) Եկեղեցականը պետք է գնա դեպի ժողովուրդը, դառնա նրա հոգսի ու ցավի կարեկիցը, ուրախության մասնակիցը և ոչ թե բոլորին անխտիր եկեղեցի հաճախելու պահանջ ներկայացնի: Եկեղեցին ու հոգևորականությունը պետք է գիտակցեն, որ հասարակական կյանքի կազմավորման գերագույն մարմինը պետությունն է և ոչ թե եկեղեցին:

Տասնմեկերորդ՝ Պետք է մեր ազգային բարոյականության լավագույն ըմբռնումները վեր հանենք, կյանքի կոչենք, մշակենք հայ մարդ-քաղաքացու բարոյական վարքականոնը:

Տասներկուերորդ՝ Տեղեկատվության ներխուժման պայմաններում հույժ կարևոր է հայության, պատանիների և երիտասարդների տեղեկատվական անվտանգությանն ուղղված գործողությունների համալիր ծրագրե-

րի մշակումն ու իրականացումը՝ նրանց պաշտպանելու հոգևոր-բարոյական բնույթի բացասական ազդեցություններից: Անհրաժեշտ է ընդլայնել Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող օտար սկզբնաղբյուրների հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը, ինչպես և հայոց գիտամշակութային կարևորագույն արժեքներն օտարներին մատուցելու գործընթացը:

Տասներեքերորդ՝ Մշակութային համաշխարհայնացումը թուլացնում է ազգային լեզուների կարգավիճակը, փոխարենը ապահովում միջմշակութային փոխհարաբերություններում ամրագրված անգլերենի տարածումը: Այս հարաբերակցության մեջ հայերենի գործառնական հզորացման նպատակով անհրաժեշտ է.

- Պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը համարել քաղաքացիական ինքնագիտակցության և հայրենասիրության ձևավորումը երիտասարդ սերնդի մեջ:
- Օգտագործել համակողմանի կրթված, ստեղծարար մտածողության ու հայրենի իրականությանը քաջատեղյակ, արտասահմանյան փորձն ու կառավարման մեթոդաբանությունը քննադատաբար յուրացրած երիտասարդ առաջնորդների ներուժը:
- Մարզերում թանգարան-արգելոցների ստեղծում՝ ըստ տարածաշրջանի յուրահատկության և առկա պատմամշակութային ժառանգության, ինչպես նաև զբոսաշրջային երթուղիների կազմակերպում դեպի այդ ժառանգությունը:
- Մշակույթի նախարարությանը հանձնարարել ներկայացնել ամենամյա ազգային զեկույց՝ սոցիոմշակութային ոլորտի զարգացման, երկրում հոգևոր մշակույթի վիճակի և բարելավմանն ուղղված միջոցառումների մասին:
- Հիմնադրել Հայաստանի ու համայն հայության ազգային անվտանգության մշակման ու ապահովման համահայկական կենտրոն, որում համախմբել Հայաստանի ու սփյուռքի համապատասխան ոլորտների կարող ուժերը, ստեղծել համահայկական «ուղեղային կենտրոն» հայության կարևոր նշանակության խնդիրների լուծման համար:
- Առաջնորդվել այն վճռականությամբ, որ թեև մարտադաշտում ռազմական գործողությունները ավարտվել են, սակայն դրանց վտանգը միշտ կա, իսկ գաղափարական դաշտում, հայրենասիրության ոլորտում, հոգեբարոյականի դրսևորումներում շարունակվում է հոգևոր ու գաղափարական պայքարը տարբեր դրսևորումներով ու միջոցներով, որոնք նույնքան վտանգավոր են, որքան զինված առճակատումները:

Տասնչորսերորդ՝ Ներկայումս աշխարհի շատ երկրներ ստեղծում են տեղեկատվական հարձակումից և մշակութային ներխուժումից պաշտպան-

վելու համակարգեր: ՀՀ-ը ևս պետք է կատարելագործի օրենսդրական դաշտը, հաղթահարի իրավական փաստաթղթերի հասկացությունների և ձևակերպումների անորոշությունը: Մասնավորապես.

ա) «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի» VII գլխում ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման մեխանիզմներ են համարվում իրավականը, կազմակերպական-տեխնիկականը և տնտեսականը: Մինչդեռ, նույնքան կարևոր են *տեղեկատվական անվտանգության ապահովման հոգևոր-բարոյական և սոցիալ-աշխարհայացքային մեխանիզմները:*

բ) Անհրաժեշտ է ընդլայնել «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի VII հոդվածի («Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները») I կետը, որտեղ նշվում է «Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»: Առաջարկում ենք այս ձևակերպումը փոխարինել ավելի հստակ սահմանմամբ. «Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, *սպառնում է ՀՀ ազգային անվտանգությանը՝ խարխլելով ազգի արժեհամակարգը, հոգեբարոյական կերտվածքը*»:

գ) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի VII հոդվածի («Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը») երրորդ կետում («Տեղեկատվություն տնօրինողը հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները») հարկավոր է ավելացնել նոր դրույթ. «*հասարակության, անձի հոգևոր-բարոյական անվտանգության վրա ունեցած ներգործությունը*»:

դ) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի VIII հոդվածի («Տեղեկատվության ազատության սահմանափակումները») առաջին կետում անհրաժեշտ է ավելացնել նոր դրույթ. «Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա *բացասական ազդեցու-*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան, Խ. (1984). Վերք Հայաստանի. Երկեր, Եր.:
2. Աթոյան, Վ. (2013). Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ. *«21-րդ ԴԱՐ»*, *2*(48), 82-94:
3. Աթոյան, Վ. (2013). «Ուղեղային կենտրոններ». անցյալ, ներկա և ապագա. *«Բանբեր ՀՊՏՀ», 1*(29), 104-117
4. Ալիշան, Ղ. (1981). Երկեր, Եր.:
5. Աղայան, Ա. (2002). Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը և առաջնահերթությունները, Եր.:
6. Աղայան, Ղ. (1963). Մի կալ հակառակ չարի. Երկերի ժողովածու չորս հատորով, հ.3, Եր.:
7. Աղաջանյան, Ս. (2012). Լեզուն և գիրը մշակույթի համակարգում. Եր.:
8. Այվազովսքի, Գ. (1861). Մեր ազգին կարօտութիւններ. Մասեաց աղաւնի, թիվ 1:
9. Արծրունի, Գ. (1882). Տաճկահայերի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս:
10. Գաբրիելյան, Մ., Դաբաղյան, Ա., Թադևոսյան, Ա., & Մարգարյան, Ն. (2002). Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթներն ազգային անվտանգության համատեքստում, Եր.:
11. Դավթյան, Հ. (2007). Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը (Հայաստանյաց առաքելական եկեղեցին եւ մեր պատմության ընթացքը), Եր.:
12. Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենք՝ ընդունված 13.12.2003 թ:
13. Զէքիեան, Լ. (2002). Ինքնութեան խճանկար, Բեյրութ:
14. Էլեկտրոնային հաղորդակցության մասին ՀՀ օրենք՝ ընդունված 08.07.2005 թ., լրացված և փոփոխված 21.02.2007 թ., 09.04.2007 թ., 17.11.2009 թ., 25.05.2011 թ., 29.04.2013 թ.
15. Թադևոսյան, Ա. (2002). Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Եր.:
16. Թումանյան, Հ. (1994). Մեծ ցավը. ԵԼԺ տասը հատորով, հ. 6, Եր.:
17. Թումանյան, Հ. (1994). Հայոց պատմություն. ԵԼԺ տասը հատորով, հ. 6, Եր.:
18. Թումանյան, Հ. (1994). Հայի ոգին. ԵԼԺ տասը հատորով, Եր., հ. 6:
19. Թումանյան, Հ. (1994). Դառնացած ժողովուրդ ենք. ԵԼԺ տասը հատորով, հ. 6,Եր.:
20. Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, Եր., 2013:
21. Կիբեռհանցագործությունների մասին Եվրախորհրդի կոնվենցիա՝ վավերացված ՀՀ-ում 21.03.2006թ.:
22. Հարությունյան, Գ. (2011). «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը. *«21-րդ դար», 1*, 5–17:
23. Հովականյան, Յու. (2002). Ղևոնդ Ալիշանի փիլիսոփայությունը, Եր.:
24. Հովականյան, Յու. (2005). Հայ մտավորականությունը և ազգային գաղափարախոսությունը, Եր.5:
25. Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին Եվրախորհրդի կոնվենցիայի թիվ 1 լրացուցիչ արձանագրություն՝ վավերացված ՀՀ-ում 21.03.2006:

26. *ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն*՝ ընդունված 07.02.2007:
27. *ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ*՝ ընդունված 26.06.2009:
28. *Հովհաննիսյան Գ., Հայոց տերերը, Եր., 2012:*
29. *Մամուրյան Մ., Երկեր, Եր., 1966:*
30. *Մարկոսյան Ա,* Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Եր., 2005*:*
31. *ՅՈՒՆԵՍԿՕ-ի Երկրի խարտիա*՝ վավերացված 29.06.2000 թ.:
32. *Նալչաջյան Ա.,* Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:
33. *Նժդեհ Գ.,* Հայը // Հատընտիր, Եր., 2006:
34. *Նժդեհ Գ.,* Ցիշի՛ր պատերազմը // Հատընտիր, Եր., 2006:
35. *Նժդեհ Գ.,* Բաց նամակներ հայ մտաւորականութեան // Հատընտիր, Եր., 2006:
36. *Նժդեհ Գ.,* Ցեղի յաւիտենական զէնքը // Հատընտիր, Եր., 2006:
37. *Նժդեհ Գ.,* Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ // Հատընտիր, °ñ., 2006:
38. *Գ. Նժդեհ,* Մեծ գաղափար // Հատընտիր, °ñ., 2006:
39. *Գ. Նժդեհ,* Ժողովուրդ եւ առաջնորդ // Հատընտիր °ñ., 2006:
40. *Շահգելդյան Մ.,* Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., 2002*:*
41. *Չորմիսեան Լ.,* Կուսակցութիւններ, Եր., 1995:
42. *Պողոսյան Գ.,* Հայ հասարակությունը դարասկզբին, Եր., 2006:
43. *Պողոսյան Գ., Նաղդյան Ռ.,* Անձը փոխակերպվող հասարակությունում, Եր., 2008
44. *Պողոսեան Յ.,* Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրէ, 1958:
45. *Սաֆարյան Ս.,* Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները (թեմայի հաշվետվություն), «Üáñu-íuÝù», Եր., 2002*:*
46. *Սարգսյան Ա.,* Հոգևոր ճնշման ճիրաններում (Աղանդավորության ազգային-հասարակական գնահատման փորձ), Եր., 1997:
47. *Սարգսյան Ա.,* Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999:
48. *Սարգսյան Ա.,* Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Եր., 2001:
49. *Սարգսյան Ա.,* Մշակույթի տեսություն, Եր., 2003:
50. *Սարգսյան Ա.,* Աղանդավորությունը Հայաստանում (տարածման դրդապատճառները և հաղթահարման ուղիները) // Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կրթության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևանի Գլաձոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և մագիստրանտների երրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2007:
51. *Սարգսյան Ա.,* Հումանիզմի փիլիսոփայություն, Եր., 2012:
52. *Սարգսյան Ս.,* Հայագիտության ձևավորման ժամանակի և հիմնադիրների հարցի շուրջ, Եր., 2013:
53. *Վարդանյան Գ.,* Գիտելիքահենք տնտեսություն, Եր., 2008:
54. *Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք*՝ ընդունված 23.09.2003թ.:
55. *Քոչարյան Հ.,* Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2002:
56. Արեւելեան մամուլ, 1876, թիվ 1:

57. Գրական թերթ, 22 նոյեմբերի 2013:
58. Հայկական ժամանակ, 2 օգոստոսի 2013:
59. Մասեաց աղաւնի, 1856, թիվ Դ:
60. Մեղու Հայաստանի, 1880, թիվ 88:
61. Մշակ, 1876, թիվ 33:
62. *Арутюнян Г.,* Цивилизационный и идеологический контекст информацион- ной безопасности // О некоторых проблемах информационной безопасности, Ер., 2009.
63. *Бедрицкий А.*, Информационная война: концепции и их реализация в США, М., 2008.
64. *Братимов О., Горский Ю., Делягин М., Коваленко А.*, Практика глобализации: игры и правила новой эпохи. М., 2000.
65. *Варфоломеев А.,* Основы информационной безопасности. М., 2008.
66. *Гриняев С.* Информационная война: история, день сегодняшний и перспектива, http://www.agentura.ru/equipment/psih/info/war/
67. *Гриняев С.*, Поле битвы-киберпространство. Мн., 2004.
68. *Зелинский С.*, Информационно-психологические войны (современные психо-технологии манипулирования), http://psyfactor.org/lib/zln3.htm.
69. *Краткая философская энциклопедия.* М ., 1994.
70. *Лайнбарджер П.*, Психологическая война. М., 1962.
71. *Логунов А.*, Региональная и национальная безопасность. Учебное пособие. М., 2011.
72. Лурье С., Историческая этнография, М., 1998.
73. Можно ли победить в информационной войне? http://filinnik.ru/2012-08-06-14- 13-43/222-2012-09-16-15-57-07.html
74. *Негодаев И.,* Информатизация культуры. Р н/Д., 2002.
75. *Основы национальной безопасности.* М . , 2008:
76. *Поликарпова Е.,* Аксиологические функции масс-медиа в современном об-ществе. Р н/Д., 2002.
77. *Сунь-Цзы*, Искусство войны. М., 1950.
78. *Федотова Н.,* Возможна ли мировая культура? // Философские науки, 2000 N4.
79. Фомин С. А., Обеспечение национальной безопасности. М., 2007.
80. *Филосовский энциклопедический словарь.* М., 1983.
81. Хантингтон С., Столкновение цивилизаций, Электронный ресурс URL: www.archipelag.ru *l geopoolitics l stolknowenie lclash lclash.*

Հետազոտական խմբի ղեկավար՝
ԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆ
փիլ.գ.դ. պրոֆեսոր

Հետազոտական խմբի կազմը՝
ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
փիլ.գ.դ. պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ
փիլ.գ.թ., դոցենտ
ՄԱՐԵՏԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
փիլ.գ.թ., դոցենտ
ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ
փիլ.գ.թ., դոցենտ
ԱՐՓԻՆԵ ՄԱԼՔՋՅԱՆ
հայցորդ

ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները

Մեր օրերում Հայաստանի Հանրապետության ներքին խնդիրներից առաջնահերթ են նաև արժեքային-աշխարհայացքային այնպիսի հիմնադրույթների մշակումը, պետական-հասարակական-քաղաքական հաստատությունների այնպիսի գործունեության ծավալումը, որոնք կարող են ապահովել ազգի հոգևոր-բարոյական միասնությունը և հետևաբար՝ անվտանգությունը:

Այս խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված կոլեկտիվ մենագրությունը՝ ***«ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները»:***

Առաջին գլխում տրվում են «ազգային անվտանգություն», «հոգևոր-բարոյական անվտանգություն», «արժեք», «արժեհամակարգ», «մշակույթ» հասկացությունների սահմանումները, հոգևոր-բարոյական հիմնական արժեքները, և այն մտահոգությունն է բարձրաձայնվում, որ արդի հայ հասարակությունը հայտնվել է ոգեզրկության և արժեքների կորստյան փուլում, ինչը ազգի հոգևոր-բարոյական անվտանգությանը սպառնացող լրջագույն խնդիր է: Վերջին շրջանում իրականացվող մշակութային քաղաքականությունը չի ձևավորում մշակութային նոր մտածողություն, նոր ռազմավարություն, հատկապես ազգային անվտանգության տեսանկյունից:

Երկրորդ գլխում քննարկվում է կրթության և գիտության, կրթագիտական հաստատությունների, մտավորականության, հասարակական-քաղաքական կառույցների և եկեղեցու ծավալած գործունեությունը ազգի հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից, այն տեսակետն է հիմնավորվում, որ կրթական համակարգը ներառվել է մի գործընթացի մեջ, որի հեռանկարները դեռևս հստակ չեն:

Դպրոցը և բուհը լուրջ խնդիրների առջև են կանգնած: Բուհը դժվարանում է ապահովել մարդ-մասնագետ-քաղաքացի եռամիասնությունը:

Ցավոք, այսօր հրապարակում չկան հանրային մեծ հեղինակություն ու ճանաչում ունեցող, հասարակական գործունեություն ծավալող մտավորական անհատներ, որոնց ձայնին հասարակությունը կանսար և կհետևեր: Թեև առանձին անհատ մտավորականներ ունենք, բայց ազգի մտավոր ու բարոյական դեմքը բնութագրող մտավորականություն՝ ոչ:

Ազգի հոգևոր-բարոյական անվտանգության դիտանկյունից անդրադառնալով հասարակական-քաղաքական կառույցների և եկեղեցու գործունեությանը՝ հեղինակային խումբը փաստում է, որ եթե նախկինում ընտանիքը ազգի անվտանգության ապահովման ամենահուսալի հենարանն էր, ապա այսօր դարձել է ամենամտահոգող ոլորտներից մեկը:

Անցած քսան տարվա ընթացքում հայ ժողովուրդը հայտնվեց սոցիալական թշվառության, իրավական անպաշտպանվածության ճիրաններում: Իշխող դարձան հուսալքությունը, ազգային հոռետեսությունը, որոնք զարկ տվեցին արտագաղթին, աղանդների ու զանազան կրոնական խմբավորումների ներթափանցմանը:

Եկեղեցին իր ներքին կյանքը բարոյականացնելու խնդիր ունի, հակառակ դեպքում, չի կարող կատարել հավատացյալ ժողովրդին իր հոգևոր առանցքի շուրջ համախմբելու գործառույթը, ոչ էլ հաջողությամբ հակազդելու Հայաստան ներթափանցող զանազան կրոնական ուղղությունների, աղանդների ու կազմակերպությունների ուժգնացող գործունեությանը և քարոզչությանը:

Երրորդ գլխում զանգվածային մշակույթի վերլուծությունը կատարվել է հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից: Նշվում է, որ այդ ոլորտում դիտվում են զանգվածային մշակույթի պարզունակացում, բարոյաիրավական կարգավորիչների աղճատում և հակարժեքների քարոզչություն, որոնք վտանգում են հոգևոր-բարոյական ողջ դաշտը, կասկածի տակ դնում ազգի ապագան:

Վերջին բաժնում ներկայացվում են կատարված վերլուծության եզրակացությունները և առաջարկությունները, որոնք, հեղինակային խմբի կարծիքով, կարող են իրենց նպաստը բերել ազգի հոգևոր-բարոյական վիճակի բարելավմանը և ապահովել հայ ժողովրդի ազգային, հետևաբար, նաև հոգևոր-բարոյական անվտանգությունը:

Մենագրության մեջ հետազոտական խումբն առաջնորդվել է փոխլրացման մեթոդաբանական մոտեցմամբ (քննադատական և կառուցողական կողմերի ներդաշնակություն), իսկ հիմնական հարացույցը, որի վրա կառուցվել է մենագրությունը, հայրենասիրությունն է, ազգայինը՝ հայկականի ու հայության անվտանգության ապահովումը:

Руководитель исследовательской группы
АРАМ АКОПОВИЧ САРКИСЯН
доктор философских наук, профессор

Состав исследовательской группы
СУРЕН САРКИСЯН
доктор философских наук, профессор
ЮРИЙ ОВАКАНЯН
кандидат философских наук, доцент
МАРЕТА НИКОГОСЯН
кандидат философских наук, доцент
СОФЯ ОГАНЯН
кандидат философских наук, доцент
АРПИНЕ МАЛКДЖЯН
соискатель

Духовно-нравственные проблемы концепции национальной безопасности РА

В наши дни среди внутренних задач Республики Армения первоочередными становятся также изучение и осмысление таких ценностно-мировозренческих основоположений, распространение такой деятельности государственно-общественно-политических институтов, которые могут обеспечить духовно-нравственное единство и, следовательно, безопасность нации.

Данная коллективная монография - ***"Духовно-нравственные проблемы концепции национальной безопасности РА"*** посвящена изучению этих задач.

В первой главе даются определения понятий "национальная безопасность", "духовно-нравственная безопасность", "ценность", "ценностная система", "культура", представляются духовно-нравственные основные ценности, и выражается озабоченность тем, что современное армянское общество переживает этап бездуховности и потери ценностей, что стало серьезнейшей проблемой, угражающей духовно-нравственной безопасности нации. Реализуемая в последнее время культурная политика не формирует новое культурное мышление, новую стратегию, особенно в свете обеспечения национальной безопасности.

Во втарой главе обсуждается деятельность научно-образовательных учреждений, интеллигенции, общественно-политических структур и церкви с позиции духовно-нравственной безопасности нации. Высказывается точка зрения, согласно которой система образования вовлечена в процесс преобразований, результаты которого пока не ясны.

Между тем, перед школой и вузом стоят серьезные задачи. Вуз затрудняется обеспечивать триединство человек-специалист-гражданин и быть носителем национальных ценностей.

К сожалению, сегодня среди интеллигенции нет личностей, имеющих большой авторитет и признание, ведущих общественную деятельность, к мнениям которых общество будет прислушиваться и следовать им. Хотя у нас есть отдельные представители интеллигенции, но нет интеллигенции, характирующей интеллектуальное и нравственное лицо нации.

Обращаясь к деятельности общественно-политических структур и церкви, авторская

группа констатирует, что если в прошлом семья была самой надежной опорой обеспечения безопасности нации, то сегодня она стала одной из самых проблематичных сфер.

В течении последних двадцати лет народ Армении оказался в ситуации социального бедствия, правовой незащищенности. В обществе наметились такие социально-психологические феномены, как отчаяние, национальный пессимизм, которые дали толчок эмиграции и проникновению сект и различных религиозных группировок.

А перед церковью стоит задача реформирования моральных устоев внутрицерковной жизни, чтобы выполнить функцию объединения вокруг своей духовной оси верующего народа и успешно противостоять усиливающейся деятельности и пропаганде проникающих в Армению разных религиозных течений, сект и организаций.

В третьей главе анализируется массовая культура с точки зрения духовно-нравственной безопасности. Отмечается, что в этой сфере наблюдаются примитивизация массовой культуры, искажение нравственно-правовых регулировок и пропаганда антиценностей, которые подвергают опасности все духовно-нравственное поле, ставят под сомнение будущее нации.

В последнем отделе изложены заключения и предложения, которые, по мнению авторской группы, смогут улучшать духовно-нравственную ситуацию и обеспечить национальную, а следовательно духовно-нравственную безопасность нации.

В монографии авторская группа руководствовалась методологическим принципом взаимного дополнения (единство критической и конструктивной сторон), а основная парадигма, на которой строилась монография – патриотизм.

Head of research team
SARGSYAN ARAM HAKOB
Doctor of Philosophical, Professor

Members of research team
SARGSYAN SUREN
Doctor of Philosophical, Professor
HOVAKANYAN YURI
PhD in Philosophical, Associate professor
NIKOGHOSYAN MARETA
PhD in Philosophical, Associate professor
OHANYAN SOFYA
PhD in Philosophical, Associate professor
MALQJYAN ARPHINE
Researcher

Spiritual-moral problems of the national security concept of the Republic of Armenia

Nowadays with other internal problems formation of those value-based world outlook issues, activity of state-public-political institutions becomes a priority in Armenia, which can assure nation's spiritual-moral unity, therefore security. Collective monograph ***"Spiritual-moral problems of the national security concept of the Republic of Armenia"*** is devoted to the study of above-mentioned issues.

The first chapter presents the definitions of "national security", "moral-spiritual security", "value", "value system", "culture", main moral-spiritual values. Main concern is being announced that modern Armenian society is in the phase of loss of spirit and values, which has become a serious threat to nation's moral and spiritual security. Latest and current cultural policy doesn't form a new cultural thinking, new strategy, especially in terms of national security.

The second chapter discusses education and science issues, the activity of educational and scientific institutions, intellectuals, public and political structures, church in terms of nation's spiritual and moral security and stipulates that educational system is involved in such processes the results of which are not yet clear. Meanwhile the school and the university are facing serious problems.The university fails in man-specialist-citizen trinity assurance and stopped being the holder of national values. Unfortunately there are no intellectual individuals with high reputation and public recognition, heard by society. Though the presence of sole intellectuals, we have not intellectual group as the face of the nation's intellectual and moral characteristics. Referring to the public and political structures and church's activities in terms of nation's spiritual and moral security, the

authors' group specifies, that in past period family was the most reliable prop of nation's security, meanwhile today it has become one of the most concerning spheres.

During last twenty years also Armenian people faces the social squalor and legal exposure. Despair, national pessimism became dominant trends, which promote the emigration and penetration of different religious groups. In its turn the church needs to moralize its internal life, otherwise it can't fulfill its main function of unifying religious people around its spiritual pivot and counteracts growing activity and propaganda of different religious directions, sects and organizations.

The third chapter covers the analysis of mass culture in terms of moral-spiritual security, particularly its mentioned that it faces simplification of mass culture, wrench of moral and legal regulators as well as anti-values propaganda, threatening the whole spiritual-moral field and nation's future.

The last part presents the conclusions and recommendations of analysis, which in author's group opinion can have its input in the improvement of nation's moral-spiritual situation and assurance of national and moral-spiritual security of Armenian nation.

The research group was leaded by complementary methodological approach (the harmonization of critical and constructive approaches) having main paradigm of patriotism in its base.

Հետազոտական խմբի ղեկավար՝
ԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆ
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հետազոտական խմբի անդամներ՝
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
ՅՈՒ. ՀՈՎԱԿԱՆՅԱՆ
Մ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Ս. ՕՀԱՆՅԱՆ
Ա. ՄԱԼՔՋՅԱՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Խմբագիր՝ ***Վ. Միրզոյան***
Տեխնիկական խմբագիր՝ ***Ն. Խչեյան***

Էջադրումը և սրբագրումը՝ ***Ռ. Պետրոսյանի***
Ձևավորումը՝ ***Ն. Խչեյանի***

Չափս՝ 70×108 1/16:
5,5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37